


Հանրահայտ

ԱՊՐԻԼ  
87

2013



digitised by A.R.A.R.©

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն



1.-	Փ. ՃԵՐԱՆԵԱՆ . . . . .	Կանաչ մեղեղի
2.-	» . . . . .	Մտա մը՝ եղանակ
3.-	» . . . . .	Զայնակցող լուսքիւմ
3.-	» . . . . .	Վայրեր
4.-	» . . . . .	Օրեր
5.-	» . . . . .	Միջօրէի ստուերներ
7.-	Շ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ . . . . .	Քսէթ
9.-	ՔՈՒԼԵԹ . . . . .	«Ո՞ր եմ երեխաները»
13.-	Ս. ՓԱՆՈՍԵԱՆ . . . . .	Զանճն իմ փառաւորեալ
20.-	ԱՐՄԱՆՏ . . . . .	Քարը
21.-	Պ. ՍՆԱՊԵԱՆ . . . . .	Միջնարար — 5
32.-	* * * . . . . .	Զմոռցուածները...
33.-	Յ. ՕՇԱԿԱՆ . . . . .	Արմէն Տօրեան
34.-	ԱՆԼԻՏԱ ԴՈՂՈՒԽԱՆԵԱՆ . . . . .	Արմէն Դորեանը եւ նրա ներքողը՝ Նուիրուած Վիկտոր Հիւկոյիմ
34.-	ԱՐՄԵՆ ԴՈՂԵԱՆ . . . . .	Ներքող առ Վիկտոր Հիւկո
39.-	ՌՈՒԲԷՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ . . . . .	* * *
40.-	ՀԱՄԱՍՏԵՂ . . . . .	Երեկ այն օրերուն
47.-	Յ. ՕՇԱԿԱՆ . . . . .	Գիւղը
61.-	Գ. ՄԱՀԱՐԻ . . . . .	Լիցվական օրագիր
63.-	ՍՏ. ԿՈՒՐՏԻԿԵԱՆ . . . . .	Համաստեղի աշխարհը
77.-	Յ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ . . . . .	Համաստեղի «Գիւղը»
78.-	ՀԱՄԱՍՏԵՂ . . . . .	Յոյսն ամստոյգ գայիքիմ
79.-	* * * . . . . .	Մահ՝ Սուրեն Ազարաբեանի
80.-	* * * . . . . .	Մշակութային լուրեր

---

Կողք՝ ԱՍԱՏՈՒՐ ՊԶՏԻԿԵԱՆԻ

# Բազմ

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՋ. ՏԱՐԻ.


ԹԻԻ 4

ԱՊՐԷԼ

1947

ՊԵՏՐՈՒՔ

Փ. ՃԵՐԱՆԵԱՆ



### ԿԱՆԱԶ ՄԵՂԵԴԻ

Մեծ ծառերու յուշատետրէն,  
Գիմաստութիւններ տերիւ-տերիւ կը բափին:  
Ամէն շարժում  
Կենսագրութիւն մը կ'աւարտէ  
Շշուկներու ստուերածածկ լրումին:

Ու երանգներն  
Օրուան շուրթին՝  
Փշափաղուած բառեր են,  
Որ կը սուգուին  
Նշոյլ-նշոյլ մեր աչքերուն ամենամուք յատակին:

Կը պատահի որ մթազնինք  
Ստուերին հետ  
Վարդակարմիր ծառերու-  
Հոն՝  
Մեր աչքերուն ամենավաղ յիշողութեան ընդմէջէն  
Յօրինելու  
Տերիւի մը արարչալու՜յս մեղեդին:

1947 թ. 10

digitised by 2000 A.R.A.R.@

## ԾԱՌ ՄԸ՝ ԵՂԱՆԱԿ

Թռչունները  
Երկինքին մէջ դեղնեցան:

Լուսաբացէ լուսաբաց,  
Կտուրներու յիշողութեամբ վերապրող  
Խուճապը թայտ ճնճողուկին՝  
Ա՛լ չի յուշեր  
Իր բարի լոյսն ոսկեթել:

Ու փեղկերու ետին անող  
Փամանակը՝  
Լուսագալի արարողութիւն հիմաւարց՝  
Կը ճայնակցի ծեր պատերու լուսեան...

Ու թռչուններու երամբ կանաչ,  
Որ սովոր էր  
Զրուցել  
Վարդերու նախնական լեզուով՝  
Աչքերուդ մէջ  
Ընդհատուած եռուզեռ մը կը մատնէ,  
Ուր, աւա՛ղ, բեզ փնտռողներն են խնդրուած,  
Ու դո՛ւն չկաս...

Ափերուդ մէջ,  
Խորհրդաւոր գիծեր կային.  
Ուրուագծուած ծառ մը շատ հին  
Օրերու օրհներգութեամբ կը ծաղկէր,  
Որուն ստուերներէն՝  
Լուսահանդերձ ստուերներ փոխ առինք:

Այնտեղ՝ ես ունկնդրեցի  
Ծամերուդ գիմեթոյր հիւսկը քակելու ելած՝  
Քամիներու շնչահատ փորձն ի գո՛ւր...

Ծառ մը,  
Իր նիւզերուն գիշերաթաթախ գրիչով նոթագրուած՝  
Մեղեդիներ կը պահէ  
Կռպերուդ  
Երկու էջերուն տակ  
Մշտափակ...

### ՁԱՅՆԱԿՑՈՂ ԼՌՈՒԹԻՒՆ

Գմբէթէն հեռու ոչինչ երեսաց:

Արտոյտի գեղգեղն  
Ուրուագծեց կակաչներ՝  
Իբրեւ լուսթեան լեզուներ բոսոր:

Արմատներով բազմակննիւ,  
Ծառն անընդհատ կը բարձրանար,  
Մեր աչքերուն ջրհորին մէջ մթնակայր՝  
Ձմեռնային իր մերկութեան,  
Կանաչ երկինքն յուզելու...

Հողի նման հնադրո՛շմ  
Պատին վրայ,  
Գունաթափած գրատախտակ-  
Դէմք մը խոհուն,  
Մեր խլացած ականջներուն  
Հագարամեայ իր մեռութեան  
Միծաղներն է կտակեր...

Օ՛, ժամանակ արբեցեալ,  
Անթուակիր օրերուդ  
Ժամերը փուն  
Որո՞ւ համար կ'արձանագրես տակաւին...

### ՎԱՅՐԵՐ

Ստուերներ՝  
Քարերու սակաւախօս լուսթեամբ ծածկուած,  
Անուններ՝  
Պահուած քամիներու անխարդախ շրթներուն,  
Ըսէ՛ք, ինչո՞ւ  
Բնակիչներն այս հինաւորց քաղաքին  
Չվերադարձան՝  
Վերագտնելու  
Իրենց համբոյրն երբեմնի,  
Ջոր լեցին օրերու տագնապահար այտերուն...

Կամարներուն տակ մամռապատ՝  
 Ո՞վ իմացաւ  
 Տարերբը մութ  
 Շատրուանի երփնաշշուկ մեղեդիին,  
 Որ մահացող ձայներուն ընդմէջէն՝  
 Կարիլ-կարիլ  
 Ձինք որոնող աշներուն մէջ կը ցամփէր...

Քունաթափած որմերուն՝  
 Արեան բիծեր  
 Մզճաւանջի օրագիր մը կը փակեն.  
 Մինչ որմերու եսկումին տակ՝  
 Պատուհանի կոյր հայեացքէն անփոփ,  
 Օրն իր մեղքերը կու լայ:

Ո՞վ էր արդեօք,  
 Անթուական յուշերուն մէջ ֆազաբն  
 Ժամանակի ռոնամանով իր փոշոտ՝  
 Վագեց անդո՛ւլ  
 Ու երբեք չհասաւ յուղարկաւոր այն բազմութեան,  
 Որ շիկահեր իր սիրուհին՝  
 Թռչուններու առեւանգուած լուսեամբ՝  
 Կը բազէր...

Միջօրէին՝  
 Քարերու յուշարար բեկորներէն՝  
 Քամին  
 Անոնց մասին  
 Տեղեկութիւն կը հայցէ:

## ՕՐԵՐ

Օրերը  
 Դէմքդ փնտռող  
 Քնատ աշներ են:

Քաղա՛ք,  
 Լուսքիւնդ  
 Երանգն է պատերու յօշոտուած ֆղանցքին:

Մայքիդ,  
Քայլերու տնակորոյս ամայութեամբ՝  
Քաղաքի մը գինովութիւնը կը տանին...

Բայց ես կու գա՛մ  
Սրտիս ուրիշով.  
Ուրախութեամբս տխուր,  
Տխրութեամբս ուրախ,  
Եղեռնաբոյր դարպասներուն մէջ բարբառիդ՝  
Կէս գիշերս  
Քեզի հետ կիսելու...

Կը բարձրանամ  
Յօղունի մը թովչանքով,  
Սրտիդ կանաչ հեղեղին մէջ  
Վերժանելու դէմք՝  
Աւերուած ամէն քարի բեկորէն,  
Որ արարչի աչքերուն մէջ շաղախուած՝  
Արցունք ու հող կը բուրէ...

Մերք կ'անկայծիմ  
Ազօքի մը երկիւզով՝  
Անյուսամուտ փեղկերէն ներս քու լուսեան,  
Որ լապտերիս շողերուն հետ  
Է՛ջ առ էջ  
Նախաքայլերն ամէն մանկան բոցկլտան:

Թող ստուերներն մամոռտած  
Տուներէդ վեր մագլցին,  
Որոնելու հմայքը հին ցայգերուդ.  
Հոն, փշրուած լիալուսնի շողերէն՝  
Վիհերուն մէջ աչքերուդ,  
Վաղը պիտի լոյս կաթի...

### ՄԻՋՕՐԷԻ ՍՏՈՒԵՐՆԵՐ

Միջօրէին՝  
Հետզհետէ կը լուսնայ դիմաստուերը սա մարդուն:  
Կռպերուն տակ  
Փունջ մը երանգ հիւսիսայգի՝

Տարուէ տարի,  
Ան աւելի  
Իր ծննդեան բուականին  
Խունկ ծխելու կը շտապէ...

Ու կը բուի,  
Թէ բան մը կայ դատարկուած  
Սա հայացքին տակ սեւեռուն,  
Որ դեռ ապրող բնակիչն է անարցունք՝  
Երագի մը մութին բացուած  
Աչքերուն...

Ու կը բուի,  
Թէ վիթխարի թռչուններ,  
Դարակիզբին՝  
Իրենց բերրուն գերձայնային անումին համար,  
Երկիմբն անբաւ մկատելով՝  
Անոր աչքերուն խո՛րն ապաստանեցան.  
Ու կիրակի առաւօտ մը  
Թեւածեցին  
Իբրեւ քերթուած...

Ան կը մեկնի,  
Մտքին առագաստները պարզած հովերու խօլ հոսանքին:  
Ոտերուն տակ  
Հազար մզոն առօրեայ՝  
Արեւակէզ մողէզներու ծարաւով  
Կը հեւան:

Ստուերը իր միակ ընկերն է գուցէ,  
Որ մերթ ընդ մերթ,  
Շարժումով մը հեռախոյզ՝  
Կարծես անոր ցոյց կու տայ  
Շքեզուրթիւմն իրիկնամերձ ամայներուն...

Կոպերուն տակ,  
Մանկութեան առաստաղէ մը խոնաւ՝  
Օրագիրներ կը կաթին:

Նշոյլ մը շող արեւո՛տ,  
Իր ստուերին անծայրածիր արտերուն՝  
Սերմանելու կը շտապէ:

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆՆԱՆ



Շ. ՏԱՄԱՊԵՏԵԱՆ

ՔՈՒԼԵԹ



Բացառիկ տաղանդ մը, զգայուն ու խոհուն, սքանչելիորէն իդական-բնածին եւ բնական միքք մը, ծաղկած ու պայծառ: Ճրանտական գրականութեան մեծ դասականներէն՝ Քոլէթ (1873-1954), միշտ մզտեցաւ գիրի նիւթեղ թափանցիկութեան, որ իր էջերը նմանցուց զեղեցիկ ճենապակիի մը բազմաբուրեղ ցուացման:

Ստեղծուած գոյութեան (ընտրութիւն, մարդ-արարած, անասնական աշխարհ) Հանդէպ Քոլէթի ցուցարերած յաւիտենական սերն ու ուշօրինակ գործող յատկանիշն են իր բեզուն ու իրերայաջորդ հասորներուն: Հեղինակուհին գրեւմտեան արտաքին դիւրահոսութիւնը պէտք չէ երբեք մոռցնել տայ աշխատանքի ու յղկումի այն յարատեւ բաժինը, որ իրենը եղաւ:

Քոլէթ իր անձին անկախութեան պաշտամունքը ունէր: Ան հետեւողականօրէն խուսափեցաւ մեթոտներէն, ֆարմիլիներէն ու դպրոցներէն: Ապրեցա՛ւ կեանքը՝ իր նիւթականութեան մէջ, նրբագգած ջիղերու ամբողջ սարուածով բմբռչանեց Համապարփակ գոյութեան համն ու բոյրը: Գրառեց զայն (կեանքը): Սիրե՛ց զեղեցիկութիւնը, այն ամէնը՝ որ կ'ապրի, է՛: Աղուօր խեցեղէն մը, արեւադարձային բոյս մը, որ անժամանակ կը ծլարձակի աչքին առջեւ, կանաչներու խորը ծուարած վիլլա մը ծոփահայեաց, ուր միշտ հիւրասիրեց իր սէրերն ու բարեկամները: Սիրե՛ց հաւատարմութիւնը, առանց երբեք սահմանափակուելու սովորական բարոյականի մը կաշկանդիչ օրէնքովը: Փայփայեց զաշնութիւնը, գոյներու ու ձեւերու դասականացած, բայց ինքնեկ ներդաշնակը: Փայփայեց հանոյքը, աշխատանքը: Ու պաշտեց մա՛նուանդ իր մայրը, շքնաղ ու քաղցրալեզու «Սիւսօն», որ լաւազոյն բնօրինակ մը եղաւ պապայ գրագիտուհիին համար: Զափի զգացումը ու երաժշտական հոյակապօրէն զարդացած ականջը առաջնորդեցին զինք զէպի կատարեալը: Ենթին

բնատուր հասարակչութիւն մը տուաւ իրեն մնացեալը: Տարօրինակ չէ ուրեմն, որ իր ոճը ժամանակի ընթացքին զգեցաւ այնպիսի՝ բիւրեղութիւն մը, որ զինք այսօր կը դասէ ֆրանսական գրականութեան մեծագոյն ոճարաններուն կարգին:

Ինքնանախշման եւ ինքնաստեղծման սքանչելու զէշ երթէ Քոլէթ: Իր գրականութիւնը, առաւելարար թելագրուած ինքնակենսագրական տարրերէ (թէ՛ւ գրողը երբեմն քողարկեց զանոնք), զարձ մըն է զէպի մանկութեան տարրեր ու չրաչալի ոլորտը, զոր զգայուն կինը զիտեց իրրեւ կորուսեալ դրախտ: «Սիտօ»ի կերպարը եղաւ այն alter egoն՝ պարզութեան, իմաստութեան, ինքնարուխ ու արուեստագէտ արժէքներու այն շա՛տ ամբողջաճողութեան, որուն երփներանգ խտացումն է Քոլէթ: Մանկութեան թագաւորութիւնը զարձաւ փնտռուած երջանկութեան մը ամենախօսուն վայրը: Քոլէթ յաճախ կ'ըսէր, թէ՛՝ «Կը պատկանիմ երկրի մը, զոր լքած եմ»: Անվերազարժօրէն անցած օրերու այս մտասեւեռում-ցանկութիւնը, իր սիրած «Սիտօ»ի քաջապնդիչ ու ճառագայթող օրինակը վերածուեցան այն անփոխարինելի կուռանին, որ զինք մշտեց զէպի գրականութեան ազնուատենչ տիեզերքը:

Քոլէթ զբաժ է նորավէպեր, վիպակներ, վէպեր, ինքնակենսագրական քրոնիկներ, հրատարակախօսական լղեր: Երեւակայուածի ու արտաքին-առարկայական իրականութեան միջեւ հիւսուող գիտակից թէ անգիտակից յարաբերութիւնները զինք գրուեցին առաւելագոյն շափով մը: Իր զանազան տիպարներուն ընդմէջէն ան ինքզինքն է, որ պատմեց, գրուեց, ու ստեղծեց: Ալըր կը մնայ Քոլէթի լղերուն զօրեղ բանալին, սիրային զգացումը՝ իր զիմակներով, նրբութիւններով, խաղերով: Յարափոփոխ, բայց մէկ: Ալըր չեղինակուհիին համար մարդկային անմեղութեան փորձարկումն է ապրում օրերու երկայնքին: Քոլէթ չգոհացաւ ընկերութեան կողմէ ընկալեալ ձեւերով, այլ երբեմն իր մէջ յայտնարեքեց ամերժուած յն ու շարժիլուածքը: Սիրոյ կողքին, բարեկամութիւնը եղաւ ընտրեալ ոճ մը կեանքի, խառնուածքային բխում մը, իրրեւ բարձր մը վայելուած:

Մանկութիւն, սէր, բարեկամութիւն ու... մասամբ նորին: Ահա ասիկ զլիսաւոր թեմաները, որոնք չեղինակուհիին համար բացին գրելու արուեստը, յուզումն ու բերկրանքը:

Հոս թարգմանարար տրուած փոքրիկ հատուածը կեղեցիկ նմոյշ մըն է Քոլէթի գրելաձեւէն: Կը պատկանի «Ֆլոտիլի» տունը խորագրուած ինքնակենսագրական երկին, որ զլուխ-գործոց մըն է, ոճի եւ զգայնութեան պայծառութեան ու խտութեան գոյգ տեսակէտներէն:

Երկը քրոնիկն է Քոլէթ ընտանիքին մանկական քաղցր յիշատակներու գրառում, զգացական հաշուեյարդար մը նա՛եւ: Փոխաբերական պատկերումն է այն բացառիկ ու առանձնաշնորհեալ կապին, որ երեխան ապրեցաւ իր շատ սիրուած ու մէկ հասիկ մօր հետ: Քոլէթ իր բնգ երբին մէջ է, որ յամուտօրէն փնտռեց ու վերայայտնեց կորուսեալ հիշ գրախտը, կախարդիչ ձայնով մը զայն փոխանցելով իր ընթերցողին: Խնկացի եւ զգայուն, ճոխ ու բարբեր, մայրենի տունը լուսաւոր մանրանկարն է պրագիտուհիին պաղտնաշխարհին, այնքա՛ն փարթամ իր կարեկրութիւններով ու զբսեւ որումներով: Քոլէթ յաջողեցաւ մա՛նուանդ երեխայի պրիսմակով դիտել զայն: Ահա թէ ինչու գրութիւնը անմեղութեան եւ առանձնայատուկ ամաքբութեան մը լուրթ երկինքն է, բանաստեղծօրէն ու խոր զգայնութեամբ ըզմացուած կեանք մը, որուն ցանկութիւնը կը ստեղծէ երջանկութիւնը: Թերեւս՝ միայն պատրանքը այդ

երջանկութեան, կարօտն ու բաղձանքը անոր: Բայց միթէ՞ գրականութիւնը պատրանքներուն գեղեցկագոյնը չէ՞...: Ու տարօրինակօրէն, գրութիւնը նախազգացումն է գիրէն անդին ծաւալող լուսութեան մը, ուր կը չքանան անձկութիւնները ու կը տիրապետէ նուրբ տեսողութիւնը ներքին, բայց ուժգին ընկալուած ազատութեան մը, որ միայն կը պտղաբերի գրող կնոջ մաստիսին վայելուչ շարժումով:

Քոլէկի յաջողութեան վերջնական գրաւականն է իր հիւսիսը ու հրաշալի ոճը՝ աշխատուած, խնամուած, գզացուած ու մտածուած: Ինքզինք կրկին ծնելու, աշխարհը վեր-ստեղծելու, անկրկնելի ձեւ մըն է անիկա, ուր անակա-նը յաճախագէտ է եւ շոյուած: Քոլէկի նախադասութիւնները ունին այն միշտ հասնելի, երաժշտական ու օրօրոցային շարժընթացքը, որ մօտիկ է աւելի բա-նաստեղծական կերպին, քան սովորական արձակին:

Դասական, համայնական, Քոլէ՛կ:

ՇՈՒՇՐԿ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ՔՈԼԷԹ

«Ո՞ՒՐ ԵՆ ԵՐԵՆԱՆԵՐԸ»

Տունը մեծատարած էր, բարձր ձեղնայարկով մը: Փողոցին սրբնքաց գառիթափը կը ստիպէր ախոռներն ու կառատունները, հաւնոցները, լուացարանն ու կաթնարանը ամփոփուելու դէպի վար՝ գոց բակի մը շուրջ:

Պարտէզի պատին կռթնած, կրնայի մատներովս քերթել հաւնոցին տանիքը: Վերի-պարտէզը կը տիրապետէր վարի-պարտէզին, նեղ ու տաք բանջարանոց, յատկացուած սմբուկին ու հնդկապղպեղին, ուր լալիկի տերեւներուն բուրու մը կը խառնուէր, Յուլիսին, որմնայեց հասունցած ծիրանի անուշահոտութեան: Վերի-պարտէզին մէջ, երկուորեակ եղեւիններ, բնկուզեցի մը, որուն աններողամիտ շուքը կը մեռցնէր ծաղիկները, վարդեր, անխնամ մարգագետիններ, պարտէզի խախտած հովանոց մը...: Ամրակառոյց ցանկապատ մը, խորքը, Որթատունկերու փողոցի եզերքին, պէտք է որ պաշտպանէր երկու պարտէզները: Բայց այդ ցանկապատը ես միշտ ճանչցած եմ ծուռ ու գալարուն, կարծես խլուած պատի կրադիւսէն, զայրագնած ու օդին մէջ վերամբարձ՝ հարիւրամեայ կլիսիմի մը անպարտելի բազուկներովը...: Տան գլխաւոր նա-

կատը, Աղբատանոցի փողոցին վրայ ճայռոց, ունէր գոյգ մը վերնագաւթակներ. սեւցած, անշնորհ պատուհաններով, հին գիւղի ֆաղֆենի տուն մը, բայց փողոցի գորաւոր գառիվարը թեթեւ մը կը խախտէր անոր խստութիւնը ու վերնագաւթակը կը կազար, մէկ կողմին չորս աստիճաններով, միւսին՝ վեց:

Մեծատարած, խոժոռադէմ տուն, դաժան՝ իր որբանոցային զանգակիկէ դուռով, հին բանտի հաստ կղպանքէ կանամուտով. տուն մը, որ կը ժպտէր մէկ կողմէն միայն: Կոնակը, անցորդի աչքին անտեսանելի, արեւէն ոսկեգոծուած, կը ծածկուէր խառն վերարկուովը կլիսինին ու պինդոնիէ անուն ծաղիկին, ծանրութեամբը յոգնած երկաթեայ գօտիի մը՝ կեղ-րունէն փոսացած կախօրրանի մը նման, որ շուք կու տար սալայատակուած փոքրիկ թերասի մը եւ հիւրասրահի շեմին...: Կ'արժէ՞ արդեօք, որ գծեմ մնացեալը, իմ խեղն բառերուս օգնութեամբ: Ռեւէ մէկուն ես պիտի չօգնեմ ակնապիշ հայելու այն շֆեղութեան, որ յիշողութեանս մէջ կը կառչի կարմիր կուղերուն աշնանային որբատունկի մը, որ կը կէր իր իսկ բեռան տակ, փաթթուած իր գլորումի ընթացքին շունիի նիւզի մը: Այն մեծղի եղբւանիները, որոնց խիտ ծաղիկը՝ շուքին տակ կապոյտ, արեւին ներքեւ ծիրանի՝ կանուխ կը նեխէր, իր լիառատութեան մէջ իսկ խղզուկ. երկա՞ր ժամանակներէ ի վեր մեռեալ այդ եղբւանիները իմ շնորհիւ պիտի չբարձրանան լոյսը դէպի, եւ ոչ ալ դէպի սարսափագրու լուսինը – արծաթ, մոխրագոյն ու կապարագոյն, սնդիկ, մեղեսիկներու հատու երեսիկներ, վիրաւորիչ շափուղաներ սուրսայր –, որ կախեալ էր որեւէ կապոյտ ապակիէ, պարտէզի խորքի տաղաւարին մէջ:

Տուն եւ պարտէզ կ'ապրին տակաւին, գիտեմ, բայց ի՞նչ օգուտ, թէ կախարդանքը լքած է գանձնք, թէ՛ կորսուած է գաղտնիքը, որ կը բանար – լոյս, բուրումներ, ծառերու ու բոշուններու դաշնակութիւն, մարդկային ձայներու մրմունջ, գոր մահը կանցուցած է արդէն – աշխարհ մը, որուն արժանի ըլլալէ դադարած էմ ես...

Կը պատահէր, որ խոտերուն կամ թերասի սալայատակին վրայ բաց մնացած գիրք մը, ցատկելու ծառայող օճանապուկ պարան մը արահետի մը մէջ, կամ համովիկ պարտէզ մը մանրախիւներով եզերուած, ծաղիկներու գլուխներով ցանուած, յայտնաբերէին՝ այն հին ժամանակներուն, երբ այս տունն ու պարտէզը ընտանիք մը կը պարփակէին՝ երեսաներու ներկայութիւնը եւ իրենց զանազան տարիքները: Բայց այս նշաններուն գրեթէ երբեք չէին ընկերանար կանչը, մանկական խնդուքը, եւ տունը, տա՛մ ու լեցուն, տարօրինակօրէն նման էր այն տուններուն, որոնք վայրկեանապէս կը պարպուին



Ֆոյեր իր եզրայրներն մէկուն հետ. պարտզին մը

իրենց ամբողջ երջանկութենէն՝ արձակուրդներու աւարտի մը առթիւ: Լոուրիւնը, գոց պարտզին ներփակած հովը, օղապարիկի մը անտեսանելի մատին ներքեւ գիրքին դարձած էջերը, ամէն ինչ կարծես կ'ըսէր. «Ո՞ւր են երեխաները»:

«Ո՞ւր են երեխաները»: Ան՝ մայրը՝ կը յայտնուէր, շնչահատ իր շա՛տ գորովալից մայր-շան մը յարատեւ խուզարկումով, գլուխը բարձր բռնած ու հովը հոտուրտալով: Ճերմակ շղարշով մը քեզանիֆուած ձեռքերը կ'ըսէին, թէ կարկանդակի խմորն է, որ շողեր էր ֆիչ առաջ, կամ շաֆարօզիի ու անուշի այրոզ թափշով մը թացանուած բուտինկը: Մեծ, կապոյտ գոգնոց մը կը պարուրէր զինք, եթէ լուացած ըլլար հաւանագոյնը: Եւ երբեմն կը շարժուէր դեղմորակ նայթատած թուղթէ դրօշակ մը, մսավանձառի թուղթէ տպարակը, որովհետեւ կը յուսար համախմբել՝ ուրախացած երեխաներուն հետ միասին՝ իր աստանդական ու դատարկաշրջիկ կատուները, հում միս ցանկացող ու ֆաղցեալ:

Աւանդական կանչին կ'աւելնար, նոյն ստիպողական ու աղերսական շեշտով արտաբերուած՝ ժամանակը. «Ժամը չորսն է: Նախընթրիֆի չեկան տակաւին: Ո՞ւր են երեխաները...»: «Ժամը վեցուկէս: Արդեօք ընթրելու կու գա՞ն: Ո՞ւր են

երեխաները...»: Անուշիկ ձայնը, ինչպիսի՜ հանոյժով պիտի լայի ես գայն լսելով...: Մեր միակ մեղքը, մեր գերագոյն շարի-  
 քը լռութիւնն էր, ինչպէս նաեւ տեսակ մը գարմանահրաշ ան-  
 հետումը: Անմեղունակ նպատակներու եւ անկախութեան մը  
 հաշուոյն, որ մեզի արգիլուած չէր, կը ցատկէինք ցանկապա-  
 տին վրայէն, կը նետէինք մեր կօշիկները. մեր վերադարձը  
 ապահովելու համար գործածելով աւելորդ աստիճան մը՝  
 ցածիկ պատը դրացիի մը: Անձկոտ մօր նրբին հոտառու-  
 քիւնը երեսան կը բերէր մեր վրայի հեռաւոր ձորակի մը  
 վայրի սխտօրը կամ խոտերով պատուած ճահիճներու անա-  
 նուխը: Տղոցմէ մէկուն թաց գրպանը կը պահէր դէպի տեւդա-  
 բեր ջրկայքները տարուած անդրավարտիքը, եւ «աղջնակը»,  
 ծունկը պատռուած, արմուկը քերթուած հանգարտօրէն կ'ա-  
 իւնէր սարդոստայններէ ու աղացիկ պղպեղէ սպեղանիներու  
 ներքեւ՝ երիզուած խոտերու ժապաւէններով...

— Վաղը կը բանտարկեմ ձեզ: Բոլո՛րդ, կը լսէ՞ք, բո-  
 լո՛րդ: Վաղը...

Վազը անդրանիկը, սահելով տանիքի հերձաքարերուն  
 վրայ, ուր ջրանոց մը կը հաստատէր, անրակը կը ջարդէր ու  
 կը մնար յամր, կիրթ, կիսանուաղած, պատի մը տակ, սպասե-  
 լով, որ գան ու գտնեն գինք: Վաղը, կրտսերը, առանց բառ մը  
 արտասանելու, փակտէն կը ստանար վեց մեթրանոց սանդուխ  
 մը ու համեստօրէն կը կրէր մանիշակագոյն հաւկիթ մը երկու  
 աչքերուն միջեւ...

— Ո՞ւր են երեխաները:

Երկուքը կը հանգչին հիմա: Միւսները օրէ օր կը ֆայեն  
 դէպի ծերութիւն: Եթէ կայ վայր մը, ուր կը սպասենք մեր  
 կեանքէն յետոյ, ա՛ն՝ որ մեզի միշտ սպասեց, կը դողայ տա-  
 կաւին իր երկու ողջերուն պատճառաւ: Մեր անդրանիկ քոռը  
 համար գիշերները գէթ չի նայիր ապակիի սեւին. «Ա՛խ, կը  
 զգամ, որ այս երեխան ուրախ չէ... ա՛խ, կը զգամ, որ կը տա-  
 նապի...»:

Անդրանիկ մանչուն հաշուոյն չի լսեր այլեւս, դողացիկ,  
 բծիշկի մը կառքին թաւալումը ձիւնին վրայ, գիշերուան մէջ,  
 եւ ոչ ալ մոխրագոյն գամբիկին անցքը: Բայց գիտեմ, թէ գոյգ  
 մը մնացորդացին համար, ան կը շրջի ու կը փնտռէ տակաւին,  
 անտեսանելի, շարչրկուած բաւարար չափով մը խնամակալ  
 չըլլալուն. «Ո՞ւր են, ո՞ւր են երեխաները...»:

(«Քրտիմի տունը»)

Ս. ՓԱՆՈՍԵԱՆ

ԶԱՆՁՆ ԻՄ ՓԱՌԱԻՈՐԵԱԿ

Արեւածագին արթնցաւ տիկին Աննան եւ թագ որին անկողինը պարայ գտաւ: Դրան նիզին ներսէն գրուած մնալը զարմանք պատճառեց իրեննայս փոքրիկ նեղուածքին, որ կը ներկայացնէր միակ սենեակը, ո՞ւր կորած կրնար ըլլալ տղան: Երազ չէ՞ր միթէ անոր երեւիլը հոս գիշերը: սակայն անկողինը փոռուած էր եւ վերձակը մէկզի հրուած: Փոքրիկ լուսամուտէն փյոռ պաղ հոգը բան մը խօսեցա՞ւ իրեն: Մնտուկը խելօքիկ մը կը մնար անկիւնը, իր անդը: Այդ խելօքութիւնը կասկած կ'արթնցնէր անա. կողպանքը փակ էր, բայց շորի ճոթ մը մկնադուռնի նման վար կը նայէր: Նետուեցաւ դէպի սնտուկը: Կողպանքը կեղծ-գոց էր: Բացաւ ցայն... ու ձեռքերը անշարժացան հոն: Գօտին ծրարող շորը չկար, չկար նոյնպէս գօտին: Աննա այրին ստուեցաւ հոն. տո՛ւնը փլաւ դիտուն, թէ սիրտը մէկէն կանգ առաւ: Յանկարծական կաթուածը զբաւ գինք գերեզմանի ճամբուն վրայ. կեանքին կապող շղթան ոչ մէկ կեռագամ գտաւ կարտուելու: Քիչ մը շարժու՞մը, որ կրնար շարժել տայ գլուխն ու թեւերը, զանոնք հակել տուաւ սնտուկին վրայ ու ինք եւս եղաւ յուլտենական անշարժութիւն...

Յաջորդ առաւօտ թագուոր Ռամիկեան լուսամտիտիւնի քով մտնրեց մէկը յիտուն գեղիններէն, գնեց պատրաստի զգեստ մը, քանի մը մանր իրեր եւ ժամը ութին ներկայացաւ Ազմարիներու վաճառատունը:

Նոյնպէս, ան ինքզինք յանցաւոր եւ պատճառ չնկատեց խիղճին գէմ: Զգրուած կտակի մը համաձայն՝ իրը կը նկատէր արծաթ գօտին: Աննա մօրաքոյրը պտուաւած էր, պիտի մեռնէր օր մը. թէ ինչո՞ւ չուտ մեռաւ, իրեն հարցը ննչու է. արծաթ քամարի եւ յիտուն գեղինի համար մարդ կը մեռնի՞...: Զգնաց մօրաքոյր լուզարկաւորութեան, բայց իր խիղճին առջեւ խոստովանեցաւ, թէ պիտի յարգէր յիշատակը, քար մը բարձրացնելով գերեզմանին վրայ: Թագուոր Ռամիկեան այդ օրէն հրաժարեցաւ խիղճին տուրք տայէն: Հետագայ արտաքնները ան պիտի գործէր բնագոյով, այնպէս՝ ինչպէս սոված զազան մը մտացու որսին վրայ կը նետուէր՝ քաղցը յագեցնելու համար...

Երկու տարի ետք, Աննա մօրաքոյր Վախճանու մէն տպին, թագուոր Ռամիկեան նախ մեծցաւ երկու տարիով, եղաւ Ազմարիներու տան անվիճելի մէկ անդամը եւ մօրաքոյրը համար պահած սուգին իբրեւ հետեւութիւն՝ կրեց արծաթ գօտին մերկ մէջքին, պահեց պեխ մը քիթին տակ եւ առնականացու: Կարելի էր գինք նկատել խելքը գլուխը համակրելի երիտասարդ, որուն ժպիտը, ակնարկները, խօսելակերպը կը ձգեն կիներուն մէջ զանգի զօղանջներ...

Երկու տարի ետք, այժմ, երբ խանութէն տուն կու գար՝ շուկայի գնումներ ընելու տիկին Ազմարիին համար, թիւտոր Ռամիկեան կը գտնուէր կոտահումներով սարքուած սարդոստայի մը թիւերէն բռնուած հոգեվիճակի մը մէջ: Հեղեղանման անձրեւ իջած էր գիշերը եւ սրբած ճամբայ, տուն, ծառ ու ծաղիկ, որոնք անա կը շողային արեւի լոյսին մէջ: Արմանացանցերուն արան-

քէն իրեն ծպտեցաւ կարմիր վարդի նորարաց կոկոն մը: Հոգը գայն հանած էր ցանցէն դուրս, այն մայթին, որ արեւոտ ըլլալուն՝ քիչ անցորդներ կ'ունենայ: Թազւոր նշմարեց կոկոնը շուքին մէջ ու գանգակ մը զօղանջնց իր ներսդին: պիտին ակնարկելով՝ ազակիներ յաճախ կը կատակէր. «Պարոն Թիւտոր, խարտեալ պէխը թուխ դէմքին վայն՝ է»: Ուրիշ անգամ վրայ կու տար ծիծաղելով. «Ո՛հ, ո՛հ, կատակ կ'ընեմ, պատէ, գուրգուրանք տար, շու կային մէջ պետք կ'ունենաս. սպասուհիները խենթ կ'ըլլան վրագ»: Եւ ինք փորձուեցաւ ըսել. «Տիկինները կը խորշին. աղան շունի...»: Տիկին էմիլի սուտ բարկութիւն կը կեդծէր. «Չափօ շանցնիս, վագէ շուկայ, ուշ կը մտա խանութէն: Եո՛ւս, ես տեղ ունիմ երթալիք»: Ակամայ կը հարցնէր. «Ո՛ւր, աղակին»: Տիկին էմիլի լրջացած՝ կը սաստէր. «Բու գիտնալիքդ չէ՛ յայտէ, գնա՛ եւ վայ է եկեր, եթէ բան ես ըսեր ազայիդ...»: Թազւոր Ռամիկեանի մէջ կուհուսմանու վազը կանգ առաւ, երբ անցաւ մայթը: Վարդակոկոնը վիզը երկարեւր էր գլխատուելու պէս: Գողունի նայեցաւ շուրջը. անցորդ չկար: Անճիւղեց վախով կոկոնը եւ արիւն թուեցաւ ծաղիկը ափին մէջ: Նախապաշարուծի գողը նետել տուաւ վարդակոկոնը, որ մեռաւ մայթն ի վար, յիշեց Թազւոր Ռամիկեան, որ երկրորդ տարիլիցն էր ժողովրդը՝ Աննայի մահուան: Բայեց: Վարդակոկոնը բացառք մնաց ետին: Հինգ քայլ անդին՝ կեցաւ: Աղակինը պիտի ըսէր՝ վախկուտ ես. ծաղիկ մը չկրցիր առն բերել: Ես գարձաւ հինգ քայլ եւ մէկէն գետնէն խշեց ծաղիկը եւ վազ տուաւ: Կարմիր կոկոնը արեան կաթիլի պէս կը կաթկկէր ձեռքէն վար...

Արտաքին դուռնէն մտածին պէս, Թազւոր նայեցաւ ծաղկոցին կողմը. ծաղկազուրկներու մէջ չկար կարմիրը: Այն ատեն կարմիր կոկոնը անգին գանձ մը թուեցաւ իրեն: Բարձրացաւ աստիճանները եւ գողի հողերանուծութիւնը չձգեց գինք, երբ սարդեցաւ ներս: Արա՛հին մէջ ոչ ոք կար: Տիկին Ազմարիին զարդախուցին դուռը կիսարաց էր: Ոտնամայնը հասաւ աղակնոջ, որ ձայնեց.

- Գո՛ւն ես, Մարիամ:
- Ես եմ, տիկին,— Թազւոր կեցաւ կիսարաց դրան մէջ: Տիկին էմիլիին մերկ ուսը ճառագայթեց, կուրծքը բաց էր եւ լանջակոնը հազիւ գտաւ ժամանակը՝ պահուրտելու սպիտակ վրանիկին տակ:
- Գուռը բա՛ց էր. հազար անգամ ըսած եմ՝ ելա՛ր, գոցէ ետեւէդ, օգուտ չունի, լեռնցի է, անխելք,— տիկին էմիլի կը շարունակէր հազնուելը.— ի՞նչ կեցնէր ես դրան մէջ, գնա՛ որահ, կը տեսնես որ կը հագուիմ...
- Մարիամը ո՞ւր է:
- Եուկայ գնաց. ուշացար, քեզի պետք չունիմ այլեւս:
- Կը ներկք ուշանալուս:
- Աղան գիտե՞:
- Թազւոր Ռամիկեանի ձեռքին մէջ ծաղկակոկոնը կ'արիւնէր ցուցադրարար: Տիկին էմիլի կը տեսնէր գայն հայելիին: Թազւոր ըսաւ.
- Եու կայէն ետք Ռոստոմներու պիտի երթամ եւ մուրհակը գանձեմ:
- Ի՞նչ մուրհակ է:
- Հինգ հազարի:
- Գնա՛, ի՞նչ կը սպասես. բայց ո՛չ, մօտեցիր... Մարիամն ըլլար, ինքը կը կոճկէր. քաջէ կունակիս ֆերմըթիւրը... չեմ փորձած դեռ, նոր գնեցի:
- Թազւոր Ռամիկեան մօտեցաւ աղակնոջ, գողի հողերանուծութիւն ունէր եւ կանխամտածուած արարքի մէջ բռնուելու վախ, երբ անցաւ տիկնոջ կոնսակը.

- Կրնայ սպասուհին վրայ գալ,— ըսաւ:
- Որ ի՞նչ, անվայել գիրքի մէջ կը գանուիք. կոճկէ կամ շքուէ աչքես,



ես ինքս կը կարգադրեմ,— Ռամիկեանի անշարժ մնալը եւ հայելիէն իրեն նայող նայուածքը, կը թուէր, մեղմեցին սաստը: Երկիմաստ էր, երբ ըսաւ,— «Ի՞նչ ես կեցեք ցիցի պէս, չարտի՞ս...»:

Թագուոր Ռամիկեան կը գտնուէր իր քսաներեքին մէջ: Քսանմէկին ան կողողտեց Աննա ժօրաքոյրը եւ այժմ, գօտին օղակ-օղակ, մեղկ՝ կը սեղմէր մէջքը ստուն երկաթի նման: Բայց վստահութիւն եւ համարձակութիւն պար-գեւոզ հմայակի ուժ ունէր Ռամիկեանի համար: Իրաւ ծաղկածողիկը ակոս-յին տակ եւ մատներով քաշեց պարեգօտին փակիչը: Մազկակոկոնը խտիտ տուաւ աղակնով քաց ծոծրակին: Էմիլի զգաց առաջին անգամ արուագողը ժարմիտին մէջ: Երջուեցաւ մէկէն ու գտաւ նայուածքին առջեւ վարդակոկո-նը, ձողիկէն կախ թիւտորի չրթունքին.

— Զգուշացի՛ր, պարոն Թիւտոր. աշարեկէլ կի՛ն մը, անսկնկալ մուռք գործելով ննջանեակէն ներս, զգուշացի՛ր միտքի ծուռթեմէն... Մարիամի վկայութիւնը՝ ո՛չինչ. աղան թող լսած չըլլայ, մեծ պատասդ սկանջը կը թո-զու...

— Բայց, տիրուհի, ես բան մը չըրի:

— Այդ ծաղիկը որո՞ւն համար է,— տիկին Էմիլիին աչքերը գամուած կը մնային Ռամիկեանի գէմքին:

— Տան պարտէզէն փրցուցած չեմ. գտայ ցանկապատէն դուրս ելած, ըսի՛ փրցնեմ, տանիմ տիրուհիս, եւ բերի, մի՞թէ մեղք գործեցի:

— Այո, մեղք գործած ես ուրիշին ինչքը իւրացնելով եւ յանցանքը կը կայանայ՝ կաշառել զողտնով տիրուհիդ:

Տիկին Էմիլի գուրս եկաւ զարդախուցէն. սալունին մէջ ան ստաւ բազ-կաթոռ մը եւ հոնկէ ալ վարէն վեր դիտեց վարդակոկոնը եւ ոչ թէ Ռամիկեա-նին գէմքը.

— Մէկը երբ կը սիրէ իր տիրուհին, անուան կամ այլ տունի մը առիթով, կը վազէ ծաղկավաճառոն եւ գնելով փունջ մը, զայն կը նուիրէ անոր. իսկ գո՞ւն... գու՛ն ուրիշին ծաղկոցէն զողցած կոկոն մը բերել կը համարձակիս...

Ռամիկեան սպրդեցաւ: Ան կը դիտակցէր հիմա, թէ ի՞նչ ըսել էր՝ տաւ-նիմ հաշիւը սխալ գուրս եկաւ շուկայի մէջ...: Ինկաւ ծուռկի տիրուհիին առջեւ ու պազաւ ոտքը, որ մերկ էր. չփոթութիւն եւ իղձ իրար խառնած, Թագուոր պազաւ նսեւ միւս ոտքը. զլիսածազը ինկաւ կնոջ գողը: Էմիլի ըն-դոտս ոտքի ելաւ: Մարիամ վրայ կը հասներ, երբ Ռամիկեան շտկեց մէջքը: Տի-կին Էմիլի ըսաւ հանգարտ շեշտով.

— Հասկցայ. կրնաս վերադառնալ վաճառատուն կամ, ինչպէս ըսիր՝ երթալ Ռոստոմներուն: Մարիամ առանձինն ըրաւ շուկայի գործը. ուրիշ ան-գամ չես ուշանար...

Մարիամ լուեկայն անցաւ խոհանոց: Ռամիկեանին կը մնար կռնակ զարմնէլ տիկինին ու շքուիլ: Յուցադրարար դրաւ վարդակոկոնը սեղանին վրայ եւ գուրս գնաց: Տիկին Էմիլի կը լուէր հիմա անոր ոտնաձայնը աստիճան-ներուն վրայ եւ իրեն թուեցաւ, որ արձագանգը ասնաձայնին կը վերածուէր խուլ արոփի, իր կուրծքին տակ: Նայեցաւ առաստաղէն կախուած Զահին, ապա իջն էր աչքերը գողն ի վար սաներու ն. «Եթէ Մարիամը վրայ չհասներ, ապա ի՞նչ պիտի պատահէր...»: Եօշափեց պազին տեղը եւ զգաց, որ կը ջերմէր: Մի-նակ էր եղած միշտ, սպասուհիով մենակ կեցութիւն, որ ընդարձակ բնակարա-նին մէջ թողած էր յուսարեկիչ լուսութիւն մը, ահա, տասնհինգ տարինը...: Այիջեց, թէ ո՞ր երկվայրկեանին նստած էր կրկին նոյն բազմոցին: Ելաւ ոտքի եւ ակամայ ոտքերը տարին գինք զէպի սեղանը, որուն վրայ կ'արիւնէր վար-դակոկոնը: Քաշողական էր անոր գոյնը, տեսքը. արու, դիտեց ու հոտոտեց.

բոլոր բանց զի՞թին տակ մինչև զարդախուցք, ուր հայելին ժպտախառն տխրութիւն մը գրաւ կեող այտին:

— Ահա զեզի նորութիւն, — կ'ըսէր այդ տխրութիւնը:

Կեցաւ հայելիին առջև, եւ ահա երկու կիներ, նոյնանման, գեղաղժ, բարակիրան, թխամարմին, սեւաչուի՝ կանգնած էին զժ գիծաց: Կապկելու պէս, էմիլի պոստեց կեն յոնքերը եւ մըսը ըրաւ աւելի: Ու շնս գիտեր, թէ ինչո՞ւ, մէկէն կաթիլ մը արցունքի, որ գնդուելով կը մեծնար՝ կախուեցաւ գոյգ աչքերու մէկ կողմէն...

Բարեկեցիկ բնտանիքի չինոց ազոց մէջ մէկ հաստիկն էր էմիլի: Կր յաճախէր կրօնաւորութիւններու գոյճը, որ քաղաքին կեդրոնը կը գտնուէր: Ընկերութիւնները մեծաւարուստներու ազդիկներ էին: Պաշտօնական համազգեստ մը, այն ժամանակները, պարտաւորիչ չէր եւ ընկերութիւնները կը հետեւէին նորոյթին, որը նոր, զգեստ նոր՝ ոչինչ էր անոնց ծնողներու պարարտ գրգռանքին համար: Էմիլի կու գար Հետուէն, կը մաշէին կօշիկները, զգեստը կը մնար օրերով նոյնը, իր խնամոտ ճիւղերը, արդու կը եւ այլ հոգերը զիչ բան կը փոխէին դրութիւնէն, որ կը գտնար մասնացոյց, Հեղանքի առարկայ: Էմիլի կը տառապէր, բայց զգալի չէր ընէր: Սակայն կ'ուզէր հետեւիլ ընկերութիւններու երթին, ըլլար անկէա անուանատուն կամ ընկերական հաւաքոյթ: Կը կարգար քառականական գիրքեր կամ սիրային վեպեր: Եւ իր երեսակայութիւնը սնունդաւ երազներով: Հօր պաշտօննայի եկամուտը չէր կրնար ապրեցնել բազմանդամ բնտանիքը եւ ազնկան իզձերը: Էմիլի իր թարմ տարիքին մէջն էր, երբ հայրը արկածամահ էր: Հինգ եղբայրներով որր մնաց: Համեստ բնտանիքի տղաք, այն ատեն օտքի ելան եւ ամբ առին Թանիտներու դուռը, յուսալով, թէ որը ազնկի մը անցաթիւով բռնուած դիւրին որս մըն էր, մանաւանդ, որ եղնիկի կը նմանէր, արքայական խնճոյքի յարմար դիցուհի մը...

Այդ բոլոր շահամոլ տղաքը Էմիլի հրեց զի՞թին ծայրովը: Եւ երբ եօթը պորտ հետու ազգական պարոն Միլի Ազմարի, քառասունին մէջ մտած, բարձրահասակ եւ լեցունկէկ ղէմքով, բարի եւ դիրքի տէր մինակ-գլուխ՝ զարկա իրենց դուռը, մայրը աստուածային հատուցում ընդունեց իր ազօթքներուն՝ պարոն Ազմարիին թեկնածութիւնը: Էմիլի հակառակ չղնաց մօր ցանկութեան եւ ընդունեց կրել տիկին Ազմարի ազնուական անունը: Էմիլի երբ ամուսնացաւ, հազիւ տասնեօթը տարեկան էր. շնկատեց քսաներեք տարիներու տարբերութիւնը, որ կար իր եւ պարոն Ազմարիին միջեւ՝ իրրեւ մնայուն փորձաբար: Հինգ տարի ան ապրեցաւ յոյսով, որովհետեւ զաւակ չունեցաւ: Հինգ տարի եւս սպասեց, իր տխրութիւնը թաղելով բնտանեկան փոխայցելութիւններու եւ պարասրահներու տարտամ մշուշներու ետին: Յետոյ, իր ականջին փսփոսացող ընկերութիւնը մէջտեղ ելան, որ անդադար կը կրկնէին, գաւազիք մեղաակիցի շեշտով.

— Երանի զեզի, Էմիլի, ծեր ամուսինդ բրէ փարաւան. գեղեցիկ երիտասարդներ շուրջը կը վիստան. ընտրէ մէկն ու մէկը...: Տես մեր գրացի ժանեթը, որ Հարֆուշներու տղան կապեր է ոտքին. կը կրէ շուկան իր առունը, կը հագուի, կը գուգուի իշխանուհիի պէս: Կ'ըսեն, թէ Ժորժը անկէ ունեցած է...: Գուն պակաս ես իրմէ, ան, որ զաւակ ունեցեր է երեկէն, իսկ դուն կը վախնաս շուրջը...: Իրաւ կ'ըսեմ. փորձէ...

— Իմ միակ փորձս, սիրելիս, զեզի պէս աղբակալած մը վոնտանն է սուսնէս, գնա՛, Աստուածդ սիրես, խնթութիւն կը բերես վրաս...

Հարուստ եւ արիստոկրատական կեանք մը վայելելու համար, Էմիլի ընդունած էր անյարմար այդ ամուսնութիւնը: Պարոն Ազմարի յարմարագոյն ամուսինն էր, որ իրեն տուաւ առերեւոյթ ցանկալի իզձերը մետալին այն երբ-

սին, ուր նկարուած էին առասպելական պատկերներ: Բայց պարոն Միշէլ անկարող եղաւ տիկին Էմիլիին պարզելու ժայռանայու խորին խորհուրդը: Տիկին Էմիլի յու նեցաւ բերկրանքը, զոր իրեն պիտի տար կողերուն միջև գոյանալիք խորտու մը: Պարոն Ազմարի կրօնական վիսքիւ հաւատքով նախապաշարուած մարդ, հաշտուած կը թուէր շար բախտին հետ. ան մերժեց բժշկական այցի ամէն խորհուրդ: Աստուած էր տնօրինողը, իրեն կը մնար սրբազրել սխալը, եթէ սխալ մը կար անգուտակ մնալուն մէջ...: Այսպէս, ան կը հաշտուէր ճակատագրին հետ եւ ազատ թողած էր Էմիլին՝ իր վիշտին հետ:

Նրկու տարիէ ի վեր, այն օրէն առիթն, երբ էրէկը առջեւը հրած տուն բերաւ թիւտոր ստարականը, տիկին Ազմարիին բնաւորութեան մէջ բան մը փոխուեցաւ: Սկիզբը՝ ամփոփուիլ զիտցաւ. կը դժգոհէր օտար երիտասարդի մը տան մէջ շտապական ներկայութեանն եւ կը յիշէր ընկերուհիին խօսքերը. «Էմիլի, ըրէ ծէր ամուսինդ փարաւան, ընտրէ երիտասարդ սիրական մը... ծոցդ կը բռնկի կրակով. մեզքը վիզին, եթէ անկարող է կայծը բռնկեցնելուն մէջ...»: Ու մերժեց այդ ընտրութիւնը, ահա, տասնհինգ տարի, մնալով հրեշտակէ աւելի անբիծ մաքրութիւն: Գանգատեցաւ Միշէլին, որ շատ բարի եւ միամիտ մարդ կը նկատէր.

— Անապատէն առած—բրբած կ'ըլլայ յոռի սովորութիւններ, զէշ բնազդներ, զոգուութեան կամ պատիւի սենեակը տուիր իրեն, զբան նիզը մնաց միւս կողմը...

172 - 2200

Կը խնդար պարոն Միշէլ կնոջ շրջանայեցութեան վրայ.

— Նիզ մըն ալ այս կողմը կ'անցընենք, կը լմնայ—կ'երթայ... Ի՞նչ ես իրար անցնի, սիրելիս. սպասուհիին վրայ կը մտածես... ան իր մօրը տեղը կու գայ... Հօ՛, հօ՛, հի՛, հի՛: Խօսքը մէջերնիս, Էմիլի, ես շատ կը խղճամ սա հայ աղփին վրայ: Բա՛լ եւ ազնիւ ժողովուրդ մը եղած են, առաջին ջրիտունեայ աղզը՝ բոլոր ազգերուն մէջ: Անկախութիւն եւ ազատութիւն վրիպած են միշտ իրենցմէ. վերջին անգամ կիլիկիայի մէջ պիտի հիմնէին պետութիւն, բայց, ափսո՛ս, սա մեր Փրանսացիները զաւանանցին... այսօր մեր երկիրը եկած են բեկորները...: Աստուածածնանոյ զորք մըն է ըրածնիս. ձեռքէս գայ՝ մէկ քանի հոգի եւս ջոյս առնելու կու գայ...

— Ոչ, ո՛չ, մէկը շատ է, կը բաւէ. ըսելիքս միայն նիզի մասին էր. եթէ նիզ մը գնել տաս՝ սիրտս կը խաղաղի...

— Կը գնենք, տիկինս, կը գնենք, որ իմ հրեշտակ հանգիստ բուն քաշէ. հօ՛, հօ՛, հի՛—հի՛,— կը ծիծաղէր մաքրամաքուր պարոն Ազմարի եւ կ'երթար իր գործին: Ամուսնութեան առաջին տարիէն ան միշտ ուրախութեամբ կը մեկնէր տունէն, այն համոզումով, թէ զո՛ւ էր կինը՝ ոսկիէ վանդակին մէջ գրուած թուշուրի մը պէս...

Ժամանակ մը մոռացութեան տրուեցաւ նիզին պատմութիւնը: Տիկին Էմիլի մինակութեանն եւ տնային տաղտուկներու առժամեայ զերեզմանու մը փնտռեց գիշերային տունայեցելութիւններու մէջ, եւ պարոն Միշէլի սրտովն էին այդ ժամանցելի պահերը, երբ այր մարդիկ կը տարուէին քաղաքական եւ տնտեսական վէճերով, մինչ կիները կը նստէին մեկուսի, խօսելով նորոյթի ինկած բաներու մասին: Երբեմն սուր եւ զրնգուն ծիծաղ մը կը փրթէր անոնցմէ եւ այր մարդիկ հետաքրքրուած կը դադարեցնէին վէճը. մէկն ու մէկը կը հարցընէր.

— Ջրազացր լաւ կ'աշխատի՞... դէ՛, ձեզի տեսնեմ, մեր ալիւրը մանր ազացէք, խոնաւ նկուզի ցորեն ենք, հը՞...:

— Մեր աղաչաբարը մաշէր է, ցորեն չ'աղար, այլ կորեկ... կորեկ եղողը թող ձայն տայ. հա՛, հա՛, հա՛...

Եւ հասնաւ էր վիճակը թագուր Ռամիկեանին, որ յանախ մնալով առան-

մին, կը ձանձրանար սպասուհիին հետ գլուխ գլխի գրոյցներէն: Մարիամ յաճախ կը խօսէր աղջկան՝ ձեմիլի մասին եւ անէճքներ կը շարտէր փեսային հասցիին, որ այրեր էր իր մէկ հատիկ աղջիկը: Ռամիկեան հող կ'աշխուսէր ժամանակը: «Գեղեցիկ է ձեմիլիդ»: Եւ Մարիամ կը բարձրացներ աղջիկը մինչեւ եօթններորդ երկինքներ. «Էլուսնի կտոր է իմ ձեմիլին, ափսո՛ս, որ տեղը չի նկատուի»: Թագուր Ռամիկեանի երեւակայութիւնը անհյով կը մեծնար. «Տիրուհի՛դ շափ...»: Երկինքստ հարցումէն կը նեղուէր Մարիամ. «Տիրուհի բերան առնելու ելի՞ք կին չէ, գիտցած եղի՞ր, պարոն Քիւտոր...»: Ռամիկեան մէկէն ուղի կ'ըլլէր եւ գուրս կ'երթար: Կը վերադառնար փողոցները երկար թափառելէն յոգնած, որովհետեւ կը գուրգուրար նոյնիսկ իր մէկ գանականին վրայ ու չէր մտնէր սրճարան կամ շարժանկարի սրահ, եւ կը գտնէր տունը խոր լուսնի թեւան մէջ: Յաճախակի առանձնացումը, որ ներքին մղումով իրեն կը զգացներ իր օտարական ըլլալը Ազմարիններու տան մէջ, Քագուրի միտքերը կը ջշէր դէպի պղտոր ջուրերը...

Երբ աստուծոյ թեւան սերմը Ռամիկեանի մէջ հող կը փնտոէր, տիկին էմիլի հետզհետէ վերակծկուեցաւ ինքն իր մէջ, զաղբնցնելով տունացնելու-թիւնները, անոնց թիւը իջեցնելով նուազազոյնին: Յետոյ, նիզիկն պատմութիւնը նոր երանգ ստացաւ: Նախահաշին ու ընթրիքը սկսան ասնել միասին, երեքը: Պարոն Միշէլի սրտով իջաւ կնոջ շրջադարձը. բարի, բարի մարդ էր եւ կը սիրէր էմիլին, որ կինը ըլլալէ աւելի՝ անբնութեան փոքրիկ կուռք մըն էր իրեն համար: Ընթրիքի սեղանէն կը հեռանար ինքնակամ եւ երբ կը խրուէր սրտան թերթերուն մէջ, էմիլին եւ Քիւտորը կը շարունակէին ընթրիքը:

Ընթրիքի սեղանին վրայէն ալ սկսաւ փորձուիլ ինքնը...

— Մարիամին չկրցի հասկցնել, որ երբ գուրս երթայ, դուռը ետեւէն գոցէ:

Ռամիկեան մէջը կ'առնէր—կու տար ազակնոջ խօսքին մէջ անուձեղի իմաստը: Մի՞թէ դեռ կը տեսէր վարդակոկոնին առիթով յառաջացած տաճառագեղեցութիւնը: Կամ գուցէ ազակները լուր ունէ՞ր մէջքին կապած արծաթ գօտիէն.

— Ինչո՞ւ չի գոցեր, պէտք է գոցէ. գող—մող կրնայ մտնել...

— Այո, գող եւ գողին տեսակ—տեսակը:

Ռամիկեան ձեռքը տարաւ ակամայ մէջքին եւ ժպտեցաւ, որ անմիտ մարդու երեւոյթ տուաւ զէմքին:

— Ինչքի գողէն միայն լուր ունիմ:

— Իսկապէ՛ս. կը տեսնեմ, որ մէջքդ կը քերուի, հը՞, — եւ էմիլի թեթեւ ժպիտ մը գրաւ շրթնեզրի մէկ անկիւնին, — գրանդ ետեւէն նիզը գնել չմոռնաս...

Ռամիկեանի բերանը մնաց բաց, բայց պատասխան չուէր: Պարոն Միշէլ նայեցաւ սեղանին կողմը, երբ պնակ մը աղմկեց վար ինկող զգալի մը անշնորհ հատուածէն:

— Ի՞նչ կ'անցնի—կը դառնայ, էմիլի, չհասկցայ:

— Դուք քու թերթդ կարդայ, բան չկայ, կատուն ոտքիս քուեցաւ, փռու ըրի եւ պարոն Քիւտորին սիրտը փրթաւ վախէն...

— Դէ՛, լաւ, զիս մի խանդարեմ փրձաւ—փրձատոցով, — եւ անակնկալօրէն դարձաւ Քիւտորին, — մտաք ունիմ, աղաս, յետոյ՝ գիշերը քունս կը փախի երթայի՞ր դեղադործին...

— Օհօ՛, այդ էր պակաս, կէս գիշերով մարդը ո՞ւր կը ճամբես: Այսօր դիմացի, վաղը ես կը բերեմ, եղա՞նք, — տիկին էմիլի կանչեց Մարիամը, որ սեղանը վերցնէր:

Քագուր ելաւ ոտքի: Տիկին Ազմարի յուշելու պէս ըսաւ անոր.

— Նիգը դնել շոտոնաս, պարոն թիւտոր...

Յաջորդ օր էմիլի նոր նիգ մը գետեղել տուաւ Ռամիկեանի պատկած սենեակին գրան միջանցքը նայող երեսին: Մարիամին սրտովը եղաւ նիգին դրուիլը:

— Այսպէս լաւ է, տիրուհիս: Տղան օտար է, տեսար գիշերը գիշերաշրջիկու թիւնը բռնեց, ելաւ եկաւ...

— Դէ', դու ն լուէ, — օտտեց տիրուհին:

Երեկոյեան, երբ Ռամիկեան տուն եկաւ աղային հետ, տիկին էմիլի դիմաւորեց երկուքը եւ աննշմար ժպիտ մը հրամցուց անոր:

— Մարիամ ուժմարած է, որ դու ն բնաւ բաղնիք շնո երթար. խեղճը շատ կը շարշրկուի փոխնորդներու գ վրայ...

— Ինձի բան մը չըսաւ այդ մասին:

— Դու ն պէտք է գիտնայիր, ըսելը աւելորդ էր:

Ռամիկեան կարմրեցաւ մինչև ականջները: Իր դատնութիւնը զգայի չընելու համար, քաշեց դէպի իր սենեակին կողմը եւ ա՛ա գէժ եկաւ գրանը վրայ նոր հաստատուած նիգին, որ արհամարհոտ փայլք մը նետեց վրան: Դատնութիւնը, մարմնական ջերմին պէս՝ բարձրացաւ քուռատու ն աստիճանը եւ Ռամիկեան ցնցուեցաւ ատելութիւն բտուած դողէն:

— Այս կինը զիս պիտի քչէ տունէն, բայց ես իր խելը պիտի անիծեմ, ինձի թագաւոր կ'ըսեն:

Քառասուն աստիճան դատնութիւնը գինք շքեց մինչև ընթրիք առնելը: Սեղանին վրայ, նկատելով թիւտորին ցրուած վիճակը, պարոն Ազմարի ձեռք առաւ գինք:

— Տունէն ներս ի՞նչ եղաւ քեզի, տղաս. մեր էմիլիին ընդու նելութեանէ՞ն վրդոված ես, հա՛, — եւ իբրեւ թէ կը բարկանար կնոջը վրայ, — տիկին, խօսքերնիդ կատարեցի՞ք:

էմիլի զգալը վար գրաւ աղմուկով:

— Ես կատակէ կ'առնուիմ, պարոն Ազմարի, հանեցէք ըլլալ քել մը սիրալիր: Ծիճդ շն՞մ, յարգարժան թիւտոր վշտակիր, — կրցաւ վայելցնել կատակը նուրբ ծիծաղով մը եւ հաւի պուտ մը աւելցուց թագաւորին առջև դրուած պնակին մէջ, — կներ՞ք, պարոն թիւտոր, օր մը պէտք պիտի ունենանք ձեր ուժերուն: Միւսիս Ազմարին ինձի քիչ առաջ հարցում մը ըրաւ. կը հանձնէ՞ կրկնել զայն:

— Սիրով, մատամ Ազմարի. զեղահատերը բերի՞ք:

— Ինքած եմ, կրնաք օգտագործել այսօր:

— Ուրեմն, թիւտոր, տղաս, բարձրացուր բաժակդ, խմենք մեր սիրելի, ուշագիտ մատամին կենացը...

— Դէ', մի խորանաք աղբի մէջ, երկու քնիդ ալ կարիք ունիք տաք բարի վրայ քրտնելու, — տիկին էմիլի այդպէս կատակելով՝ կը կրկնէր քիչ առաջ Ռամիկեանին ըրած թելադրանքը:

— Իսկ ե՞րբ կը փափաքի մատամը, որ կատարենք նիրվանայական արարողութիւնը:

— Որքան շուտ, այնքան՝ լաւ:

Ընթրիքը այնուհետեւ անշահ դարձաւ, որովհետեւ պարոն Ազմարի դեղահատ մը ընդու նելով՝ երկու բաժակ օղիէն գինովցաւ եւ պէտք եղաւ գինք ատաջնորդել իր ննջասենեակը: Ռամիկեան գիշեր քարի չկրցաւ մտղթել: Տիկին էմիլի անտեսելու պէս ըրաւ՝ մտնելով զարդախուցը եւ հօնկէ դուրս շէշաւ այլեւս:

(Շար. 3)

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

## ՔԱՐԸ

Խօսել է մի օր քարը երեսի.  
 Փափուկ է եղել քո սրտի նման,—  
 Դողացել է նա դողից տերեսի.—  
 Օ՛, այդ յուշն է իր թերեւս յառնում,  
 Ու նրա միջով, հունտի պէս անձայն,  
 Քար սիրտը նեղում, ծաղիկ է դառնում,  
 Կամ նրա վրայ կապում է մամուռ՝  
Մախմուրի նման:

Խօսել է մի օր քարը երեսի,  
 Դողացել է նա դողից տերեսի,  
 Եւ յանկարծ մի օր պապանձուել է նա  
 Ու քար է կտրել՝ վշտից սրտադող,  
 Երբ դեմ է առել քար խղճին մարդու,  
 Եւ փշրուել է, դարձել է նա հող.  
 Քարացել նորից ու քար մնացել...  
 Այսպէս, ո՛վ գիտի որքան կը տեսի,  
 Օ՛, Պապանձումն այս Զաքարիայի,—  
Դարե՛ր երեսի,  
Դարե՛ր երեսի...

Խօսել է մի օր քարը երեսի:

ԱՐՄԱՆՏ

Թեհրան, 1986

Պ. ՄՆԱՊԵԱՆ

ՄԻՋՆԱՐԱՐ — 5

Միջայել քանի մը բառով պատկերացուց իր բմբրոնումը հայրենիքի մասին, ընդգծեց անոր անփոխարինելիութիւնը, վերջին իրաւունքը միշտ անոր կը պատկանի ըսաւ, այն պայմանով սակայն, որ անիկա իր բարձրագոյն դերին մէջ ըլլայ, մրրկի իր զաւակներուն տէր գառնայունախանձախնդրութեամբ, միշտ զոհեր շպահանջէ, զոհողութեան ընդունակ ըլլայ նաեւ ինք, փողփողի արդարութեամբ, առինքնէ:

— Մեր պարագային, — եզրակացուց, — այդ արժէքներուն կշիռը իսխատած կը թուի ինծի:

— Բայց եթէ շուտաւոր ու արդար չէ ամէն ինչ, ապա ինչո՞ւ այդքան շատ կը խօսուի լոյսին, արդարութեան ու երջանկութեան մասին:

— Իսկ որո՞նք են խօսողները:

— Ամէնքը, ալէն, ձախէն, ներսէն, դուրսէն, ամէնֆը:

— Ես, — ըսաւ աւելի պաղարիւն եղանակով մը, — երբեք այն յաւակնութիւնը չունիմ, որ ինքս ամէնէն թափանցամիտ մարդերէն մէկն եմ, ո՛չ, կամ ամենազէտ եմ, բացարձակապէս ոչ: Բազմաթիւ հարցեր կան, որոնք լոյսի կը սպասեն մտքիս մէջ: Եւ անոնցմէ մէկը զովարանուածին ու զովարանուածէն խոյս տալու գուտ հայկական հակասութիւնն է: Ինչպէս կ'երեւի ձեր, պարոն Ատոմին եւ միւսներուն տրամադրութիւններէն, ծանօթութիւններէն ու եզրակացութիւններէն, ինծի պէս դասալիքներէն իրաքանչիւրին զիմաց հազար հաւատարիմ կայ, իրարու փոխադարձ ուղերձներ կարդացող հազար-հազար այր եւ հազար-հազար կին, աղջկանս պէս պարմանուհիներ ու սողուս պէս պարմաններ, հազա՛ր-հազա՛ր, որոնք, սակայն, միշտ ինծի անհասկնալի պատճառներով, զովարանուածէն հեռու մնալու նոյն իրականութիւնը կը պարզեն: Ես չեմ հասկնար, թէ ինչ կարիք կայ այսքան խոժոռե-

լու մեր առիթով, երբ իրենց իրականութիւնը խորքին մէջ տարբեր չէ մեր առած քայլին: Տեղ մը սխալ բան մը կայ կ'ըսեն անգլիացիք ու այդ տեղը, մեր պարագային, ուղեղներու ծալքերուն մէջ պէտք է փնտռել, հոգերանութեան բաւիղներուն, կեղծիքի գոհիչներուն մէջ՝ եթէ կ'ուզէք: Ես, օրինակ, իրականութիւնը իմ պատկերացուցածիս պէս շտեմայ, զայն զգացի իր շրջում իմաստին մէջ, զտայ հեղձուցիչ, հոգեմաշ, ու երբ պատենութիւնը ներկայացաւ, հեռացայ անոր սահմաններէն: Բայց զայն երազային, իտէալական համարողները, օր ու զիշեր խնկարկողները իրենք ինչու չեն հետևիր իրենց համոզումներուն, պատկերացումներուն, նախանձելիին, գովարանուածին:

— Բայց այդ պիսիներ չեղա՞ն, չկա՞ն:

— Անշուշտ եղան, անշուշտ կան, սակայն ի՞նչ համեմատութեամբ: Ո՞ր է լայն բացում գիրկը եւ ո՞ր են բացում գիրկին մէջ նետուելու շտապող կարաւանները: Հայաստանը հիմա գովքի ծարաւ երկիր է աւելի՝ քան գորովալիք մայր, իսկ իրեն հաւատարիմները ծափողջոյններու վարժ մարզեր են եւ ոչ թէ պանդուխտի ցուպը կոտրելու պատրաստ հայրենածարաւ հոգիներ:

— Կարծեմ ձեր խօսքը քաղքենիներուն կը վերաբերի:

— Իսկ միւսները տարբե՞ր են ըստ ձեզի:

— Ո՞ր միւսները:

— Մտաւորականները, օրինակ: Ձեմ գիտեր, չեմ հասկնար, երբեք չեմ հասկնար:

— Ի՞նչը չէք հասկնար:

— Պանդուխտի ճակատագիրը ողբալէ շոգնող մարդոց պանդխտութեան ճանապարհներուն ցուցարեւրած յամառութիւնը ամէնէն առաջ: Կը սարսափի՞ն անհարազատ հողերու վրայ ապրելու իրականութենէն եւ ապա հոն թաղուելու տխուր հաւանականութենէն, անդադար կը խօսին այդ մասին, արձակ տրտունջներով ու չափածոյ լացուկոծներով, նոյն ատեն գովքը կը հիւսեն հայրենիքին, անդուռ բերանով, բայց կը շարունակեն պանդուխտ մնալ, մինչեւ անգամ ճիգ կ'ընեն յաւերժացնելու պանդխտութիւնը, քայլ մը մօտենալէ աւելի՝ ծով մը աւելի կը հեռանան հայրենի սահմաններէն, ովկիանո՞ս մը աւելի, կը շտապեն էսպէ՛ս խորթ վայրեր, ուր տնտեսական հեռանկարներ յարգարելէ ետք կը շարունակեն կարօտաբազմ նոյն կեղերջները յանկերգել, բեմադրել ու խաղալ նոյն խաղերը: Լսած չէ՞ք այդ մասին:

— Շատ:

digitised by A.R.A.R.®



— Ի՞նչ է ինչպէս կը մեկնաբանէք երեւոյթը: Խոչոր սուտ մը չկա՞յ հոս:

— Երեւի:

— Սուտը հովանաւորողներ:

— Յամենայնդէպս սխալ բան մը կայ:

— Սուտն ու սուտը հովանաւորողները ձգած՝ մարդիկ թափած են մեր վրայ հիմա եւ դուք այս էք կ'ըսեն, դասալիք էք կ'ըսեն, արի չէք, հայրենաթող էք, անձնասէր, եւ այլն, եւ այլն:

Կանգ առաւ, կուլ տուաւ նոր վառած սիկարէթին բարկ ծուխը, նայեցաւ ժամացոյցին, խոռվակոծ ակնարկը յառեց հեռուն ու կը պատրաստուէր նոր բան մը ըսել, երբ կանխեցի զինք եւ ուղղեցի զիս շարչրկող հարցումը.

— Եթէ ձեր քոյրը Ամերիկա հաստատուած չըլլար ու ինք չկանչէր ձեզ, դարձեալ պիտի փորձէի՞ք Հայաստանէն դուրս գալ:

— Ընչդ է, որ քոյրս իմ հաշուոյս գիմում ներկայացուց եւ այդ գծով կրցայ սահմանէն այս կողմ անցնիլ, բայց եթէ որեւէ այլ առիթ ներկայանար, ես դարձեալ պիտի շփարանէի ճամբայ ելլել:

— Առա՞նց վախի:

— Ի՞նչ վախ, ինչէ՞ն պիտի վախնայի, որմէ՞:

— Կեանքէն, անորոշէն:

— Իր թիկունքին ամբողջ Սիպերիա մը ունենալէ ետք, ալ ի՞նչ վախ կրնայ ունենալ մարդ, — ըսաւ Միքայէլ անտարբերօրէն թօթուելով ուտերը, — արհեստ մը ունիմ, իսկ եթէ այդ մարդին մէջ չկրցայ շոր հաց մը ճարել, սիպերիական սեւ հացին պէս սեւ հաց մը կրնամ ձեռք ձգել անպայման, կրնամ ամէն դործ ընել, որեւէ դործ, կը սկսիմ այրէն:

Վերջին բառը արտասանելէ առաջ՝ արեանս մէջ զգացի հին տիրութեան մը ալեկոծումը: Նորէն յիշեցի Փարիզի իմ վերջին օրերս, աչքը Սիպերիա բացած բարեկամներէս Սիմոնֆը յիշեցի, իմ վհատեցուցիչ կացութիւնս, իր նախանձելի ինքնազտահոլութիւնը, Լուսոյ քաղաքին մէջ իմ անճրկումս, սատոյցներու աշխարհին մէջ իր դարբնած անճկելի կամքը, փիլիսոփայութիւնը ապա՝ «Ես մարդ կը հաշուեմ ա՛ն՝ որ մինակը կը նետուի կրկէս ու ինք կ'որոշէ իր ճակատագիրը»: Այդ պատկերներուն հետ չեմ գիտեր ուրիշ՝ միտքս խուժեցին Միքայէլի գաւակներուն առիթով Ատոմին մտատանջ պատկերացումները:

— Ձեր պարագան, ինքն իր մէջ առած, հասկնալի է, բայց գաւակնե՞րդ, — հարցուցի:

— Այսինքն ի՞նչ:

— Իրենք զիրենք զժրախտ պիտի չզգա՞ն անհարազատ միջավայրերու մէջ:

— Որեւէ տեղ եւ երբեւիցէ իրենց հօրմէն աւելի զժրախտ չեն կրնար ըլլալ անոնք, — յարեց կծու հեղինակը:

— Բայց անոնք Հայաստանի մէջ ծնած են:

— Այդ տրամաբանութեամբ կրնանք իսկոյն եզրակացնել, որ Հայաստան ծնած տասնեակ հազարաւոր հայեր շնչահեղձ կ'ըլլան Մոսկուայի մէջ, Լենինկրատի մէջ, կամ Կեդրոնական Ասիոյ խորերուն: Բայց այդպէ՞ս է իրականութիւնը: Նոյն բաները չկրկնելու համար արագ անցնիմ այդ բոլորին մօտէն ու յայտնեմ, որ ես բախտին աւելի կը հաւատամ, քան տրամաբանութեան, ճակատագրի թաթին աւելի՛ քան բաղձանքներու պսակին, ա՛յն ճակատագրին, որ իմ երազներուս բացած հունէն բոլորովին տարբեր ճամբաներու մէջ նետած է զիս միշտ. հայրս ու մայրս ես ինքս Պէյրութէն Հայաստան տարի ու մեռան Հայաստանէն հեռու տեղ մը, այս անգամ գաւակներս քաշքշեցի ետեւէս եւ, ո՛վ գիտէ, թերեւս անոնք, նոյն ճակատագրին տնօրինումով նորէն, օր մը վերադառնան Հայաստան:

— Դո՞ւք:

— Երբե՛ք:

— Շատ բացարձակ չէ՞ ձեր վճիռը:

— Մէկ պարագայի միայն կրնամ թեկանել զայն, այն պահուն միայն, երբ, Աստուած մի արասցէ, այս սառած երակներուս մէջ զեռ յամեցող կաթիլ մը արեան պէտք ունենայ անիկա:

Այդ ակնթարթին դէմքին վրայ տարածուեցաւ մռայլութեան աւելի թանձր խաւ մը ու այնպէս թուեցաւ ինձի, որ կարծես մէկը դարձեալ կասկածի տակ կ'առնէ իր անկեղծութիւնը ու ինք արդէն հողիին մէջ կ'ապրի նուաստութիւններուն կրկներեւոյթը ու կը զգայ պաշտօնական զրպարտիչներուն ահարկու լուծը:

— Ես, — ըսաւ մորմոքուն եղանակով մը, — հայրենիքին կարօտով տաղուած եւ ապա կարօտիս թելադրանքով հոն մեկնած մարդ մը եղած եմ, մեր հողին վրայ քանի մը կաթիլ քրտինք թափած մարդ մը: Ըսեմ աւելին. քանի մը ծառ տնկած եմ հայրենի հողին մէջ, ժայռեր տեղափոխած եմ ու տքնած եմ ճամբայ բացող բանուորներուն հետ, տառապած եմ անոր համար ներքին կրակով եւ կոնակիս իջած

Հարուածներուն տակ, իսկ զիս ու ինծի պէսները դատապարտող մարդերը իրենք ինչ ըրած են արդեօք այդ հայրենիքին համար, ինչ, այդ մտաւորական ու վարժապետ կոչուածները մանաւանդ, Մորավիայի պատկերացուցած մեր Մեկելէները, որ թոյլ կու տան իրենք իրենց այդքան զայրազնելու մեզի դէմ:

— Ըստ երեւոյթին,— ըսի,— մեր վերադարձէն ետք ամէն ոք նոր ցաւ մը պատճառած է մեզի, մանաւորաբար մտաւորական խաւը:

— Հայաստանի մէջ շկարենալ ապրելու ողբերգութենէս աւելի մեծ կամ աւելի խոր չի կրնար ըլլալ անշուշտ ասոնց կամ վարձահատոյց միւսներուն ինծի պատճառած ցաւը, բայց նորէն անտարբեր չեմ կրնար մնալ զրոսեւորւած վերաբերումներուն հանդէպ, մարդկօրէն կը ցաւիմ, երբ կը նկատեմ, որ իմ ողբերգութիւնս հաւատարմութեան առիթի մը վերածած են շատեր, աներեւակայելի թափ մը տալով իրենց շարափոխութեան ու շարախօսութեան եռանդներուն:

Կանգ առաւ, տարուբերեց զլուխը, նայեցաւ հեռուն, ափը զարկաւ քունքերուն, նորէն տարուբերեց զլուխը, խոժոռեցաւ աւելի:

— Նեղութիւն մը կը զգաք,— հարցուցի քիչ մը իրար անցած,— բանի՞ մը պէտք ունիք արդեօք:

— Ոչ, պարզապէս անուն մը կը փնտռեմ, որ կը խուսափի յիշողութենէս:

— Ի՞նչ անուն:

— Ան՝ որ սովետականէն ազատ աշխարհ անցաւ:

— Գրաւչենկո՞ն:

— Ոչ: Գրաւչենկոն հին պատմութիւն է: Իմ փնտռածս նոր է, երիտասարդ զրոյթի մը անունը, նորէն ռուս, որ վերջերս Փրանսական թերթի մը մէջ յայտարարութիւն մը կատարած էր:

— Ռուսիո՞յ դէմ:

— Ոչ: Գրոյթի իր ճակատագրի մասին: Ոչինչ: Անունը կարելոր չէ: Յատկանշականը իր մէկ հաստատումն էր, որ իրարու հետ կը համեմատէր մարմնական պոռնկութիւնն ու մտաւորական պոռնկութիւնը եւ նախապատուութեան իր քուէն կու տար առաջինին: Ահա որ է կ'ըսէր, երբ կը ճնշեն վրադ եւ դուն կը ստիպուիս պոռնկացնել հոգիդ, տաղանդդ, ամբողջ էութիւնդ: Քսանհինգ տարիներու ընթացքին, կը շարունակէր գծրախտ տարադիրը, գիրքերէս ո՛չ մէկը տպուեցաւ այնպէս՝ ինչպէս զրած էին զանոնք: Քաղաքական պատճառներով՝ գրա-

քննիչներն ու ստորագրածները կտրատեցին, մկրատեցին, այլասերեցին բոլոր յղացումներս, ա՛յնքան՝ որ ինքս ինձմէ ամչնալու պատճառներս թեթեցնելու համար՝ ի լուր աշխարհի կ'ուրանամ ցարդ բոլո՛ր գործերս, բոլո՛րը, եւ որպէսզի որեւէ կապ չմնայ իմ ու անոնց միջեւ, որոշած եմ նոր անուն մը գործածել:

Լուրին մոայլ անդրադարձը իր կնիքը դրաւ հոգիիս ու բաւական երկար պահ մը միասին լուցիւք:

— Անկատարներո՛ւ երկիր,— գոչեց յետոյ Միքայէլ վշտաբեկ ձայնով մը,— կէսերո՛ւ աշխարհ, ուր արգիլուեցաւ նոյնիսկ բացայայտ իրականութիւններուն անունները տալու տարրական իրաւունքը: Ուր՝ իրապաշտութեան անունով վերնախաւի ուղղափառները երդում ըրին շարունակ ու երդում ընել տուին նորարոգող ընձիւղներուն, բայց ոեւէ մէկուն չներուեցաւ ընդգրկել տուեալ իրականութեան ամբողջութիւնը: Պատմութիւն գրեցին՝ առանց պատմական դէմքերու յիշատակութեան, համայնապատկերներ խմբագրեցին՝ մեծաքանակ մկրատումներով, թերթերու պիպլիոկրաֆիաներ կազմեցին՝ զեղչելով անունները ամէնէն հանգամանաւոր ձեռնարկներուն: Մ՛, աշխարհի այդ մասը, ուր ազատութեան մասին խօսեցաւ անազատ մարդը, երջանկութեամբ հպարտացաւ ապերջանիկ էակը, լոյսը փառարանեց խաւարման հոգին:

— Ո՛ւր է Ատոմը,— հարցուց Միփան ներս խուժելով:

Ըսի:

Կը հեւար: Ճամբուն վրայ կարծես կոխւ ընելու տրամադրութիւն մը խմորուած էր սրտին: Թոյլ չտուի, որ ակնարկութիւններ ընէ: Դարձայ Միքայէլին ու յարեցի.

— Ոչ չատ, բայց բաւական բան լսած եմ ուրիշներէ, դուք բոլորովին տարբեր բան կ'ըսէք սակայն:

— Որո՞նք են այդ ուրիշները:

— Գացող-եկողները:

— Կամ եկող-գացողները,— աւելցուց ինք:

— Կամ եկող-գացողները,— կրկնեցի մեքենարար:

— Գացող-եկողները կա՛մ իրենք չեն ուզեր եւ կամ թոյլ չի տրուիր իրենց թափանցել իրականութեան խորքը, իսկ եկող-գացողները իրենց ունեցածը գունազարդելու եւ հոս տեսնուածը ձեւազեղծելու պաշտօնէն զատ հազիւ թէ ուրիշ բան ըրած են ցարդ եւ աւելին չեն կրնար ընել առայժմ: Ձեմ գիտեր: Կրնայ ըլլալ, որ ես կորսնցուցած եմ իրերը պայծառ ակնարկով տեսնելու իմ մաքրութիւնս: Կրնայ ըլլալ: Ձեմ յամառիր: Բայց երբ մարդիկ շրջուած

ձեռով կը ներկայացնեն նոյնիսկ արձանագրուած հշմար-  
 աւութիւնները եւ ուրիշները ծափող ջոյներով կը դիմաւո-  
 րեն նման բացայայտ խնդաթիւրումները, այն ատեն հա-  
 մարձակութիւն կու տամ ինքզինքիս կարծելու, որ խա-  
 թարուած էութիւնը եւ շեմ անպայման: Ամբողջ ողբեր-  
 դութիւնը կը կայանայ անոր մէջ, որ կէս է մեր երկիրը,  
 կէ՛ս, կէ՛ս, կը հասկնա՞ք, եղերականօրէ՛ն կէս, եւ որքան  
 ալ ձգնին փոշի ցաննել մէկուն աչքերուն եւ վարդազոյն  
 ակնոցներ գնեն միւսին, երջանկութեան ազազակներ ար-  
 ձակիլ ասն ասոր կամ թափ տան անոր խնկարկելու զիւ-  
 բանանութեան, կէսը, իր ներկայ իմաստին մէջ, չի կրնար  
 գահակալել ամբողջին տեղը:

— Բայց եղած կէտր ի՞նչ մեղք ունի միւս կէսին կո-  
 րուստին հետ,— ճշացի մէկէն:

— Քիւրիմացութեան մէջ շխրինք, ես կէս Հայաս-  
 տանի մասին չեմ խօսիր,— պատասխանեց Միքայէլ նոյն  
 ախրութեամբ,— ասիկա ուրիշ խնդիր է: Կը խօսիմ եղածին  
 կէտին մասին, անտեսանելի հայրենիքին, որ լիաթոք շնչա-  
 տութիւն է իմ մաշիս մէջ, ձեռներէցութեան եւ նախաձեռ-  
 նութիւններու ձեռնառու վայր, լարուած մեքենայէն տար-  
 ըրբ քան ճը ըլլալու սրբազին կարելիութիւն, ներքին ան-  
 ձիգ ամբողջական մասնակցութեամբ խօսելու, երգելու,  
 ազգակցու, հայնոյնիւ բազմարեղո՞ւն ապատութիւն: Հոն  
 բազմութիւնները կը տատապին ու չեն կրնար խօսիլ լրա-  
 ցուցիչ այդ խորհուրդին մասին, մինչ հոս ջախջախիչ տո-  
 կոսը կ'անդիտանայ այդ խորհուրդը:

— Այդքան կենսական է այդ մէկը:

— Ես այդպէս կը կարծեմ եւ կը կարծեմ նաեւ, որ  
 բացակայ այդ կէտին, բսել կ'ուզեմ՝ խաչուած այդ խոր  
 հուրդին հետեւանքով է, որ ազնիւ խմորով ծնած մարդե-  
 բը՝ ազնիւ կեանք մը չկարենայ վարելու տատապանք մը  
 ձգեցին իրենց ետին, արդար խառնուածքները՝ արդար  
 չկարենայ ըլլալու վերջ մը, տազանգաւ որները՝ տազան  
 գուտը գործեր չկարենայ կենսացարձկու կսկիծ մը: Մար-  
 քը երկար է կրնայ ռեւէ մէկը շարու նակիլ թու մը:

Մտիկ բրած պաշտօն, միամտամանակ ֆրանսաստան  
 թերթին լուսացքներուն սեւ բիծեր կը ցանկի, երբ նկատե-  
 ցի. որ խաչածեւ նշաններ կ'ուրու անան անոնց մէջ՝ իսկ մը  
 համակեց զիս Զակնու վրայ եղած՝ բոփ

— Այս հարցերը բնու է քննութեան ասարկույ չեն  
 դառնար հոս

— Քիչ անպատ: Եւ լստ քիւրիս կուզմէ կրկնու  
 թեան զնով բսեմ որ երիւ ու թուկանը լստ աւելի կը խան

զավատէ դուրսը ապրողները, քան էականը, քան խորքը, խորհուրդը, տարբերիչը, քան արարիչ երեսը: Աւելի պճնազարգուած բաներով կը տարուին անոնք, քան խորքին ամբողջութեամբ, կը լլանան տեսանելիով ու բնաւ փոյթ չեն ըներ վերծանել զգալին: Մէջտեղն է պատմութիւնը, որուն գլխապտոյտ առթող ելեւէջները պարզեցի անպամ մը:

— Հակասութիւններուն կ'ականարկէք:

— Այո, բայց որքա՞ն թերի է բացատրութիւնը: Դեռ իր ճշգրիտ անունը չունի այն ոճը, որ ի սկզբանէ կիրարկուեցաւ հոն եւ դադար չունեցաւ մինչեւ մեր օրը: Առանց պատմութենէն վախնալու՝ մարդիկ սրածեցին տաղանդ մը եւ տարիներ ետք միայն ճշնեցան չունչ տալ սրածուած տաղանդաւորին, մոխրացուցին զանձ մը եւ շատ ուշ միայն անդրադարձան չորս հովերուն տարած անոր տարողութեան, փշրեցին սրբազան նշխար մը եւ ապա միայն բունուեցան անոր մէկ հետքը յայտնաբերելու տենդով: Երկար ատեն այս հունով հոսեցաւ կեանքը:

— Հիմա նոյնը չէ սակայն, — ըսի:

— Ի՞նչը նոյնը չէ: Նոյնին մէկ տարբերակն է, — բարձրացուց ձայնը Միքայէլ:

— Ինչպէ՞ս:

— Այնպէ՛ս, որ կը մոռնանք սրածողն ու սրածուողը ու հրաշքով փրկուած մասունքով մը կը հպարտանանք, կ'անգիտանանք մոխրացնողն ու մոխրացածը ու յայտնաբերուած մարմուն կայծերով ջերմանալ կը ձեւացնենք, ոտնահարողն ու ոտնահարուած սրբութիւնը հազիւ կը յիշենք ու յայտնաբերուած փշուրներով կը լլանանք, կը շրջանցենք բանտերուն ու սիպերիական ցուրտերուն անողոք գործակալները եւ յանուն արդարադատութեա՞ն օրգաններուն կը մեծարենք վերադարձած կիսաւեր տուժածները:

— Ա՛յս ելեւէջներուն կ'ականարկէիք:

— Այո, այս երկասայրի ողբերգութիւններուն:

— Երկասայրի՞:

— Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել եռաժանի:

— Ինչպէ՞ս:

— Ես ճանչցած եմ պատմութիւնը մարդոց, անուանի ու անհամար, որոնք իբրեւ յեղափոխական ոսկւիքներ փառարանուեցան օր մը, ուրիշ օր մը՝ դատապարտուեցան իբրեւ հակայեղափոխական, իսկ երբորդ շրջանի մը՝ կրկին մեծարուեցան իբրեւ յեղափոխական քուրմեր: Այս կը նշանակէ պարզապէս երեք գրականու-

թիւն ունինք անոնց մասին, գրականութիւն մը՝ յեղափոխականներուն մասին, ուրիշ մը՝ հակայեղափոխականներուն, իսկ երրորդ մը՝ վերավարկաւորուածներուն: Արդ, դուք ըսէք ինձի, անոնց բոլորին կամ մէկուն մասին նոյն կիրքով խօսած, հիմնաւորումներ ըրած կամ համարումներ քնարերգած երեք գրականութիւններէն ո՞ր մէկն է հիմա ճիշդը, ո՞ր մէկն է անհիմը եւ ո՞ր մէկը պիտի դուժարենք մեր անճողոպրելի ժառանգութեան վրայ, օրինակենք յետոյ, դարձնենք ճանապարհի ջահին մէկ ցուլքը: Յետոյ ըսէք ինձի դարձեալ, թէ ի՞նչ հոգի կը զիմանայ այդ ջրապտոյտին մէջ եւ կամ ի՞նչ վստահութիւն կրնայ ներշնչել մարդուս նման աւանդութիւններով յազկեցած ու նոյն վտանգներուն ենթակայ միջավայր մը:

— Արեմն,— ըսի հակաճառելու տրամադրութեամբ,— սխալ են մարդիկ, երբ դարաւոր փորձառութիւններու վրայ կռիւնած կ'ըսեն, թէ պատմութեան անիւր ետ չի դառնար:

— Այն ատեն ո՞ւր պիտի ձգենք վարկածին միւս երեսը:

— Ո՞ր վարկածին նորէն:

— Այն վարկածին, որ կ'ըսէր, թէ պատմութիւնը ինքզինք կը կրկնէ:

Բառերը դարձեալ մթազնեցան ուղեղին մէջ: Ակամայ մտած էի Ատոմի գերին մէջ, բայց ես Ատոմը չէի:

— Ես աւելի շուտ,— շարունակեց Միքայէլ,— կը հաւատամ վարկածին այս երեսին, այն միւս փորձառութեան, ըստ որում պատմութիւնը ինքզինք կը կրկնէ, իր այս կամ այն հատուածով, իւրաքանչիւր հատուած իր օրրանին մէջ: Կ'ըսեն, թէ կլիմաներն ալ հոգի մը ունին եւ ես կը հաւատամ այդ զօրութեան, ինչպէս կը հաւատամ կլիմաներու հոգեբանութեան, որ կ'անդրադառնայ մարդոց ներքին կառոյցին վրայ, հետեւաբար՝ նաեւ աշխարհահայեացքին, մզումներուն, վերաբերումներուն, արժեչափերուն:

— Իսկ ժամանակը,— հարցուցի ընդվզումով:

— Ի՞նչ ժամանակը:

— Ժամանակը բնա՞ւ դեր չունի յաջորդական սերունդներուն ներքին հոլովոյթին վրայ:

— Ձեւով մը՝ այո, ունի, ձեւի՞ն վրայ:

— Միայն ձեւի՞ն:

Շահեց իրանը, փոխեց աթոռին դիրքը եւ, սեւեռաբիր նայելով աչքերուս՝ հարցուց.

— Յարական ռեժիմը բունակալութիւնն էր, թէ բունակալութիւնն չէր:

— Ի հարկէ՛ր թոնակալութիւն էր:  
 — Ստալինականութի՛ւնը:  
 — Այդ ի՞նչ հարցում է, անշո՛ւշտ, հազար անգամ  
 աւելի:  
 — Լաւ: Այս յաջորդականութեան մէջ դուք կապ մը  
 չէ՞ք աեսներ:

— Ի՞նչ կապ:  
 — Միջավայրային:  
 Միջայն էրկար խօսեցաւ այդ մասին, պատմական  
 իրադարձութիւններու ողեկոյումներով, անուններով,  
 թուականներով, եզրակացներով ի վերջոյ, որ ցարական  
 թոնակալութեան զէմ բռնկած Հոկտեմբերեան յեղափո-  
 խութիւնը ստալինականութեան չէր յանգեր, եթէ առկայ  
 չըլլար միջավայրային տուեալը:

— Իայց ստալինականութիւնն ալ երկար շտեւեց,—  
 բսի վճռարար,— ժամանակը շատ բան փոխեց. կարելի չէ  
 մոռնալ նշանաւոր ձիւնհալը:

— Ընչդ է, սակայն կրցա՞ւ հաստատուն արմատներ  
 նետել ձիւնհալը եւ կրցա՞ւ ծլարձակիլ անոր խոստացած  
 ազատութեան սերմը:

— Ամէն պարագայի, յաջորդ փուլը ստալինակա-  
 նութեան վերագարթնումը չէր:

— Փոխուածը, ինչպէս կ'ըսէի քիչ առաջ, ձեւն է,  
 մի՛շտ ձեւը: Այլապէս, զժուար պիտի ըլլար ըմբռնել կար-  
 միր կայսրութեան մէջ զազար շունեցող խստութիւննե-  
 բուն պարագան, աքսորները նորէն, բռնի տարագրու-  
 թիւնները, մարդերը իրենց ազգային պատկանելիութենէն  
 զրկելու անհեթեթ երեւոյթները, անտեսանելի ու տեսանե-  
 լի միւս բռնութիւնները, հունդարական հրդեհը, Փրակայի  
 գարունին հրասայլային խորշակները: Ներկայիս, ձիւնհա-  
 լեան խոստումներուն եւ ստալինականութեան միջեւ կը  
 տարութերի կշիռքը եւ իմ հոգիս չի կրնար խաղաղութեամբ  
 օրօրուիլ այդ պատկերին դիմաց...: Առնուազն ինծի եւ  
 ինծի պէսներուն ներքի է միշտ ի մտի ունենալ Ստալինի  
 ժառանգորդները, ինչպէս կոչեց զանոնք ռուս բանաս-  
 տեղծ մը եւ, ինչպէս անգամ մը յիշեցի, ուրիշ բանաստեղծի  
 մը պաղատագին ազդարարութիւնը. «Զգո՛յ՛լ եղէք, մար-  
 դի՛կ»:

Հակառակ ականատեսի իր վկայութիւններուն,  
 մորթով ապրած փորձառութիւններուն, պարզած մոայլ  
 պատկերներուն ու աւելի քան մոայլ կասկածներուն, իմ  
 մտքիս մէջ տիրական կը մնային Ատոմի թուած հայրենա-  
 կան իրագործումները, ուրիշներէ յաճմնեքս նաեւ, առա-



ւել՝ թերթերուն մէջ իմ կարգացածներս, տեսածներս, հրաշալի բաներ, բոլորն ալ, աննախընթաց, անկրկնելի: Բնաւ փորձ չբրաւ ընդմիջելու զիս: Ոոր գոհունակութեամբ մը աւարտեցի խօսքս:

— Եթէ այս բոլորը, — ըսաւ խուլ ձայնով մը, — պիտի ունենայինք մարդ էակին ոչնչացման գնով, անպայման պիտի գտնուին մարդիկ, զուք ըսէք անհարազատ տարրեր, հոն շնչահեղձ եղող, թէ հոս թեւաբեկ ինծի պէսներ, որոնք երբեք պիտի չուզէին ժառանգորդը ըլլալ այդ աննախընթացներուն, անկրկնելիներուն ու պանծալիներուն, որոնք թերեւս սրածուած մարդու մը եղբորը քրտինքով շաղախւած են, աքսորուած մարդու մը որդւոյն ֆանքերով խոյացած են վեր կամ ձեւաւորուած են գնտան նետուած մարդոց թոռներուն տազանդով:

— Այդ պարագային, հարկ պիտի ըլլար հերքել կեանքին հիմնական օրէնքներէն մէկը, — ըսի հաստատ:

— Ո՞ր մէկը:

— Գէշը մոռնալու եւ լաւին յառելու բնականութիւնը:

— Իսկ եթէ կեանքը ի՞նչը հարկադրէ վերաքննել նման առածներուն ճշմարտութիւնը:

— Չեմ գիտեր, մարդ էակը միշտ կողմնակից եղած է լաւին ու լաւատեսութեան:

— Այո, սակայն թշնամիին հարուածներուն զիմաց եւ ոչ թէ փառարանուած դրօշակներուն ներքեւ ստացած վէրքերուն առիթով եւս:

— Այդ պարագային, դարձեալ կը մտնենք նոյն անել շրջանակին մէջ:

— Անեկէն դուրս ելա՞նք միթէ:

— Կը կարծեմ:

— Ես ո՛չ, — ըսաւ Միքայէլ զօրեղ շեշտով մը, — ես ո՛չ: Այնքան ատեն, որ կէսերէն մէկը կ'անտեսուի, անելը կը շարունակէ նոյնը մնալ: Կէսը գիտենք, եթէ կ'ուզէք ընդունի՞նք զայն ցնծութեան ձեր աղաղակներով, բայց մի՞շտ: Սարսափելի լոռութիւն՝ միւսը, միւսը՝ զսպուած ուժ, զսպուած սէր, պոռթկում, զսպուած կարօտ, զսպուած պաշտամունք, զսպուած որոնում, ամէն ինչ զսպուած, զսպուած արկածախնդրութիւն, զսպուած տեսիլք, զսպուած զժգոհութիւն տակաւին, զսպուած տենդ, զայրոյթ, խոյանք...

ՊՅՂՈՍ ՄԵԱՊԵԱՆ

(Շար. 4)

### ՉՄՈՒՑՈՒՈՂՆԵՐԸ...

Ոչ միայն ընթերցասեր լայն հասարակութիւնը, այլև արեւմտահայ մամուլին հաւաքածոները այժե անցրնելու բախտ ունեցած անձե՛րն անգամ հազիւ թէ երկու-երեք անգամ հանդիպած են այս անունին, Արմէն Տօրեան, որ թէ՛ հայ եւ թէ ֆրանսական գրականութեան ամէնէն խոտապահանջ շրջանակներէն մերս կրցաւ մուտք գործել այնքան կանխահասօրէն: Թուրքերը կանուխ զգացին Տօրեանի ուժը ու վարուեցան անոր հետ թուրքի պէս, եաքաղանով, որուն տակ տարաբախտ բանաստեղծը յայտնաբերեց գրականին գուգսհեռ կանխահաս այլ շնորհ մը, արիւնկակցեցին դահիճները արհամարհելու փիլիսոփայութիւն մը, որ ուր-ւագծուած է Պոլսոյ «Ճակատամարտ»էն քիչ անդին արտագրուած Օշականի կարեւորօտ յօդուածին մէջ:

Անշուշտ, թուրքերու ծրագրեալ ոնիրը դիմաւորելու տօրեանական հեզմանքը եզակի երեսոյթ մը չէ եղանակ մեր պատմութեան մէջ, Տօրեանի պէս ունեցանք բազմաթիւ ուրիշներ, կոչուածով յեզափոխականներու կարգին՝ բանաստեղծներ ու արուեստագէտներ, որոնցմէ մէկը եւս կ'ուզէինք յիշել այս առիթով, իր վերջին օրերը Տօրեանի վարժով ապրած սիրելի մը, Քաննիկո տարեկանին նահատակուած դերասան Ենով Եահէն, գործանշուց մեզի Նշան Պէշկապաշեան վարժագիրը, Տօրեանը բնութագրող Օշականի բառերուն յար եւ նման բառերով:

*«Ականատես վերապրողներ կը վկայեն, թէ բանտարկութեան եւ տարազութեան օրերու ե՛ն ննովքը ամէնէն աւելի կենսութիւն եզոզներ, ամէնէն կատակախօսք, գուարթ էր՝ չարանիքի դացողի մը պէս»:*

Օշականի գրութիւնը ունի «Մոռցուածները» ընդհանուր խորագիրը, որ վարկածային բնոյթ մը ունի, նոյն ատեն կը բերէ հակառակին վկայութիւնը եւ առիթ կու տայ յիշելու հանրայայտնի փորձառութիւններ: Արդարեւ, ըստ էութեան չնչին տուրքերով օժտուած, այլ փոզով ու թմբուկով մեծարուած անձերէն քաննիկո մոռացութեան իր անդունդներուն մէջ նետեց պատմութիւնը, որ սակայն անգոր մնաց լայն արժանիքներով աշխարհ եկած ընտիրներուն պարագային, եթէ նոյնիսկ նակատագիրը այս վերջիններուն զլացաւ մեծ ու մեծաբանակ գործեր արտադրելու լայն առիթներ:

Մոռացութեան բողբ պատելու ընդունակ ընտիրներու այդ շարքին կը պատկանի անպայման «Մոռցուածները»էն ամենառանալին, Արմէն Տօրեան, որուն մասին արձանագրած Օշականի ճշմարտութեան վրայ ահաւասիկ կ'աւելնայ նոր երանգ մը, հայրենի աշխարհէն այս անգամ, բանասիրական գիտութիւններու բեկնածու Աելիտա Դոլուխանեանի գրչով:

«Գարու ն» ամսագրի անցեալ տարուան փետրուարեան համարին մէջ երեւցան Աելիտա Դոլուխանեանի նշմարը եւ Տօրեանի գլուխ-գօրծօցներէն հիւկոյանուէր ներբողիմ թարգմանութիւնը, գորս ապրիլեան մեր թիւով խոր յուզումով կը յանձնենք ընթերցողին:

### ՄՈՌՑՈՒԱԾՆԵՐԸ



### ԱՐՄԷՆ ՏՕՐԵԱՆ

Տօրեանը ծանօթ էր ձեզի ՎՄԻՆԻԱՆՅԷՆ:

Փարիզէն էր ստանալինք իր գերբուսանները, բարբարոս հայերէնով ճշ գրուած, բայց քոնց պարունակած խորհուրդը նոր էր անպայման:

Անիկա էր գրէր Փրանսերէն:

Այս ձեզի պատմած էին եկողները պարճանութեանը ազու ճշ, որ արեւելոցիք իր խանգաղտ խոտը էր քանար բոլորովն նորերու խորակի ճշ գրեաց որ, ահաւոր էր կողմէր ու արուեստը կ'ապրէր՝ քաղաքներու քաղաքին ճիշ:

Իճրախտ ասարին Պոլիս քերտ գինքը:

Այս Պեղազեան վարժարանին ճիշ հանցալ կրակոտ ազու այս անգամ իրական պատկեր ճշ: Իր գուսնաբնի պէս, իր անբող կողմէր էր յայտնէր խոտացուած շափաղանցութիւն ճշ, իր սիրտին բառովը քարոսխիզը, որ էր ժայթքէր իր քաղելու:

Քիւ շարժելու ձեւէն: Ըստեղ իր յիշուին ասիկ էր հազնէին աստատութիւն ու յայտն էր վայելք ճշն էր իր քերէն ժախի բնիչ հնչական ու գործիչ օլլիվնաւորէնը ճիւղիցին, որուն պաշտուցը ճիւղ գիտեր ինչպէս էր հաշտեցներ արգիւտուց իր հաշտին նա:

Բայց նարայոյններուն նման ան ունէր սխաղ փոտասիրութիւնը: Կազանցուի փնտրուի, գործը հասող հանգիստներու արջաղը պակաս չէր իր անուրթէն: Անոնց ճիշ հերոսութիւնը, գրական գուպորներուն անոնց ճիշ հարուն ու հանգիստները քոլոր իրենպէսներուն, որոնք իրենք պիտէր պարտադրելու ճիւղին ճիշ ամենին անկի ազուսէր փնտրեցին:

Քրտն է լուս. Փրանսերէնով ճիւղ ճիւղ անկի գերբուսաններ:

Անոնց ճիշ Տօրեան ձեւի ճիւղ ինձուք է ցոյց ասուած եւ իր ստանուարին խաղը, ասարիներու անխաղան, զիս բուսական յասակ էր գծուի աշտն:

Նիւիոյն նուիրուած իր ճիւղ էլը, հակասակ անոր, որ լուսնիմ ձեւըս ասի, զիս իր շնչալ ողջ էր քոնն իմ ինչպէս փնտնու ճիւղ:

Չարճանայի չէ անչուս, որ նոր քերտու այլ շափաղանցները համարուց ու հնչք պակէն բաճաստեղներուն ամենին ազգերասանին գիւժ, որ բուսերը գործածեց անկիներու համար, անոնց ճիւղ զննելով ասարուութիւնն անկի լոյս:

Իր հայերէն գերբուսանները անկատար են ձեւով ու էր յայտնին փոխադրութեանը, որուն ենթադրեցան:

Բայց հակասակ ասար, անոնց խորք կայ բան ճշ, որ կ'արժեցնէ անոնց թերի գեղեցիկութիւնը: Ըսելու եւ մտապաստիւնելու եղանակը, բացատրութիւնները ծայրայն ուսումներու ասանկու ճանքը, անսխիներու համար ցոյց արուած խանգաղտութիւն էր անոնց ուրաքեղու տաղանդը՝ արուստեթիւսներ են, որոնք էր գիւժանան:

•••

Գարնոց ճիւղ կարուանին՝ հիացուածով խոտացու, ուսուցիչի ճիւղ վրայ, որուն թերէն երգը չէ պակսեր, որ Հայաստան փայտին ճիւղին Չանդուքը թէ Այսու, ինչպէս էր լացողներուն հանգիւց ու ճանք է մահուան ճիւղին ճիւղ բանաստեղծութիւնը չէթուսեցին: Անիկա Տօրեանն էր:

Գ. ՕՇԱԿԱՆ

## ԱՐՄԷՆ ԴՈՐԵԱՆԸ ԵՒ ՆՐԱ ՆԵՐՐՈՂԸ՝ ՆՈՒՒՐՈՒԱԾ ՎԻԿՏՈՐ ՀԻԻԿՈՅԻՆ

Արմեն Դորեանը (իսկական անունը՝ Հրաչյայ Սուրճևան) ծնունդ է 1892ին, Մակեդոնիայի Ռւշուր քաղաքում, սամանեան կառավարութեան խնուրային և կամբոյին շինարարութեան ինժեների ընտանիքում: Կրթութիւն է ստացել Լազարեանների վանքում: 1911ին տեղափոխուել է Փարիզ և սրբէս ազատ ունկնդիր գասարտութիւններ է լսել Սորբոնի համալսարանում: Գրել է պոեմներ, որոնք յայտն են տեսել Փարիզի երիտասարդական մի շարք ամսագրերում (ս'իլյանը, շճանապարհը, շնիքնիկն, և այլն): Բանաստեղծի անգրանիկ գործերն արժանացել են լինել ընդունելութեան և բարձր գնահատականի: Նա իրեն նուիրել է Փրանսիական ժապիտիկ, գարնայի է դիտարկում առ հիմնագրից երիտասարդական բարսեխոս գրական գործի, որի մանիֆեստը ինքն է շարագրել:

Փրանսիայի յայտնի գրականագէտ Թ. Շուայիէն Վաստրազմում գտնուած քանասնդգծների անթուղգիտայի շարքորդ հասարակ Արմեն Դորեանի մասին գրել է: «Սիվիլիզմի հակադասմարտից ի վեր մեզանում չէին տեսել նմանօրինակ խանգավանութիւններ, այսինքն բարձր պատուախնդրութիւններ, այսինքն բարձր երազանքներ: Արմեն Դորեանը կոչ էր անում զենք բարձրացնել ցուցամունքի և մոլայամուկների դէմ...»:

Արմեն Դորեանը հետևորդն էր Վիկտոր Հիւկայի և Գոյ Վերլէնի բանաստեղծական անուններին և անհշուտ էր ջնարկարութեան մէջ մացեղ արեւելեան անհասական խառնուածք, յարմարեցնելով այն արդիականութեան պահանջներին:

Վիկտոր Հիւկային նուիրուած ներքոյը նրա ջնարկարութեան լուսագրի էջերից է և ընկերացուել է 1912թ. Փետրուար 5ին, Հիւկայի ասածը կազմակերպուած յորհանուական հանգիստութեան ժամանակ:

1914ին Արմեն Դորեանը մեկնում է Կ. Պոլսի և պատերազմը արդիւյ է դուռում Փարիզ վերադառնալու: Նա, ի թիւս միւս հայ մասնաւորականների, Թուրքական կառավարութեան կողմից աքաղաղուած է Միջագետքի և Սիրիայի ամենահետադարձագանները և սպանուած համապարհին, զրշակից հայրենակիցների հետ կիսելով այդ նոր Դողգոթայի քոչոր տառապանքները:

Ա. Դորեանը արդից ցատկարէն կարճ՝ ընդամէնը 23 տարի: Նրա գրած պոեմներից մի քանիսը կարտիւն ամփոփել է մի գրքում և հրատարակել Աւստրիայի Լինզ քաղաքում: Ինչպէս Արշակ Զոպանեանն է ասում՝ «Նա իր գծած ուղիով վստասօրէն գնացած կը լինէր շատ անլի հեռու, եթէ փշրուած շիճէր շիւտաքի օւժի» կողմից:

Ստորեւ ներկայացնում ենք Արմեն Դորեանի ներքոյը՝ նուիրուած Վիկտոր Հիւկային, Փրանսերէնից կատարած մեր թարգմանութեամբ:

ԱՆՍՏԱ ԴՈՐՈՒՄԱՆԵԱՆ

## ՆԵՐՐՈՂ ԱՌ ՎԻԿՏՈՐ ՀԻԻԿՈ

Վիկտոր Հիւկօ, ներողութիւն... ներողութիւն, եթէ թափօրը  
Քո հիացողների՝ մի սքապիզձ ճայնով  
Համարձակուում է խոսվել լուսութիւնը այս սեմի,  
Որտեղ դու նրանց բարեհաճում ես ընդունել հայրաբար:  
digitised by A.R.A.R.®

Նրանց, որոնց դու այսպէս ընդունում ես քո գեղեցիկ  
ուխտատեղին՝

Գալիս եմ համբուրելու քո պատանքը սպիտակ  
Եւ վերծանելու այն բառերը, որ քանդակել է ժամանակը  
Իր անշոշափելի մատով, քաղցր ու դանդաղ նշաններով:

Բաց արա մի պահ քո այնքան քաղցր ու վնիտ աչքերը  
Եւ պայծառացրու քո կնիքներով ծակուած հակատը,  
Բարեհաճիր ունկնդրել մեր սրտաբուխ խօսքերը:  
Ով դո՛ւ, որ իմացար ասել բոլորին՝ ազգերին,  
Ծագկին, մանկանը, թռչունին, ալիքին,  
Արեւելին, Արեւմուտին, աստղին, որին խուզարկու է մեր  
աչքը,

Որը բացում էր այն ժամանակ, երբ փակում էր ինքը:  
Օ՜ ահանջ դիր ուրեմն այս խոնարհ գրոյցին...

Մեծերի մէջ դու եզար մեծ, վսեմ ու օգոստոսափառ,  
Դու եզար հսկայական կազմի թոյլ թփի կողմին,  
Անգապելի՛ մրրիկ, դու խարազանեցիք մեծերին,  
Քո գայրացած յորձանքով դու անիծեցիր բռնակալներին,  
Ովկիանո՛ս, դու գարկում էիր անյաղք ալիքներով  
Այն գոռոզ ժայռերին, որ ընտրել էիր որպէս թիրախ,  
Դու Արեւելի քաղցր ու պայծառ արեւից վերցնում էիր  
Մի խուրձ լուսաշող ճառագայթներ ու կայծակներ,  
Որպէսզի կազմես դրանցով, ո՛վ տիտան, ո՛վ նոր Պրոմէթէոս,  
Ջահ տառապողի համար եւ հաւատ՝ անաստուածի...  
Դու բեւեռեցիր քո ջահը հրաբուխների խառնարաններին,  
Որպէսզի համարձակ եւ յանդուգն մակոյկը,  
Որը մոլորուել է իր ուզուց եւ զնում է դէպի անդունդ,  
Դէպի ստոյգ ու անխուսափելի մահ,  
Որպէս փարոս ունենայ քո պայծառ լոյսը...

Կռիւր քեզ սպասում էր, դու համակ կրակ էիր,  
Եւ արեւի ցոլիք բոցավառում էր քո կապտոյտ աչքերը...

Բայց, աւա՛ղ, ասուած է, թէ գնդակներն ու  
գնդակոծութիւնները

Զարկելու են նրան, ով դեկավարում է մարտը...  
Մրրիկը յարձակուեց ախորի քարածայրի վրայ,  
Որտեղ մի գիշատիչ անգղ կեռ ու գարշելի կտուցով,  
Ո՛վ յանդուգն նաաստի՛ բնութեան դէմ ճակատող,  
Յարձակուեց քո կրծքի վրայ եւ քեզ ենթարկեց  
տանջանքներին...



Արծաթավարս սարեր՝ ամպերով պսակուած  
 Նայում էին, դիտում, ողջունում քո գալը:  
 Երբ քո պայծառ աչքերն ընդմիջտ փակում էին,  
 Աւա՛ղ, մենք մեր շուրջն ունեցանք լոյսի պակաս:

Ո՛վ դո՛ւ, պայծառ երեկոյ կորած արշալոյսների,  
 Միախառն լոյս, աստղ, լուսապսակ,  
 Անտիկ սֆինքս՝ լուս անապատում հանգչող  
 Բուրգ, որ դիպչում է երկնի կապոյտ գագաթին,  
 Տապան ամէն մի ջրհեղեղի, որին ոչ մի ալիք չի խորտակի,  
 Արծանի մոյմֆան բարձր, որքան կովկասը, մի  
 պատուանդանի,  
 Ա՛խ, թող որ քո մէջ ամէն մրրիկից հեռու  
 Մենք փնտռենք ապաստան, աշխարհ, երկնակամար:

ԱՐՄԷՆ ԴՈՐԵԱՆ

Քովի սիւնակին  
 Վրայ երեւոյ  
 Վիքթոր Հիւկոյի  
 Գծանկարը  
 Ֆարժն է  
 Պոլսոյ Պերպլեթան վարժարանի  
 Ուսանող (1904)  
 Ռուբեն Սեւակի





Որչա՞մ էինք Համաստեղի մահուան 20ամ-  
 եակը նշել հոգին դարձած ամսոյն, 1986 Նոյեմ-  
 բերին, բայց Մեծարկնցի՞ն նախորում բացառիկը  
 նախ և ապա մէկտեղուած նիւթերուն բնօրը  
 պատճառ դարձան, որ ոգեկաշու՞ն կատարենք  
 այս տարի և ա՛յն ամսոյն՝ իրեն հետ ու իր  
 անուճով տարեգարծային մեր տուրքը ևս մա-  
 տուցանելու համար մտաւտակ սուրբերուն...

Համաստեղ իր մարթին վրայ չգզաց մեր «Մեծ  
 ցաւը», բայց հոգին անբնդհատ կատաց անոր  
 անդրադարձներուն տակ և նոյն պարուժով  
 գրեց պարզութեամբ, խորութեամբ և ճարդկայ-  
 նութեամ պատպալով կենուած ժամի մը անբա-  
 ռամ կտորանք, որանց՞է մէկը ինչ անգին վե-  
 բըստին ուշադրութեան յանձնուած շնորհի՞ք այն  
 արհուտեղ նշմարիտ դուրս - գործաց մըն է:

Վերաբարմացման համար՝ ընթերցողին կը  
 ներկայացնենք նաև կարգ մը նոր և կարգ մը  
 էին ու բարբաճին անմտնօր մնացած համա-  
 տեղեան բանկ վկայութիւններ:

Ն  
 Գ  
 Տ  
 Ո  
 Պ  
 Ն  
 Ն



Համաստեղի Հերոսները գրեթէ միշտ թշուառներն են, կեանքէն մերժուածները եւ բնաանիքէն, հասարակութենէն եւ նոյնիսկ բնութենէն հալածուածները, որոնց դժբախտութեան պատճառը ոչ թէ իրենց չարութիւնն է կամ սեքային մղումները, այլ, ընդհակառակն, մեծ մասամբ իրենց ծայրայեղ բարութիւնը, հեղուցութիւնը, բանաստեղծական հակումներն ու բարոյական առաքինութիւնները: Համաստեղի կերամած հոգիներու մէջ խորը թաքնուած են բարոյական կամ զեղազիտական (էւրեստիկ) ձգտումներ: Բոլորն ալ խնդն, սկար եւ նոյնիսկ ողորմելի մարդիկ են, որոնք կա՛մ անխօս անմնութեամբ, յանաբ կենդանիներու Համակերպութեամբ, կը տանին իրենց խաչը այս բերս ու անողոք կեանքի առաջակալի ճամբաներուն վրայ, եւ կամ կ'ըմբոստանան ու փորձ կ'ընեն շեղելու այդ ճամբաներէն եւ զո՛ւ կ'երթան իրենց ուժերէն վեր եղող մեծ սէրերուն եւ վեհագոյն մղումներուն:

Իրենց ընտանեկան կամ ընկերային զիրքով Համաստեղի Հերոսները կեանքի ամենատարին աստիճաններու վրայ կը դանտին գրեթէ միշտ, բայց իրենց հոգեկան թռիչքներով, անսովոր յոյզերով եւ որոնումներով անոնք բարձր են իրենց շքնապատէն, միջակութիւն ներկայացնող հասարակական դասերու անէն, — զանգըւածէ մը, որ ամբողջովին անմաստ է կ'ըլլայ երկրային ու չափազանց երկրային հոգիներու, կ'ընդունի կեանքը, ինչպէ՛ս որ կայ, եւ չ'իյնար շահ չբերող երազներու ետեւէ, չի մաշեր ինքզինքը հեռաւոր, անմատչելի բաներու խելայեղ կարօտով: Համաստեղի Հերոսները ձուկերու տեղ աստղեր կ'որսան, դիւզի սովորական աշխատանքներու եւ վայելչներու փոխարէն աղաւաններու ետեւէ կը վազեն, մարդկային էակներու տեղ անասուններ կը սիրեն ու անոնցմէ ամէնէն աւելի կը սիրին: Իրենց հոգիներուն մէջ ցաւազինութիւն կը կրեն բարութեան, զեղեցկութեան, սպնուութեան եւ սիրոյ աստուածային կայծեր, որոնք չեն թոյլ տար իրենց հաշտուելու իրենց շքնապատի սովորա-



Համաստեղ եւ Ռ. Գարբիման

կան, բթացնող կեանքին ու ճշմարտութեան հետ եւ միշտ կը մղեն զանոնք դէպի արտասովոր, հեռաւոր, անմատչելի եւ վեհ բաները: Մեծ մասամբ, իրենց տարապայման տեղեր ու մերու պատճառով, անոնք չարաչար կը ատուպին ու կը կորսուին, որովհետեւ անկարող են ունենալ նոյնիսկ այն, ինչ որ շատ մատչելի եւ սովորական է բազմութեան Համար: Իրենց սրտերուն մէջ կը կրեն սրբութիւն մը, որմէ զուրկ են ուրիշները եւ որ կը խանդաբեզանոնք սպրիլ ու վայելի կեանքը ուրիշներու պէս:

Համաստեղ չ'իտէլայականացներ իր «Հերոսները», չի չափազանցեր ո՛չ անոնց առաքինութիւնները եւ ոչ ալ անոնց թեթութիւնները: Նի բանաստեղծի կամ փաստարանի, այլ կը ներկայացնէ կեանքը եւ մարդիկ իրականութեան հասարակած, զմայելի բնազգով մը:

ՌՈՒԲԷՆ ԴԱՐԲԵՆԵԱՆ

(Հատուած)  
A.R.A.R. @

ՀԱՄԱՍՍԵՂ

**ԵՐԵՆԷԿ ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ**

Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆԻՆ

— Էս փայլաբերկնացիք ես, որ անցած ասին աչքս մխուր, հա՞: Ես չ'պի մեռնիմ, Մխութ, Մխութ. քեզ պէս ժողովուրդը թափառները որ լթաղեմ...

Կը պրոտար, կը տուտար Մնուչ պահին՝ իր տանիքէն փրուած լաթերը վար աւնկում:

Մխութն՝ կերակուրի խոնջային լուրջ դեռ նոր նստած՝ կը լսէր Մնուչին ձայնը, կը ջղայնանար, գգալը վար կը գնէր ու բարձր ձայնով կը խօսէր ինքնիքն.

— Տէր Աստուած, դուք սապր ու լուանք տառ: Մասանան կ'ըսէ...

— Չեմ, չեմ ուզեր որ թոռներդ էս իմ տանիքիս կողմը անցնին, էս անգերը փորփրեն: Հեզ մըլ տեսնեմ՝ ծնկները կը կոտորեմ, — կը շարունակէր Մնուչ:

— Հէ՛յ ջատա, ջատա, ա՛յ Հերիք եղաւ. որ ելլեմ... (Մխութն կ'ելլէր) որ կնիկմարդէ վար պի մնամ՝ ալ ի՞նչ բանի համար էս պիտեղը, — կը խօսէր ինքնիքն ձեռքին փայլաբերկնացիք:

Մնուչ ալ իր կարգին կոշիկին քննը կը քաշէր... Թերեւս նորէն սկսէր երկու ձեռքու կոխուր, եթէ սովորականին պէս Մխութին աղան չմիջամտէր:

Մխութ ու Մնուչ կուրսը նոր չէր: Ուզեղ երեք տարի էր: Օր չէր անցնէր, որ շտապային, շնայնոյէին, շարուային իրարու: Ըլլար այդ տանիքը կամ եկեղեցիին նամբան: Իրացիները շատ բան չէին գիտեր. շատ բան չէր գիտեր նաև Մխութին աղան՝ Արուսթը:

• •

Այն օրերուն Մխութն սուգի մէջ էր. հազիւ տասնհինգ օր կար, որ թագեր էին իր միակ ընկերը, կինը: Մխութի համար շատ գոբախտ կորուստ էր, որովհետեւ իր կնոջ, Աննիկին հետ մէկ բարձի վրայ ձերայցիք էր:

Ի՛հ, ի՛նչ լաւ օրեր էին: Ամառները, երբ գիւղն ամբողջ կայի ալյառանքին լծուած էր, երկու ձեռքը զրան սեմին վրայ կը նստէին պահ մը:

Երբ արևը իրենց վրայ զար ու դիմացի կիսապատին իյնար, Մխութ ու Աննիկ այս անգամ իրենց թոռներուն հետ ցածկեկ տանիքը կ'ելլէին ու՝ արեւոտ պատին կոթնած՝ կը նստէին հանդարտ:

Անոնք հանդարտ էին ու լուռ, սակայն անոնց շուրջ, միջոցին մէջ, կը յորդէր գիւղին կնանքն ու առատութիւնը:

Թոռները տանիքին վրայ փայտերով մի կը խաղային: Հեռուէն կը լսուէր ազմիտ ալյառանքը կաշերուն: Միջօրէին, երբ ստուերները սօթառէին, շատ անգամ երկու ձեռքու վերելն կ'անցնէին մեղուները խուռնախիտ, իրենց ետև. ձգելով հազարաւոր լարերով հսկայ նուազարանի մը խուլ ձայնը:

Երկու ձեռքը, որպէս հովանի իրենց ձեռքերը ճակատներուն վրայ բռնած, մեղուներու անցքին ի զուր կը փորձէին հետեւիլ: Անոնց համար կա-

բեւոր էր դիտնայլ, թէ ո՞ր ծառի կամ ո՞ր այգիի մէջ մեղունները պարս տուին:  
 — Տեսա՞ր որ կողմը անցան,— կը հարցնէր Մխտին:  
 — Ես ի՞նչ տեսնեմ, տեսչէն, ա՛յ ծեր եմ, ծե՛ր, աչքերս շատ չեն գտտեր:  
 միայն շուքի պէս բան մը տեսայ,— կը խօսէր Աննիկ:  
 — Ինձ էնպէս կու գայ, թէ Մարկոսենց ու Ռիներուն վրայ պարս եկան:  
 — Ես էնոնց ձէնը լսեցի միայն:  
 — Մինասենց էզուն մէջ պարս տուին,— ձայն կու տար թռռնիկներէն  
 մէկը, որոնք նոյնպէս իրենց խաղերէն դադարած կը դիտէին Հետաքրքրու—  
 թեամբ:

— Հա՞, էգ պէ՞ս: Կ'ներեի Արեւիկենց մեղուններն են: Դե՛հ, վազէ, իմ  
 ասլան թռռնիկ,— կը խօսէր Մխտին— գնա՛ Արեւիկենց կալը: Հիմա էնոնց տուելը  
 մարդ չկայ: բանի, գործի ատեն է, ի՞նչ պի գիտնան: Գնա՛ ըսէ, որ մեր մեղու—  
 ները պարս տուին Մինասենց էգին: Թո՛ղ երթան ատենն, քանի չեն Հետացեր:  
 Թռռնիքը, բոլորը մէկ, կը վազէին, թարվառ Հաւերը փախցնելով, թէ  
 իրենցմէ ո՞րը պիտի իլէ լուր տալու ատաղջութիւնը:

Ամառ մամանակ, երբ դիւղին մէջ մարդ չկար, երկու ծերերու աշխա—  
 տանքներէն մէկը կ'ըլլար այդ: Այդ աշխատանքէն յետոյ երկու ծերերը նորէն  
 կը նստէին քով քովի: Հեղ մ'այ տեսնես՝ երկու աքլորներ, կրա կրա կտու ցնին  
 զեանին ծեծելով իրարու կը մօտենային ու կուտի կը բռնուէին հիշդ Մխտի  
 ձևնափայտին քով:

Մխտի, երբ կը տեսնէր աքլորներու կռուրտուքը, իր մէջ կը զգար  
 հրճուածք մը, որ հեթանոսական էր: Թող կու տար, որ կուտէին, շատ անգամ  
 ինք կուտ կը նետէր, իրարու մօտ բերելով կը կուտեցնէր: Այդ պահուն էր, որ  
 Մխտի կատակ մը կը փորձէր Աննիկին Հետ, իր շարժումն ծուխը կնոջ երեսին կը  
 փչէր, թեւք անոր վզիէ շուրջ կը փաթթէր, լաշակին ձեւը կ'աւարէր, եւ կամ կապ  
 մը երկնցնելով, կը խօսէր:

— Դե՛հ, Աննիկ, փորձէ կտրել էս կապը: Տեսնեմ՝ ու՛ժդ ան՞գն է:  
 Աննիկ կը խնդար իր նիւար ծծօտով ու կապոյտ լինտերով: Կ'առնէր  
 կապը եւ ի գուր կը փորձէր կտրել, մինչ աքլորները կը կուտէին՝ յորինելով  
 նկար մը նաւասարդեան Հին օրերու:

Օր մը սակայն եկեղեցիին ճամբան, Աննիկ ըսաւ Մխտի, թէ եկեղեցիին  
 մէջ, երկրպագութիւն ըրած պահուն, կոնակը ցաւ մը շուրջուեցաւ: Ու Աննիկ  
 ուղիղ անկողին գնաց: Երեք օր պտուկիլ յետոյ մեռաւ Հանգիստ մահով մը:

Մխտի ինքզինք միւսակ զգաց այն ատեն, երբ գերեզմանէն վերադարձին  
 տեսաւ, որ իր հարսը ծայած — վերցուցած է մեռելին անկողինը:  
 Մխտի որքան կը բաղձար, որ միասին մեռնէին, որովհետեւ միասին ապ—  
 րած էին բարի ու շար օրեր:

Ամիս մը վերջ Մխտի մտաբան իր կիսը այնպէս, ինչպէս կը մտաբանին բո—  
 չոր մեռելիները: Սակայն Մխտի իր միւսակութիւնը չկրցաւ մոռնայլ:

Այս անգամ, առանձին տանիք կ'ըլլէր, աքլորները կը կուտեցնէր, թռռ—  
 ներուն Հետ կը կատակէր, կալի աղմկոտ աշխատանքին կ'ուսկնդէր, սակայն  
 միւսակ էր, միւսակ: Մխտի օր մը տեսաւ, որ գրացի Մնուշը իր լաթերը փռելու  
 համար իրենց տանիքէն կապ մը կը կապէր:

— Կեցի՛ր, Մնուշ, էգ պէս շուրջաւ Մխտի:— Կեցի՛ր, վարէն եր—  
 կաթէ հալիւնը բերեմ: Էնպէս լաւ է:

Մխտի բերաւ երկաթէ օղակը, կապը ինք անցուց, միւս ծայրը սիւնի մը  
 Հաստատեց ու օգնեց, որ Մնուշ լաթերը փռէ:

Երեկոյին, երբ Մնուշ լաթերը վար կ'առնէր, Մխտի մօտեցաւ նորէն ու  
 ուղեց օգնել: Աշխատանք մը, որ իր կեանքին մէջ ցոյց տուած չէր զբացիմե—  
 բուն, ոչ իսկ իր կնոջ: Մնուշ պարմացաւ լուռ:

Ու ալ ամէն օր Մխիթ' կոնակը պատին կոթնցուցած կը սպասէր, որ Մնուշ տանիք կլլէ: Մխիթ ինքն ալ չէր դիտեր, թէ ինչո՞ւ այդ սպասուածը: Զէ՞ որ ծեր էին ինք եւ Մնուշ:

Մխիթ եւ Մնուշ երկար աստիճանաբար դրացիներն էին: Մնուշ վաղուց կորսնցուցած էր իր էրիկը. այժմ, մօտ յիսուն տարեկան, Մխիթնց պատկից, իր բրիչակը քաշուած, ապրելու համար ջայր կը մասնէր, հաց կ'եփէր ու իրիկուն-տառաւօտ եկեղեցի կ'երթար:

Օր մըն ալ հաց եփած տեղէն Մնուշ տանիք կլլած էր ու ձայնը ձգած ճո՛ւ-ճո՛ւ-ճո՛ւ, հաւերը կը կանչէր:

Մխիթն հոն՝ պատին կոթնած՝ իր համբիշը կը քաշէր: Այդ օրը Մնուշին ձայնը եկեղեցիին մէջ երգուած սողմտտին շափ տնուշ եկաւ, մասնաւանդ որ Մնուշ՝ հացեփոց լաթերուն մէջ փաթթուած՝ աւելի գէր կ'երեւէր: Երեսը թոնիքի բարկ կրակէն կարճրած, ճակատին, երեսին վրայ քրտինք կը պտղէր:

— Ի՞նչ կ'ընես, Մնուշ, հաւե՞րը կը կանչես: Հա, ծեր հաւերէն մէկը եդ բակը անցաւ,— խօսեցաւ Մխիթ, ձայնը երեքցնելով:

Մնուշ Մխիթնց տանիքն անցաւ ու, բակին հաւերը կանչելու համար, նորէն իր ձայնը ձգեց:

— Հա՞ց ես եփեր, Մնուշ: Եկ, նստէ, հէր օրհնած, աշխարհը մեռնիլ կայ,— շարունակեց Մխիթն:

— Է՛հ, ի՞նչ ընենք, քանի ուժ կայ՝ ապրուստնիս ճարենք:  
— Որ բանի պէտք ունիս, ինձի բռէ, Մնուշ: Խիբը դրացիներ ենք:

Եւ աւելի մօտենալով ու ձեռքը պիտերուն ասնելով, ըսաւ.

— Էս տարի մեր կալը լաւ էր: Թէ որ ցորենի պէտք ունիս, մի քանի պարկ ցորեն ձեր տունը կը ձգեմ. թող ազատ, Արուսթը չզրտնայ:

Մնուշ կասկածեցաւ:

Չորս կողմերէն, բակէն, բարձր ասնիքէն, սանդուխներէն հաւերը եկած-հաւաքուած էին Մխիթի եւ Մնուշի շուրջ: Փոքրիկ կենդանիները վիզեր-նին անկած կը թրվոսային եւ ի դուր կը սպասէին անհամբեր, որ Մնուշ իրենց կուտ ցանէր: Բուրբուրիտն անգիտակ այն սղորդուածներն, որ պիտի պայթէր անձրեւով լցի ամպի մը պէս: Մխիթ յարձար առիթը դատած էր իր ցանկութիւնը յայտնելու: Գիւղն ամբողջ աշխատանքի մէջ էր: Թոռները վար, փողոց դրկած էր: Ցածկեկ տանիքին վրայ հաւերէն դատ ոչ ոք կար:

— Հա, փա՛ռք Աստուծոյ, ինձի պէս ուժդ տեղն է,— շարունակեց Մխիթն, աչքերը խլրցնելով:

— Երեսդ ալ, ըսես, Մնուշ, վառվռան վարդ է դարձեր:  
Մնուշին կասկածը հիշող էր:

Երկինքը ինչո՞ւ չէր փլիք, արեւն ինչո՞ւ չէր խաւարեր...

Մնուշ, հակառակ որ հայհոյող, պոռպուան կին էր, լռեց: Է՛հ, ի՞նչ պիտի ըսեն, երբ դրացիները իմանան: Ու հերոսո՞՛ սանդուխներէն վար իջաւ, իր ետեւ ձգելով հաւերու երամ մը:

Մխիթն յանցաւոր աշակերտի մը պէս պահ մը զղջացած՝ մնաց իր կանչ-նած տեղը, չրթներուն տալով սուշելու ձեւ:

Մխիթն ինքն ալ գիտէր, որ այդ կատակը ծերերու համար չէ: Է՛հ, ի՞նչ կ'ըլար, դրացիներ էին, կրնային քով քովի նստիլ. մինակութիւնը չէր քաշ-ւեր...

Յաջորդ օրը Մխիթ նորէն իր սովորական տեղն էր, արեւոտ պատին ներքեւ: Մնուշն ալ երգիքին փայտը շտկելու համար տանիք կլաւ, պոռպոսաց, բարկացաւ ու իր տանիքի սահմաններէն անդին քշեց Մխիթին թոռները, անոնց ետեւէն նետելով իր կօշիկը, որ քիչ մնաց Մխիթի գլխին վրայ իյնար:

Մխիթ դիտեցաւ պատճառը: Գրեթէ ջղայնացած՝ անորոշ բաներ մը

մըթմրթաց: Ի՞նչ պիտի ըսեն, եթէ դրացիները իմանան: Չգաց, որ յանցաւորը ինքն էր ու լռեց շատ դժուարութիւնով:

Աւրիչ որ մը Մխսիկնց աքաղաղը Մնուշին կիսապատին վրայ թառեցաւ, թուեց թափահարեց, վիզը երկարեց ու սկսաւ երգել: Կո՛ւ կո՛ւ հազիւ ըրած էր, երբ Մնուշ վրայ հասաւ, իր պատէն վար քլեց աքաղաղը, ձայնը կէս խեղդեւումով:

Մխսի կը տեսնէր այս բոլորը: Ինչպէ՞ս համբերէր: Այ ի՞նչ բանի համար էին իր պիտիները:

— Ինչո՞ւ աքլորը վար ձգեցիր,— պոռաց Մխսին՝ ձեռքը—տաքը դող կլած:

— Ինչո՞ւ պատիւ վրայ կը թառի:

— Պիտի թառի:

— Չպիտի թառի. որ թառի՝ դուրսը կը կտրեմ:

— Ես ըլ ջու ծնկներդ կը ջարդեմ:

Թերեւս կոխը աւելի տաքնար, եթէ դրացիները վրայ չհասնէին:

— Աքլորը պատին վրայ է թառեր. ի՞նչ կ'ըլլայ եղեր,— կը խօսէին դրացիները, ի հարկէ ոչինչ գիտնալով:

Աւրիչ անգամ Մխսի կը թեկադրէր իր թոռներուն, որ Մնուշին երգիչէն վար քար ձգեն, ցուխը քակեն:

Մնուշ կը տառաւար, կ'անիծէր, տանիք կ'ելլէր, Մղսիին թոռներուն ետեւէն կը վազէր: Եւ դրացիները նորէն կը լսէին անոնց կոխն ու հայհոյութիւնը:

Մխսիի եւ Մնուշի տակուցութիւնը հետզհետէ խորացաւ: Մխսի նոյնիսկ չէր ուզեր, որ Մնուշին փռած լաթներուն շուքը իրենց տանիքին վրայ իջնար: Վա՛յ այն օրուան, որ Մնուշին մէկ հաւը իրենց տանիքին կողմն անցնէր:

Ի՞նչ լաւ օրեր էին. երկու դրացի աքաղաղները, հակառակ իրենց անպատեհան կոչումին, գրեթէ միշտ հալտ էին իրարու հետ:

Է՛հ, մարդիկ զարմանելի են. ինչպէ՞ս հաւերու հաշիներուն կը թափանցեն, գիշեր—ցերեկ իրենց քայլերը կը հսկեն,— կը մտածէր Մնուշինց աքաղաղը. որովհետեւ Մխսի իր ձեռքի փայտը կը նետէր ամէն անգամ, երբ աքաղաղն ուզէր Մխսիինց պատին տակ կտկտացող նախուն հաւին ժօտենալ:

Մխսի իր ձեռնափայտով Մնուշին հաւերուն կէտը հալմանդամ գարծուցած էր:

Անձրեւոտ երեկոյ մը, Մնուշ սուտն մը ձգած վրան, ասնիք էլաւ՝ տեսնելու, թէ կտուրն ինչո՞ւ կը կաթի: Տեսաւ, որ ճոթոնը թախտած էր, այն ճոթոնը, ուրկէ երկու տանիքներու ջուրը վար կը վազէր:

Անձրեւոտ, այդ աղմկոտ ասրափին մէջ Մխսի ինչպէ՞ս իմացաւ Մնուշին ոտնաձայնը: Վեր էլաւ ու տեսաւ, որ ճոթոնը իր դրած տեղը չէր եւ, նորէն իրենց տանիքին կողմը տեղաւորելով, վար իջաւ:

Մնուշ նկատեց, որ հազիւ կաթիլը դադրած էր, նորէն սկսաւ:

Նորէն վեր էլաւ, Մխսին ալ իր տեղէն: Աւ ցուիքին վրայ իրարու հանդիպեցան:

— Էդ ճոթոնը շտառաւ,— խօսեցաւ Մխսի՝ բարկացած:

— Հէ՛, անասառու՛ծ, դժօխքի՛ կրակ, ընկողինս ջուրերու մէջ մնաց,— ձայն տուաւ Մնուշ մութին մէջէն:

— Էս ճոթոնին տեղը էստեղ է, էստեղ, հասկցա՛ր,— կը խօսէր Մխսի:

— Երսուն ասրի է էս տունն եմ, ես էս ճոթոնը հոս եմ տեսեր:

— Է՛հ, դուն ի՞նչ գիտես, քատո՛ւ, ես իմ պապիս օրով կը յիշեմ, որ էս ճոթոնը հոս դնելու իրաւունք չունէր: Թուղթ, կառավարութիւն կայ:

Մխսի եւ Մնուշ մութին, անձրեւին մէջ կը պորպուային:

— Որ բունեմ՝ ցուիբէն վար կը նետեմ,— կը պոռար Մխսին:  
Դրացիները կը հաւաքուէին, կը միջամտէին: Մխսի եւ Մնուշ զրգրաւով  
վար կ'իջնային, իրենց նսեւ ձգելով աղմուկն անձրեւին:

Այնու ամէն անձրեւի Մխսի ու Մնուշ իրար կը հսկէին, իրարու ոտնա-  
ձայն կ'առնէին, կ'ելլէին, կը պոռպոսային: Դրացիները ձանձրացած էին:

Գիշեր մը, սկսած էր միայրագ աւարափ մը անձրեւի: Գարանքներուն  
դռները կը բացուէին կամաց ու կը գոցուէին մեր: Ամպը լեռներու ուժգնու-  
թիւնով կը պայթէր: Մերթ ընդ մերթ կայծակն էր, որ մթնոթեան մէջ կը ճեղ-  
քէր: Փողոցներուն մէջ, հովը ազմկու թիթեղէ կտոր մը կը զլաորէր եւ կամ  
տանիքներէն զլուած հին վերարկու մը էր թեւերով քարտիններուն կը փաթ-  
թըւէր:

Այդ ահաւոր գիշերին Մխսի եւ Մնուշ, երկու ուրուականներու նման,  
ցուիբին վրայ իրար կը քաշէին:

— Էս ճոթոնը հո՞ն պի ըլլայ:

— Հո՞ն չպի ըլլայ:

— Հո՞ն պի ըլլայ:

Հեղ մըն ալ, չգիտես, ինչպէ՞ս եղաւ, Մխսին ոտքը սահեցաւ ու քըփ,  
ցուիբէն վար ինկաւ:

Տանիքը բարձր չէր, սակայն իր ծեւր սկզբները ինչպէ՞ս գիժանային:

Մխսին ինկաւ անկողին:

Մխսի իր մեռնելը չէր հոգար: Ե՛հ, որո՞ւ հասկցնես, թէ իր ոտքը սահե-  
ցաւ, ալլապէս կ'իկամարզէ վար մնացող չէր: Մխսի ամբողջ երեք ամիս անկո-  
ղին մնաց: Իր կոնսակը չէր կրնար շարժել, սկզբները իրարմէ կը փրթէին կար-  
ծես:

Դրացիները կ'այցելէին Մխսին: Կը պատմէր, որ էդ ճոթոնը իր հօր  
ժամանակ իրենց տանիքին կողմը եղած է: Եթէ ուզէ, նոյնիսկ փողոցին վրայ  
բացուած Մնուշենց տան երգիքն ալ կը գոցէ: Թուղթ, կառավարութիւն կայ:

Դրացիներու շարքին սր մըն ալ գիւղի՝ քահանան այցելեց:

— Օրհնած, գալաւձը ծնունդ է. էս լաւ բան չէ, ձեզ պէս ծերերուն վայել  
բան չէ. ե՛կ, հաշտեցնենք:

— Տէրպապ, գերեզմանին վրայ մէկ թիղ խոտ բուսնի՝ նորէն ես չեմ  
հաշտուիր: Վա՛յ, կողո... դու չգիտես էդ կնիկը, Տէրպապ. ողորմած հոգի էրի-  
կը էդ կնկան սկսելով մեռաւ: Վա՛յ, սկզբներս... քերս է, Տէրպապ, թէրս:  
Ըսէ՛ տեսնեմ, դուն գիր, նարեկ գիտցող մարդ ես:

Կը փորձէ նստիլ, սակայն սկզբներու ցաւէն զլուխը նորէն բարձի վրայ  
կը դնէ:

— Ըսէ՛ տեսնեմ, ինք մինուհար կնիկ, իրեն բուխերիկէն էդքան մուխ  
հանելու ի՛նչ պէտք ունի: Թերտութիւն է, Տէրպապ, թերտութիւն: Հեղ մը տես-  
նես՝ էդ մեր տանիքը ալիւթիւն իրեն մուխով ու հաւերուն ծրտով է լեցուն: Հա,  
հա, մեր հաւերը ատանկ բան չեն ընէր: Վա՛յ, մէջքս... Ե՛հ, որ էս ընկողնէս ել-  
լեմ, ես գիտեմ ընելիքս: Էն գիտէ, որ ես ընկողնէն լիմ կրնար ելլել, վիրտա-  
վիրա մեր տանիքին վրայէն կ'անցնի, էնպէս կ'անցնի, որ կ'ըսես առաստաղը  
վար պիտի գայ: Հա, հա, ինքն է, ուրիշ մարդ չէ: Ո՞րը ըսեմ, Տէրպապ. ես էսպէս  
կը մեռնիմ. էդ կնկան հետ չեմ հաշտուիր:

Քահանան ի գուր յորդորեց. Հին կտակարանէն, Թուղթ Առաքելոցէն  
վկայութիւններ ի գուր բերաւ. Մխսին հաշտուող մարդ չէր, նոյնիսկ եթէ Աստ-  
ուած վեր իջնէր իր կրակէ աչքերով:

Մխսի թշկուելու համար նոր մորթուած այծի փոսի մէջ ալլուեցաւ,  
մէջքը, կոնակը ճիպար ձգեց ու վերջապէս կլաւ անկողնէն:  
Վա՛յ Մնուշի գլխին...

Մնունդի օրն էր: Մխտի իմացաւ, որ Մնուչ եկեղեցի դացեր, հաղորդու-  
թիւն առեր էր:

Մխտի ամբողջ երկու տարի ուսը եկեղեցիէն ներս չդրաւ, քահանա-  
յին հետ յիստեցաւ:

— Սուա է, Տէրպապ, էդ քու եկեղեցիդ, էդ քու սուրբերդ սո՛ւա են: Աստուած որ եկեղեցիին մէջ չպատեց էդ կինը, էդ հաղորդութիւն տուած  
ատեն էդ քու ձեռքերդ որ չքաշեց, ալ ի՞նչ բանի հաւատամ: Եկեղեցի չիմ գար,  
կը մեռնիմ էպէս: Է՛հ, Աստուած, որ ինձմէ հաշիւ հարցնէ, ես իմ հաշիւիս  
տէրն եմ, Տէրպապ, գիտցած ըլլաս,— Մխտի խտեցաւ քահանային, երբ որ մը  
քահանան ուզեց եկեղեցի տանիլ:

Անցաւ երեք տարի:

Վրայ հասան անդահանութեան օրերը: Գիւղացիները վաղուց օտարա-  
փի մը հոսը առեր էին: Իրենց երազներուն մէջ մարդաղէլ, հարսնիք տեսած  
էին:

Կէս գիշերին՝ տակաւին Մարկոսեաց աքաղաղը իր տաղին մէջը շնորհ  
դուները թակուեցան:

Գիւղին մէջ ինկաւ շուարում մը: Սայլերը լծուեցան: Ախոտի կենդանի-  
ներուն մէջ ինկաւ օտարոտի բառաչ ու անհանդուտութիւն: Մէկն իր պղնձէ  
պարսը շուկած էր, ուրիշ մը՝ տանիքէն անկողինը վար կը ձգէր, մայր մը՝ հա-  
ցի ծրարին հետ իր կուսակին կապած էր մատղաւ մանուկը, աւելի ուրիշ մը՝ իր  
ձեռքին տակ ափէր, մազն ու տապակը բռնած էր: Մնչիկը ուռիներու ճիւղե-  
րով շինուած վանդակի մը մէջ իր լաւագոյն աղաւնիներէն դրած էր:

Ու բոլորը մէկ հուսաբուեցան կալստեղին: Ո՛ւր պիտի երթային՝ ոչ ոք  
գիտէր:

Այդ բոլորին մէջ ուրախ ու զոհ երեւոյթ մը պտըտցնողը հայրապետեաց  
Դանիէն էր: Հագած էր իր սուրբ օրերու նոփնոր լաթերը ու շատ բան գիտցո-  
ղի մը պէս կը յորդորէր եւ կը պատուիրէր գիւղացիներուն, որ հետերին շատ  
բան առնելու պէտք չունին, որովհետեւ ինք լաւատեղեակ աղբիւրէ իմացեր է,  
որ իսկական հայրաստանը՝ Պին կէօլի կողմերը պիտի երթան, հո՛ն՝ ուր մեղքը  
գետակով կը հոսի: Կը պատմէր, որ ինքըն էր կողմերը եղած է եւ մա՛նաւանդ կը  
պատուիրէր, որ որքան կրնան խալխալի հունա վերցնեն հետերին, որովհե-  
տեւ էն կողմերը չկայ:

Մխտին ալ՝ իր տան դուները իր ձեռքով գոցած եւ փայտեայ խոշոր բա-  
նային իր գօտիին մէջ դրած՝ կեցած էր անկիւն մը ու կը հարցնէր հարսին, թէ  
տանիքին երգիքը ծածկեցի՞ր: Կը հաշուէր, որ եթէ անձրիս գայ, ամբողջ լուրը  
վար պիտի իջնէ, մա՛նաւանդ որ ճոթոնին նայած չէր, արդեօք Մնուչ ձեռք  
զարկած էր: Մխտի չէր հաւատար, որ իսկապէս կը բաժնուէր իր տունէն:

Հրամանի մը վրայ շարժուեցան: Ծածրայ ինկան սայլերու եղբրական  
ճշտցներուն հետ, իրենց ետեւ ձգելով արտ ու այգի, տուն ու տաւար:

Ծածրու ընթացքին իրենց խառնուեցան կարաւաններ գանազան գիւ-  
ղերէ: Յաջորդ գիշեր եղբրական գիշերն էր: Երեսուսարդ աղամարդիկ գատ-  
ուեցան, կիները յափշտակուեցան, մայրը հարաւի, իսկ գաւազը՝ հիւսիսի համ-  
բան բռնեց: Այս բոլորը գէշ երազի մը պէս եկան: Մխտի ցնցուեցաւ, այլեւս  
հասկցած էր, որ բաժնուած էր իր տունէն ու սիրելիներէն:

Ու ինք քուսեցաւ անձաւոթներու հետ անձանթ վայրեր:  
Երեք օր վերջ՝ միջօրէի բարկ արեւին տակ, երբ Մխտենց կարաւանը  
հանդիսա կ'ատնէր, հետուէն տեսնուեցաւ, որ փոշու մառախուղին մէջէն կը  
ժօտենար ուրիշ կարաւան մը:

Ամէն անգամ, որ կարաւան մը տեսնէին, ճամբուն վրայ կեցած անոնց մօտենալուն կը սպասէին. իրենց սիրելիները կը փնտռէին, իրենց անեցիկներուն մօտին տեղեկութիւններ կը հարցնէին:

Մխսին ալ, իր ձեռագոյտին վրայ ծոած՝ իրենց տան փայտեայ խոշոր բանային գօտին մէջ, աչքերը յառած կը սպասէր կարաւանին, որ կը մօտենար փոթորիկի մը պէս:

Երկու կարաւաններ իրարու խառնուեցան. կը հարցուփորձէին. ոմանք կը դռնէին գիրար: Մխսին ալ հարցուց իր սիրելիները, աչքերը պտտացուց եւ, ո՞վ տեսնէ,~ Մնուշը:

Մխսի ձեռագոյտը ձգեց, գողգղաց, թեւերը լայն բացած կանչեց, կարծես մէկ բարձի վրայ ձերբացած երկու ամուսիններ ըլլային:

— Մնո՞ւշ:

— Մխսի՛:

Մխսի եւ Մնուշ իրարու գիրկ ինկան ու լացին երկու փոքրիկ մանուկներու նման:

Մխսի արցունքներուն մէջէն հազիւ ինքզինք զսպեց ու, կարծիր թաշկիռակով աչքերը սրբելով, խօսեցաւ.

— Է՛հ, Մնուշ, երնէ՛կ այն օրերուն:

ՀԱՄԱՍՍԵՂ

«Երնէ՛կ այն օրերուն»ը ծերուկի մը ձախողած սէրն է, շուտով կռուագան տրամադրութեան մը փոխուած սիրածին գէմ, որ էրիկը վազուց կորսնցուցած յետոյ տարեկան եւ ծերուկին պատկից տուն ունեցող կին մըն է: Ուրեմն՝ ծերուկին սիրային դարպասը մնացած է անհետեւանք, առաջաքիչ անմիջապէս ու լռելիայն մերժուած է, եւ ամռնք, հոգիներու մէջ տեղի ունեցող հակադրեցութեամբ մը ատկէ ետք, ամէն անձրեւ տեղալու տանիքին վրայ կ'ընեն ճոթոնի օնվերքանալի կռիւ, միևնչեւ որ թուրքերը վերջ մը կը դնեն ծերէ ծեր ստեղծուած այդ անբաղձալի կացութեան, իրենց հայկական ընդհանուր տեղահանութեամբ: Համագային գուլումի օրեր են: Ամէն մարդ իր հարազատն ու ծանօթները կորսնցուցած՝ կ'երթայ եղբրական անձանօթի մը ուղղութեամբ: Հեռաւոր ճամբաներու վրայ՝ կարաւաններ, երբեմն, իրարու կը խառնուին: Նման առիթ մը կը ներկայանայ ծերուկին գտնուած կարաւանին, որուն կը խառնուի սիրած կնոջ կարաւանը: Համդիպման այդ պահուն ծերուկ Մխսի եւ Մնուշ կարծես մէկ բարձի վրայ ձերբացած երկու ամուսիններու ապրումը կ'ունենան: Կը քացագանչուին անուններ.

— Մնո՞ւշ:

— Մխսի՛:

Իրարու գիրկ կ'իյնան, կու լան փոքրիկ մանուկներու նման եւ վերջապէս Մխսին.

— Է՛հ Մնուշ, երնէ՛կ այն օրերուն:

Հայկական անհուն գուլումին, փոշեհատիկի չափ բարիքն ալ քող այս երկու ծերուկներուն սիրոյ հաշտութիւնը ըլլայ, հայրենի գիւղէն հեռու:

(Հատուած)

ԵԳ. 908ԱՃԵԱՆ





# Իմացական Հարվում

## Յ. ՕՇԱԿԱՆ

Կենսագրական տուեայներն յայտնի է, որ Բանական քուական-  
ներու կենտրոն Յակոբ Օշական պարբերաբար աշխատակցած է նաև  
Գահիրի «Արև» օրաթերթին, ստորագրելով ստեղծագործական թէ  
ֆնեզատական շարք մը գրութիւններ: Մեր հազարի մասնագործան-  
ներուն մէջ այդ տարիներու հաւատածներուն յղոյթեան պատճա-  
ռաւ, մեծամուն գրագէտն «100ամեակի հրատարակութիւն» շարքին  
զօով, օրին գիտնցինք ուղղակի «Արև» ի խմբագրութեան, որ ազնուա-  
բար մեքենագրի տուաւ եւ մեր տրամագրութեան տակ գրաւ օշական-  
եան տասն աւելի գրութիւններ, որոնցմէ ունեմ տեղ գրանցին համա-  
պատասխան հատորներու մէջ, իսկ միւսները կը գտնուին «Բարբէ»  
խմբագրութեան տրամագրութեան տակ:

Այդ շարքէն առնուած է հայ գրականութեան մօտն հետեւած ան-  
ձերն՝ անգամ անձանօք Համաստեղի նուիրուած հետեւեալ գրու-  
թիւնը, որուն համար «Արև» ի խմբագրութեան կը յայտնենք մեր բերմ  
շնորհակալութիւնը:

## «ԳԻՒՂԸ»

*Նրբ Գոյիւրը, շահագիտական նկատումներով, ստեղծին ատան-ատան  
փառքի գացած զիբերը կը գրադի կրկին ապագրելու եւ մերձաւոր գաղութ-  
ները իրենց տեղոյն թերթներուն մէջ կը ծնեն իրենց խեղճ աստապանքը, միւր-  
թարական է հաստատել հեռաւոր Արեւմուտքի մէջ շարժում մը, որ օրաթեր-  
թերը ոգևորել է և պարբերաթերթերը կանգուն պահել հոգը, կը տարածուի  
տակաւին բուն գրականութեան կալուածին, զիբերն ալ մրայ, փրկելով այս-  
պէս, ահաւոր այս լքումին մէջ, նուիրական հրիտակը մեր ցեղային առաքելու-  
թեան, - այն ոգիին, որով տաքի մնաց մեր ցեղը այնքան աղէտներու կունակին:*

*Յատկանշական է, որ ամերիկահայ մամուլը, երկուր ստեն քաղաքական  
խաչանեւոզ գործունէութեանց մրցարան, այսօր ժամագրավայրը կ'ուզէ ըլլալ  
մեր մտաւորականութեան բոլոր տանելի եւ անասանելի անուններուն:*

*Բայց ինծի համար յատկանշական է, մա՛նաւանդ որ մեր գրականու-  
թեան ձգտումներուն տեսակէտէն այնքան կարեւոր արուեստի ըմբռնումներ  
փորձեն իրականութիւն գտնուել ինչ-չիլ, ու անկէ դայ մեզի զիբք մը, որ*

Հակառակ իր շունչի պակասութեան ու ոլորտի փոքրութեան, իրապէս ազգային, ուրիշ խօսքով՝ հայեցի արուեստ մը իրագործէր:  
Համաստեղի «Գիւղ»ն է ասիկա:



Արազ ու Համակրելի յայտնութիւնը աս տղուն:

Առաջին իսկ փորձերուն, ան կը դատուէր դիրքերով, Համայնարանական դասընթացներով վարդապետօրէն սպառազէն խմբակէն, որ թուղթերէն կամ բեմերէն թելադրուած ու գոց սորվուած յուզումներ կը սիրէ առաւելապէս:

Անոր իմաստութիւնը պիտի շանցնի դասարանի պատերէն անդին: Ու երջանիկ անպատասխանատուութիւնը կը պաշտպանէ հիմա աս մարդկրը նոր աշխարհին մէջ: Համաստեղի մէջ ոչ մէկ շունչ, որ դարակ կամ գրագրարան հոտի:

Դարձեալ անիկա խելքը ունեցաւ իր աշակերտութիւնը, այդ միամիտ, յաճախ դժբախտ կազմութեան շրջանը խնայելու հրապարակին: Կը կարծած, թէ ուրիշներուն պէս չվազեց խմբադրատուները: Ու չըբաւ այն տխուր ու տարապարհակ աշխատանքը, որ գրականութեան մէջ բոլոր աճապարողներուն սաքերը կը կթուէ ու տարիներով միջակութիւններ քաշչըն կու տայ դէպի փառքին ճամբաները: Անիկա առաջին իսկ փորձերուն բան մը կը բերէր:

Շատ քիչ բան, անոր մէջ, որ կհանքէն, հիմա անցեալ, բայց անխորտակելի համոզանկերներու ձեւին տակ՝ անոր ներքը ամէն կողմէ փաթթող ու խիտ կեանքէ մը չզար արուեստի վերածուելու: Գրեթէ ոչինչ դարձեալ այս վերածումներուն մէջ, որոնք աշակերտը մատնէին կամ փորձուած ըլլային ուրիշներուն աշխատանոցին մէջ:

Կենդանի ու ինքնատիպ: Ահա երկու կարեւոր վերադիրներ, որոնք քիչ անգամ քով քովի կու գան լուսաւորելու եւ հանրութեան Համակրանքին յանձնելու գրականութեան մէջ սկսող անուն մը: Ու Համաստեղ արժանի է, առանց սակարկութեան, այդ տիրուցին:

Ազատեցէ այդ տղան ծխելոյղներուն ուրուատիպ անտառէն, որ անոր երկինքը պարտի ըլլայ հիմա, ու ահաւոր տուններէն, որոնք օդն ի վեր կը վազեն երկաթ կամ քար փոխադրելու յիմար տենդովը: Ազատեցէ անոր աչքերը սեւ ու մածուցիկ լոյսէն, որ պատուհաններէն կը թափի, ու շինուած, թանձր ու մետաղեայ գոյներէն, որոնք անոր հայրենիքին ծաղիկները կը փոխարինեն հող: Տարէք անիկա այն աշխարհին մէջ, ուրկէ ստացաւ անդրանիկ տպաւորութեանց այլազան ու բազմարուեստ աշարժները: Դրէք անոր տեսողութեանը դաշտին՝ գիւղը, իր մարդերուն ու կենդանիներուն, հողին ու արեւին, ծառերուն ու միջատներուն, իր ժամուն ու ողիներուն այնքան բազմազան շօնակարներովը: Կեցուցէք անոր հողին քիչ մը աւելի շատ, քիչ մը աւելի ներամփոփ այն երկրորդ, արուեստով հասանելի կեանքին գէժ, որ սովորական տպաւորութեանց վերեւ իր կամարը ունի նուիրուածներուն միայն տեսանելի, որ կը պաշտպանէ ստացումները, քաղցր մշուշի մը նման պարուելով անոնց ձեւերուն անհատականութիւնը, առանց աւրելու անոնց ներքին աղբրը ու յողաւորութիւնը Համատարած կեանքին հետ: Այն ատեն մեր գրականութիւնը կ'ունենայ մեծ գիրք մը, անոնցմէ՝ որոնք շրջան կը բանան: Վասնզի ան անգրատնկութիւնը (թրանսփլանթատն) քիչ անգամ բարիք մըն է ապրող տեսակներուն համար: Վասնզի նահատակութիւն է գրեթէ, երբ այդ գործողութիւնը, յաւելում մը ըլլալու տեղ, տեսական, վայրագ, անբնական

ճնշում մը կը գտնայ արգիլելու համար տունկին՝ ճակատագրական վերադարձը դէպի նախնական աւագանը տեսակին նկարագրներուն: Մահը յաճախագէտ է: Ու ատով իսկ աւելի քաղցր ու սրապնդիչ յաղթանակը անոնց, որոնք յաջողութիւնը կ'ունենան այս այնքան դժուարին դարձը իրազործելու: Համաստեղ թրանսփլանթէ մըն է: Ու այս գեանին վրայ իր գիւղը՝ յաղթանակ մը:



Այդ գիրքին մէջ զետեղուած է կարեւոր թիւ մը պատմութիւններու, ուր ապրում, տիպարներ ու շրջանակ բացատարար կու գան մեր հայ գիւղէն:

Հիմա տանն է, կը կարծեմ, անդրադառնալու այն անդամանիկ պարակին, որով մեր գիւղը կը բացակայի մեր գրականութենէն, ու ասիկա այնքան եղբրական կորուստի մը ձեւն ունի, քանի որ աղէտը տարած, սրած է անոր հետքը աշխարհէն:

Ու արտում գառնութեամբ ես կը նայիմ այն օրին, ուր մեր ժողովուրդին այս խաւարումին պիտի հետեւի Արեւմտահայ գրականութեան անփառունակ շիջումը մուսուսի միջոցը, առանց պատմութեան յանձնել կարենալու երկու-եքէք հատ մարդ, որ չարչի, վաճառական կամ տիրացու չըլլային:

Այսպէսով կը կրկնուի մեր հին գրականութեան մեծ սխալը, որ ժողովուրդը հետու կը պահէ իր էջերէն առհասարակ ու գրեթէ հիմնովին կ'անգիտանայ գիւղը:

Հիշին չտփ մեր նոր գրականութիւնն ալ, մանաւանդ արեւմտեան հատումը, չի հետաքրքրուի մեր ժողովուրդին ստուար գանգուածովը, գիւղացիովը: Մեր իրապաշտները քաղցեմի ու միջակ դատակարգի փոքրութիւններէն անդին չանցան: Ազգագրական շարժումը ուսումնասիրեց գիւղը՝ անոր ամէնէն վերացեալ ու ամէն ժամանակ կարելի արասայտութեան, բանահիւսութեանը մէջ:

Այս նկատումներով, հաճոյք մըն է ինծի համար վերջապէս հաստատել գոյութիւնը գործի մը, ուր ճշմարիտ արուեստի մը տիրապետումին քով, բարի ու պարզ սիրտ մը (ինչ որ գիւղը կը յատկանշէ առաջին ակնարկով) ու շրջապատն ու հողին իրարու շաղկապող ու մէկ իյնալովը շէնք քարձրացնող նայումը մը իրարու կը միանան՝ պատմելու համար արհամարհուած, չայցելուած, բայց գերազանցապէս հարգատե ներքնաշխարհը մեր հողին:

Այդ գործը կը լեցնեն գիւղացիները: Այսինքն՝ մարդեր, որոնք շատ ցանցաւորն ու ան ալ ծաղրանկարային հանդերձանքով ու բռնի թանձրացումով զիմազծութեամբ մը սպրդած են մեր արուեստին ներս, սքռալու եւ ծաղրելի մնալու դատապարտուած օտար մուրացիկներու նման, բայց որոնք մեր ցեղին ամէնէն գիմացկուն, ամէնէն հարազատ յատկութիւնները գարեթի վեր շաղկած կը բերեն, գրեթէ միեակնին: Այսինքն մարդեր, որոնց չի հասնիր ցեղը վարկարեկող, քայքայող, անոր հաւաքական արժէքը բղիկ-բղիկ խորտակող, նոր առաքինութեանց անոր շուկայիկ ընդունակութեանց ապականիչ տագնապը: Որոնք իրենց անխառն բարութեանը, անսահման միամտութեանը ու անհաւասարելի շարքալու թեանը ու ազգայնական յամառութեանը մէջ կը մերժեն նոր, փառաբանում, խնկարկուած, բայց բոպիկ, հոգիով այնքան աղքատ տիպարին, վաճառական ու քաղցեմի քիփին ստորագիւցները:

Այդ գործին մէջ կ'ապրի մեր երկիրը: Ոչ ամէնուս ծանօթ գրախոս-վայրը, մեր հին մասենագրութեան մէջ տեսլափառ գեղեցկութեամբ մը քո-

դաւոր Հայաստանը, ոչ այ նոր դրականութեան՝ հոնորութեամբ ու հերոսաշունչ գոյնով այնքան անիրական մեղկերը: Հոն է պատմութեան փոշիովը, քաղաքականութեան մուշուղը այնքան այլափոխուած, անճանաչելի դարձած հողամաս մը, որ կը շինուի մարդերուն պէս ու ձեռ ու երանգ կը ստանայ մարդերէն նիւթ դարձող ու իր վրան թափող յուզումներով: Որ լեռ ու սար, դազաթ ու խորամուխ անդունդ ու հեղեղատներ ըլլալէ առաջ, բարի պատաստան է արտին, ջուրի փէշերուն կամ անտառի մը կողերէն, հոգ չէ, բայց որուն դիմաց ծուծութիւնը, կարծիք կամ սեւ երանգը, ժպտուն կամ յըռած երեսը, նոյնութեամբ կը կրկնեն դանձը ստեղծողները: Իարձեալ, մեր երկրին այն կէտերը, ուր աշխատողին գործիքը անգոր է յորինելու ելքերն ու էջերը, ձեւով պսակաւոր ու ժայռերով կապուեցող, հորիզոններ ձեւող ու օդային կառուցումներ առկախող հաստամետները՝ մուտք ունին այդ պատկերներուն մէջ, խորքի ու դունաւորման գոհացումներուն համար:

Ու ասոնց վրայ, ու ասոնց հետ անասունները, որոնք եթէ մարդերուն շափ շէշա նկարագիր չեն առներ ու անհասանար, բայց անոնց զգայութիւնը արտաբերելու, անոնց ներքին աշխարհը արտաքին ընծայելու տեսակէտէն թանկագին ու անխուսափելի կը դառնան: Աւանակը հասնող ազոց խոստովանահայրն է շատ յաճախ, ու հորթը հարսնցու ազջիկներուն սիրական խորհրդանշանը: Առանց իր եզներուն, գիւղացին վերացեալ ըմբռնում մըն է: Միայն քաղաքական տնտեսապիտութիւնը պիտի ախորժէր այդ կարգի ապրուրախններէն:

Ու այս ամէնով կեանք մը, որուն յուզումները թէեւ սահմանափակ, բայց իրենց ուժգնութեանը մէջ կը հաւասարին մարդ արարածին բարձրագոյն տրպարներուն սաղնապանքին: Որուն մէջ քանի մը հզոր զգացումներ կրակէ ամպի մը պէս կը ձգուին երկրէն մինչեւ երկինք, արտէն մինչեւ արքայութեան երջանիկ պարտէզները, մեղմելով ու մխիթարելով թշուառագոյն էակը Աստուծոյ ստեղծածներէն, երբ աչքերը կը բանայ աշխարհին, որքանէն դաշտ կ'իջնայ բազի մագին պէս, ու մէյ մըն այ գերեզմանին մուտքին կը ձգէ հողը:

Այս ընդհանուր հաստատումները կ'առաջնորդեն զիս ամփոփ վերլուծումի մը, ուր տեսնայինք այդ մարդիկը, հողերը, անասունները իրենց նիւթական կեանքէն ներս, իրենց երկրորդ կեանքին, այսինքն՝ արուեստին մէջ:

Բ

Ամէնէն առաջ իր մարդերը:

Առանց խորութեան, ըսել կ'ուզեմ՝ առանց սաստկութեան, Համաստեղ կը ձեռնարկէ իր աշխատանքին, որ անոնց հոգիներն ու մարմինները կտորկտոր պիտի շինէ էջերու ընթացքին: Մենք առանց դժուարութեան կրնանք հետեւիլ այս նեարդ առ նեարդ հիւսուող ամբողջութեան, ուր կը մնան ընկերմած տարրեր անոր ստեղծումին, որ ամէն բան է նոյն ասեւն, բայց որուն կեդրոնէն կամաց-կամաց կը զատուի, ինքզինքը կը հաւաքէ ու ոտքի կ'ելլէ տիպաբը, առանց բռնի մղումներու ենթարկուելու եւ առանց թատերական շարժումներու նպաստին: Եթէ յորինումի այս եղանակը թերութիւն մըն է վերլուծող ու հոգեբանական վէպին համար, եթէ օրվանեմ կամ թերթօն վէպերը իրենց հերոսները անմիջապէս հասուն կ'ուզեն, լծելու համար զանոնք անյապաղ մանուածապատ խուզարկումին կամ մրրկաձար արչաւին, հոս, Համաստեղի այս պզտիկ պատկերներու ընթացքին, այս եղանակը առաքինութիւն մըն է, թերեւս միակ կարելին: Վասնզի գործ մը մտադրութեան մը յայտարարն է միշտ: Ու քննադատը շատ մը բաներէ առաջ պէտք է թափանցէ

ստեղծուժը յառաջանող զսպանակներու գաղտնիքին:

Արդ, Համաստեղի մասնոցութեանց մէջ կշիռ չունին Հոգեկան նուրբ, Հեռանկեայ, բարդ ու դժուարին պայքարներ, որոնք իրենց զարգացումին համար արտագնացում կը պահանջեն մերինն շատ բարձր քաղաքակրթութեան մը բազմապիսի սարուածը եւ բարոյական բարեխառնութեան շատ աւելի մշակուած, բոյլ կ'ուզեմ՝ զանազան Հոսանքներէ խաչածեւում մթնոլորտ մը: Ոչ ալ ամէն գնով, ամէն տեղ Հետաքրքիր(ական) տիպարներու կարաւան մը կ'ուզէ զնիլ իր առջեւ: Անիկա իր մարդերը կը գործածէ իրեն շատ ծանօթ, գրեթէ անոնց ընդունակութիւններով պայմանաւոր կեանքի մը նկարումին: Անիկա գիտէ, աչքերը քոց, ա՛յն տարածութիւնը, ուր կրնան առաջանալ անոնք առանց անտեղութեան ու առանց ձանձորոյթ ստեղծելու: Ուրի խօսքով՝ բոլոր իր մարդերը բարձրօրէն կը արապետութիւն Հեղինակին բնազդներէն ու փորձառական իմաստութեանն: Անիկա ներհայեցօրէն սորված է անոնց ասարդութեան ստոյգ աստիճանները:

Բայց անիկա բաւական արուեստագէտ է՝ անոնց դիմազնութեան մէջ չնեմուծելու Համար կամաւոր, ուզուած երեսակներ: Ուրի խօսքով՝ իր արհիւն մէջ ունենալով Հանդերձ անոնց լարուածքին մեքենականութիւնը, իւրաքանչիւրը ազատ կը ձգէ սեփական շարժումներուն ցանցին մէջ: Այս ազատութիւնը անոնց կ'ապահովէ անփոխարինելի իրականութիւն մը, վէպի անձնաւորութիւն շրջալու առաջինութիւն մը, որ այնքան Հազուադէպ է մեր գրողներուն գրիչին տակ:

Մարդերու այս ինքնարուութիւնը, ինքնասպութիւնը ի վերջոյ մնասակար կը դառնայ սակայն, երբ նկարագրի մեծ գիծեր չհաւաքին անոնց անձնականութեան այդ ցրուած տարրերը ու լծօտեցնեն տիպարային յատկութիւններու ընդհանուր աւազանին: Ուրի խօսքով՝ անոնք առանց տուժի պէտք է ենթարկուին մեր այն պահանջումին, որով անհատները կ'ընդհանրանան ու ընդարձակ նկարագրի կը Հաղնին:

Այս տեսակ փորձի մը կը գիծանան Համաստեղի մարդերը:

Գիւղացին խորհրդանշող շատ մը գիծեր, ուզուած տանը կը թանձրանան մեր աչքին, երբ գործողութեան մշուշին մէջ աշխատիք կեցնել մեր դէտողութեան ասեղը: Կարելի է սկսիլ ատանկ փորձ մը ամէնէն ակուններուն վրային:

Կրաւորական էակներ են անոնք, նոյնիսկ երբ մարդ կը մորթեն (Մանօ – «Ազատի մերը»): Անոնք ճշուումին տակն են դարերուն: Ուրի խօսքով՝ գեղը իր մարդերը շինած է կաթիլ-կաթիլ, գարէ դար, իր շկատկածուած, բայց ամենազօր գործատունին մէջ, որ զանազան անուններ ունի: Որ ժամուն բակն է երբեմն, իր արիւնջը ու յարգի մեռելներովը, ազբիւրովն ու եկեղեցիին ու կոշնակին խորհուրդովը: Որ Հողին շերան է յաճախ, նեղ կամ երկայն, բարի կամ մշատ, բայց իր կերպարանքին իրերայաջորդ հրապոյրներովը, կանանչովն ու ոսկիովը, սեւովն ու դալուկովը լուսնին կամ մշուշին արցունքներուն տակ: Որ պզտիկ խանութն է գարձնայ, ոտքի՝ իր Հաստ ու կորաքամակ պատերուն կանանչցած ձանձորոյթին վրայ, իր փքոցովն ու երաժիշտ սաչերովը, մուրճերուն երգովը ու կայծերուն յարաբուխ անձրեւովը, եւ որուն առջեւ գեղին բազուկները, ինչպէս գերանդիները, խոփերն ու բրիչները, անիւները, ինչպէս տարիքէն դաշտառուած ծերունիները կը մնան խեղճ ու Համակերպուն: Երկար է այս թւումը (ես կը մօտենամ միայն ամէնէն կարկառուններուն): Բայց անհրաժեշտ՝ զգալու Համար այն ահաւոր ճշումը, որ կը զգեսնէ անհաստական արտայայտութիւնները ու կը շքացնէ անհատը, Հասնելու, տիրապետելու Համար տեսակին նկարագրին:

Բարոյական այդ ճշուժը կը տարածուի անոնց անմիջական իրակա- նութեան պայմանաւոր կենցաղի մը սահմաններէն անդին, կազմելու, կեր- տելու համար հոգեկան յօրինումներ, որոնք կարծր ու տեւական են ապա- ուսմանը նման: Ինչք չէք գիտեր զուցէ հակասազգիքը այն աղջկան, որ գիւ- ղերուս մէջ տասնհինգը կ'անցընէ առանց պտուկի մը խուփն ըլլալու: Ինչք չէք գիտեր նոյնպէս, թէ «ազաւեր խաղցնելը» օճախ քանդել ըսել է: Ու հազիւ թէ կը կասկածիք անկատար մարտիրոսութիւնը, որ բաժինն է ժմնուկ զաւակ ունեցող այրիացեալներուն: Գեղը կնիկ չի տար այդ մարգերուն, որոնք թե- րեւս քառասունի զուսներուն (այսինքն՝ չըջանի մը, ուր մարմինը միեմա- րանքը կը փնտուէ բաժնուած անկողինին մէջ), պարտաւոր են քաշուիլ իրենց հարսներէն, նոյնիսկ փողոցի լաներէն, ու պիտի մտնեն իրենց ցուրտ վերմա- կին տակ, մենաւոր, պուկերնին ոչորուած անանուն ու անտեսանելի կակիճէն:

Իոյր այս բռնութիւնները, տեղին համեմատ խուժողու ժ կամ անի- մասա, կ'ապրին գեղին մէջ, որքան մարգերը: Անոնք կը ժխտման ամէն պա- տենութեամբ ընթացիկ կենցաղին: Ու յաճախազէպ է, որ տիպարները զոյն առնեն, եղերական դառնան անոնց մղձաւանջին տակ:

Ըսի, թէ անհաստեղը կը զոհուին: Ու նիւթական կարգին վրայ յայտ- ներող այս պատարագը ճիշդ է գարձեալ, երբ նկատի առնենք անոնց իմացա- կան արտայայտութիւնները: Հոն ալ անհատը կ'ընկուզի հաւաքական տի- պարին ծոցը: Անդիք բանահիւսութիւն ըսուածը ուրիշ բան չէ, եթէ ոչ շատ եղերական, ու թեքիք բառով մը՝ զուտ տխրաստիպան յուզումներուն տարտղնուժը, տարածուժը զանգուածներուն վրայ, դրեթէ միշտ, ատուպողը անհասն է եղած: Գրեթէ միշտ, ատուպանքին բիւրեղացուժը – երգ կամ բու- նաստեղծութիւն – ծանրոցի մը պէս կը կախուի հաւաքականութեան վիզէն:

Ու նոյնիսկ հիմա, երբ արուեստ ու գրականութիւն ընելու ձեւերը փոխուած են այնքան, ու շատ ուժգին, իր թափը հետզհետէ սասակացնող ան- հաստապաշտութիւն մը կը լեցնէ գրականութիւնները մէկուկէս գարէ ի վեր, գրագէտը գիւղին մօտեցած ժամանակ կ'ընէ այդ անգիտակից գիշուժը: Իր- ցազնեղական, աւելի ճիշդը՝ հեքիաթունակ բան մը ինքնարեքարար կու գայ անոր գրիչին տակը: Ու պատմութիւնները հակառակ անոր, որ անհատներու ճշդուած շուքովը կը քայեն, էջերու ընթացքին իրենք իրենց կը լքեն մասնաւոր եւ ուսումնասիրուած եղանակները լայննալու, ընդհանրաեալու համար: Անիկա տեսակ մը միամիտ խաղ է՝ ճարելու համար անհրաժեշտ միջոցը, որուն վրայով անհատը բարձրանար մարզուն:

Գ

Համաստեղի գիրքին մէջ այս գործողութեան փորձերը չեն պակսիր: Արուեստի վերջնական տիրապետումը պիտի գիւրացնէր այս կարգի նուա- ճումներ: Բայց մենք գործ ունինք առաջին գրքին հետ:

Համաստեղի մարգերը իրենց զանազանութեան ներքեւ կը պահեն կաւի, խմորի նոյնութիւն մը, որ անոնք իրարու ճանաչելի կ'ընէ տարիքին կամ պայմաններուն այլապէս տարբերուն սանդուխին վրայ:

Ու շագրաւ է իր կեցուածքը հանդէպ անոնց: Անանձն արուեստի հասա- տաւոր մը՝ անիկա կը մնայ անոնց երամին առջեւ թեւատարած, բայց զուսպ շարժումի մը ուրուացումով, բանալու համար իր բազուկները անոնց խուժու- մին: Ու գիրքին գառն քաղցրութիւններէն մէկն է նայիլ այդ մարգերուն, մեղքնայ անոնց, յուզումի պատրաստուիլ, բայց արգիլուիլ, հեղինակին եղե- րական հանդարտութենէն, որ չի քաջակերել գիւրին զգայնատութիւնը:

Իմ մասին, իմ համակրանքը կ'երթայ առանձնապէս, բուրրովին

զրկուածներուն, այսինքն անոնց, որոնք զգետնուած են ծնունդով կամ հզոր աւանդապաշտութեան մը լախտովը:

Սո հոռ գետ շեմ գրադիր անոնց հողին յայտնելու կանչուած երեւոյթներուն քննութեամբը: Բայց դժուար է զուսպ ու մաքուր յուզումով մը շնամակուիլ այն անասճման բարութեան գիժաց, որով խարսխուած են անոնց հողինը: Բայց անկարելի է շտրել մեղքը, որ անհրեւոյթ, բայց ծանր մշուշ պէս կը շողեւորի անոնց գործերուն արծաթ սպիտակութեանը վրայ: Գիւղին այդ հերոսները: Այդ՝ գետինէն կարծես բուսած, փողոցի քարին արմատ նետած, ուրիշներու վայելքին՝ իրենց այնքան գժուարագին, ազազուն ուժերը անհաշիւ վասնող տղա՛քը զոհողութեան ու անայց գորովին, որոնք աղջիկներուն ծիծաղին կամ նայուածքին տակ լեռները կը խախտն իրենց անդերէն, կամ տարիներուն կազարին տակ, հեազհեա՛կ կորսնցուցած իրենց ձեռքերուն ու ոտքերուն առասպելական ու անշահախնդիր բարութիւնը, կը նետուին փողոց (ուրկէ հարուստներուն քաղցը վերացուցած էր զիրենք պատանութեան դուռներուն), զիւրիկ լիկամ տակառներուն նման, զլորելու, փոշիին ու աղբին, անօթութեան ու ամօթին մէջէն դէպի գերեզման:

Ասանց բովէն, նոյն համակրանքով՝ մենք կը հանդիպինք միւսներուն, — պարզ, հասարակ մարդերը, որոնք նախորդներուն շափ, շեն գիտեր, թէ ինչու եկած են աշխարհը: Որոնք առտուն կանուխ կ'իջնան դաշտը, քրտիւքով թրջուած իրենց հացը կ'ուտեն, արեւէն ետքը տուն կը դառնան, ծառայատարի, սենեակի հողին վրայ աման մը ապուր կը լսկեն, ու կ'իջնան խաբրին վրայ խղզուած՝ հաց ուզող բերաններուն շարտայայտուող բողբոջէն, ու առտուն կ'երթան նորէն իրենց արտին, նորէն հողին, մինչև որ մահը գայ լեցնելու անոնց բերանը իր խոշոր թիւովը:

Ու տակաւին տղաք ու ծերունիներ, որոնք իրարու հետ կը շփուին իրենց զգացական (սֆֆէկթիֆ) աշխարհին միամիտ կակիծներովը: Որոնք կը սիրեն ու շեն կասկածիր, թէ գեղը կը հսկէ իրենց փորին՝ ինչպէս սրտերուն: Որոնք հակառակ տարիներու պատկառանքին, հակառակ թոռներու տէր ըլլալուն, ժամուն ճամբան այրիները՝ կը շափեն՝ մազերուն գազաթէն մինչև կրունկները, ու իրենց չոր անկողինին համար կակուզութիւններ կ'երագին: Ու տղաք, պակասաւոր ու փողոց նետուած, որոնք ցանկապատներուն ճեղքերէն լուզող աղջիկներու նմերկութիւնովը կը խնկմանան ու լեռ-ձոր կ'իջնան:

Կան ասոնք Համաստեղի գիրքին մէջ: Ու ասոնք, Փիլիկ աղբար, Միջո կամ Վարդան կոչուին, քիչ բանով կը տարբերին միւսներէն, առն-տնջ ունեցող, արդար հաց մը ծամող միւսներէն, որոնք նոյնքան անվրէպ ձեւով մը գրուած են աղբիւր անսրբագրելի տառապանքին: Այնպէս որ, բոլորը մէկ շառուիղումները կ'ըլլան աւելի մեծ տիպարին, ամբողջական մարդուն, որուն մասնակի եղանակը կը մնային գիւղին մէջ:

Ու դիւրին է իջնել հասկացողութեանը բացառիկ փայտներու, ինչպէս կ'ըլլան հողին գրուած, բուռնցքով հողին հրուած կամ մենամոլ հանդիմանիկ կլլուած մարդերը, որոնք այդ սովորական յարդարումին տակ կը պատմեն աւելի ընդհանուր, աւելի տարածուն զգալու ձեւեր: Տախան Մարգարը իր գոմէջներուն հետ քալած տանը, ինծի կու գայ, թէ իր կունակին կարուած կը պտըտցնէ մէկ ցուցաստախաղը բոլորովին արդիական զգայնութեան մը, զգայնութիւնը ինքնարաւ, ինքնասոյգ անհատապաշտին, զուցէ կնատեացին, որ աւելի բարձր քաղաքակիրթութեանց մէջ հասած է աւելի բարդ ու կատարեալ ձեւերու:

Կար Ամուս սպահովարար փոպոյին անձն իսկ է, որ ամէն զգայնութեան վրայէն դէպի հայրենիք կը թափի, անդիմազրելի ձգողութեամբ մը:

Ու Միսիմ, Թորիկ Օվանը, տղան՝ Սարգիսը, ու տակաւին անոնք, որոնք ներկայ գործիքն մէջ չկան, բայց արդէն հրատարակուած ուրիշ պատմաբաններու մէջ կ'երևան, պզտիկ յարգարու մներով, կը համադրեն իրենց սեպհական զգայնութեանը ճամբով, գեղին զգայնութեան ու անայլալ ձեւերը:

Հետաքրքրական է, որ կիները քիչ ըլլան ու երկրորդական: Բայց իբր գիւղացի հարցուցէ զուր ձեռքի, - Ի՞նչ է կիները: Անիկա գրեթէ մաս չի կազմեր, գիւղերու մէջ, հասարակաց կեանքին, քանի որ օրանն ու լուսացը, բոքն ու թրիքը, երկունքն ու հացը կ'ուտեն անոր տրամադրելի ցերեկները: Անոնց երիտասարդութիւնը տարին հեղ մը խաղի կ'ըլլայ, գարնան տօներուն, ու կը պարէ իր միտերուն ճերմակ ու սկի պարը, վերադառնալու համար տունին ստուերին, գիշերային ծաղիկի մը պէս սպասելով մութին, որուն բերած վաճառքին համար ապրիլը շատ չեն տեսներ իրարու: Մնացեալը անընդհատ աշխատանք է, սեւ, յուռ, ճակատագրական գատանքը - անոնց բառով: Ու մեծ-ցուցէք ատոնք: Թող անցնին հարսնութեան արտերէն ու աղոց բարունակները շարեն հիւղերու սեմերուն: Սեւտո՞յ: Քառսունը կու գայ: Ու ան՝ որ քանի մը տարի առաջ հարս Աննան էր փոխոցին մէջ, հիմա հարս ունի իր սենեակէն ներս: Ու ի՞նչը: Դագրած է կիմ ըլլալէ:

Կեանքի այս յարգարու մը պատճառ է, որ անիկա գործօն ու ազդեցիկ տիպարներ չկարենայ տալ վիպողին: Ժողովրդական բանահիւսութիւնը արդէն կը նախասիրէ զրազիլ աղջիկներով, որոնք հազուադէպ ու կարելի ճառագայթներ են կեանքին մեծ մշուշին ծոցէն զուրս թափող, կամ մայրերով ու որբուհիներով, որոնք վիշտով ու զոհողութեամբ կը գատուին իրենց սեպոյն ու պղտոր մենութեանէն:

Անշուշտ, մտքէն շ'անցնիր պզտիկցնէյ անհուն այն գեղեցկութիւնը, որ կիներուն քիչ մը ամէն բանով կը շինուի, նոյնիսկ գիւղերուն մէջ: Բայց ատոր հասնելու համար պէտք է իջնայ աւելի ներսերը, աւելի խորերը, անհատներու սրտին մշուշոտ գաւառները, որոնց ճամբաները այսպէս զժուար են ու վտանգաւոր: Ետտ փորձ խուզարկու մը միայն պիտի համարձակէր մօտենալ կիներուն, գիւղացի կիներու սրտին, որ մշտական ստուերին մէջ տունէն ու պարտատուէն կրկնապէս մութցած ամպերէն կայանաւոր լուսնակի կտոր մըն է գուցէ:

Այսպէս ուրեմն, այս կարճ տողանցու մին մէջ, մեզի կը ներկայանայ կարուանը անմերուն քանի մը խոշոր գոյներով: Գլխաւորաբար այն ստուերոտ ու գորշ գոյնին տակ, որ կը շինուի զոհողութեան եւ զրկանքին արիւնէն: Ներքին անձնաւորութեան, արդի բառով՝ հոգեբանութեան յօրինումով մը, ուր կ'ախրատի քանի մը ազնուապոյն զգացու մները մարդերու բարոյականին, գործողութեանց թափօրի մը ընդմէջէն, որ իր պարզութեանը, խորութեանը եւ հանդարտ եղբրականութեանը միացեալ համբոյրներով կը հակակշռէ, քիչ մը լայնօրէն նոյնիսկ, ելուէջի, բուռն ու վերիվարող բախումներուն պակասը: Դարձեալ, կիներուն համեստ բարութիւնը ու համակերպութիւնը, օճախին համար մահու գնով հաւատարմութիւնը, աղջիկներուն միամիտ ու վստիկոտ զէմբերը պատկերներ են, որ կարելիութիւններ կը թելադրեն ու շատ բան գուշակել կու տան ի նպաստ անոնց:

Պէտք է հոս ճշդել, որ այդ ամէնը ըլլալուն հետ, այդ ամէնուն վրայ, անոնք հարազատ հայ են մանաւանդ: Ու ասիկա լուսագոյն, անտարակելի արժանիք մըն է ինծի համար, զրականութեան մը մէջ, ուր ամէնէն աւելի ճղճիմ մնաց ցեղական գիծը, ու զրեմէ անհարազատ՝ ցեղային մոյնքը: Ո՛չ թիկա-սինցին, ոչ ալ Հրանդը կրցան իրենց տիպարները հիմնովին ազատագրել Արեւմտահայ զրականութեան ապազգայնացուած ոլորտէն, ուր մարդերը, մէկէն ի մէկ կ'ընկղմէին հազարաւոր տարուան դասականութեան մը մէջ կամ



կը վերցուէին անիրական ռումանքիզմին: Պօռքը չեմ ընեք Չարդարեանին, որ մարդերէն վախցաւ ու բառերու հրամայող գրագէտ մը եղաւ:

Հոս պէտք է ճշդել նաեւ տարբերութիւնը, որով այդ գործը կ'անջատուի Արեւելյան գրականութեան մէջ հայնցի պիտակին տակ ճանչցուած տափակ ու սովորական գունաւորումէն: Արտայայտուած կեանքը չէ, որ գործ մը ազգային կ'ընէ: Այդ կեանքը տալու ձեւին մէջն է, որ կը պահուի արուեստի մը, գրականութեան մը անթարգմանելի, այս անգամ ազգային ոգին: Ու Պոստեանցի Հում ու հասարակ դէմքերը, Շիրվանզադէի շինծու գիւղացիները ու տափակ պուրժուաւները կը նոյնանան այս գետին վրայ արեւմտահայ իրապաշտներուն անարուեստ ու անխնամ տիպարներուն հետ:

Անշուշտ դեռ կանխահաս է Համաստեղի դէմքերուն վրայ այս կարգի գիծեր հաստատելու ջանք մը իմ կողմէս: Բայց գիտելի է, որ անիկա ուրիշներուն պէս չի սկսիր դեպքեր պատմելով, դէմքերու սեւեռումին ելլելու համար: Իր եղանակը հակառակն է ատոր: Ու ասով իսկ անխառն հանոյք մը կ'ըլլայ այս կարգի փորձերուն հանգիստ մը մեր մէջ, մա'նաւանդ սա սրբերուն, երբ փոշտացիներն ու պատուելիները նորէն կը տիրեն ամայացած հրապարակին:

Գ.

Մարդերէն ետքը, Համաստեղի գործին մէջ կարեւոր են տնտեսները: Տեսակէտէ մը, որ զօրաւոր կը մնայ գիւղացիին մէջ, թիչ բան կը գտնուի մարդը իր ոչ-ասուն ընկերներէն: Ամէն օր, օրուան շատ պահերուն, կենդանին վկայ կը մնայ մարդուն կարելի արտայայտութեանց: Ան կ'ընդունի, իր զաղանապահ լուրստեմքը, չըսուելիք խոստովանութիւններ, անոնցմէ՜ որոնք մեր ներքը կը ծեծեն ու կը ծեծեն գուրս գալու համար եւ որոնք կերպով մը արտաբերելու մէջ թեթեւացում կ'ունենանք: Անոր է, որ կ'երթան բոլոր նկարէն ու յատկանշող վերադիրները: Յաճախ նոյն անակահար կ'որակէ արօրին ետեւէն դանդաղ-դանդաղ քայլող գոմէշը ու թզկացող մանուկը: Կան տուններ, ուր մշակել չի կրնար ճիշդ գնահատել իր ցաւը ու մեղքեալ աւելի սատկած եզին, թէ նոր գերեզման գրուած պղտիկին:

Կենդանիներուն փոխ տրուած այս զգայութիւնը երբ ետ կը դառնայ մարդուն, սրտառուչ քաղցրութեամբ զգացումի մը կը վերածուի:

Համաստեղ տակաւին չէ թափանցած զգայութեան այս ծալքերուն: Անիկա կը նայի կենդանիներուն ետեւէն նոյն պարզ ու սակաւարաւ նայուածքով, զոր գործածներ էր մարդուն վրայ: Անոնք կու գան տեսարան, մարդերուն համար, ու մարդերուն թովէն, երբ պէտք կայ իրենց ներկայութեան, այս վերջիններուն նկարագիրը աւելի ցայտուն ընելու, կամ նոր գիծեր ու շնչտեր լուսաւորելու անոնց հոգիներուն անզգած փաթաթին վրայ: Այս գլխաւոր մտահոգութենէն դատ, Համաստեղ կը դիմէ անոնց, հպատակելու համար անզլիական գրականութեան այն շատ զօրաւոր մղումին, որով կենդանիները մասնաւոր զգայնութեան մը կեդրոնները կ'ըլլան: Անոնց գիրքերուն մէջն է, որ կապուտալուի ու միւնի պէս ճերմակ տիկիներ, իրենց սպաշտներուն ծանրածանր ու ոսկեհոն ամայութեանը մէջ, տարօրինակ գործիք կ'ապրին կանանչալուի ու միւնի պէս սպիտակ շուններուն: Դարձեալ, մարդերէն յափարցած ու անտիպ զգայնութիւններու ծարաւի խուզարկուներ, կամ հեղուութեան մեծ վարպետներ անոնց կոնսակէն է, որ մեզի կ'ըսեն իրենց սրամտութեան իմաստութիւնը եւ կամ կը զոչացնեն մեր մէջ նորատիպ յուզումներ: Համաստեղ կը փորձէ ասոնք: Ու իր փորձերը զժուարին կը մնան: Ու հասկնալի է այս տաժանքը: Ի՞նչ է հայ գրականութիւն ըսուածը վերջապէս: Եւ ինչ կ'արժէ մա'նաւանդ հայ ընթերցողը այդ ճամբուն վրայ:

Այս նրբերանգէն գուրս, որով անոնց գիծերը ընդարձակուէին պիտի ու խորհրդանշանին Հակելով Հանգերձ պիտի ջանային մնայ իրական, Համասանդ կը փորձէ կենդանիները ապ իրենց սեպհական ապրումներուն մէջ:

Չալոն, ամբողջական ուսումնասիրութիւն, աւելի յաջող գուրս կու գայ հիւմորիստիկական մասերուն մէջ, քան Հոն՝ ուր սպասելի էր, այսինքն՝ կենդանական Հոգեբանութեան արտաքին նշաններուն գիտողութեանը ու շահագործումին մէջ: Նոյնիսկ սխալ կ'ապրի անիկա: Ըսել կ'ուզեմ՝ անոր կատաղութեան սկիզբէն մինչև մահը երեւոյթներ կ'անցնին, որոնք գիտողութեան շին դար ու երեւակայութեամբ կը մնան: Բայց ասիկա պզտիկ բիծ մըն է, որ չի վերադարձնուիր ամբողջական պատկերին կսկծալի ու արիւնոտ գեղեցկութիւնը: Առանց խորհուրդի գիծելու, այսինքն՝ առանց մօտեցնելու անոր տառապած գլխիկը Փիլիպ ազբարի՛ն, մենք կը Համակրինք ամէն բանէ առաջ շուն մնայ ու զող այդ կենդանիին: Անիկա առանց ակնոց գործածելու, այնպէս մը կը յոգնի իր աչքերուն մէջ ու թթին վրայ, որ մարդ ակամայ կը մտածէ գեղին ծնրուկ երէցփոխին: Անոր Հոգին կը շինուի անմիջական շրջապատէն: Համասանդ թեյեր կ'առնէ արտերէն ու այծերէն, Հաւերէն ու փուռին առջև սպասող Հացէն, արեւէն ու անձրեւէն ու կը նետէ շունին յօրինումին: Անոր կու տայ խորհելու ձեւ մը, թանձր ու զանգազ, ինչպէս պարտի ըլլալ գեղեցիկն տրամարանութիւնը: Ու չրացնելու Համար Հանգիտութեան պահանջները, զայն կը դնէ բախտի անիւն վրայ, փառքին մինչև կորակոր անկուժ մինչև բորոտ Հայածանքը ու որդնոտած զանակոծումը: Ու Հանելի, բայց զապուած զգացումով մը, որ վեպերուն պահանջներէն է վերջապէս, կ'առնէ անոր տառապահար Հոգին Հերոսական ազնուութեան մը մէջ, գաշունահար ընկնով զայն աւազակներէ, երբ կը փորձէր իր կեանքին վերջին շունչը գործածել գեղին բարբէրին: Ամբողջ պատկերին վրայ մարդկայնական զօրաւ որ բան մը կը բարտախէ շատ յաճախ, էթէ գեղչենք անկէ Չալոյին խորհրդածութիւններուն կարեւոր մէկ մասը:

Դարձեայ, երբ ազանի մը, Կապուտիկը, իր գոցոյն թեւերը կը բանայ արեւին տակ ու Հպարտ իր կտուցը շնորհի մը պէս կը պտտոցնէ թռչունէ թռչուն, մենք անզգայաբար կը խորհինք մտայլ այն մտողութեան, որ կը վագէ երբեմն կարգ մը մարդերուն աչքէն ու բերնէն, մատներէն ու շուքէն, քաշելու տանելու Համար կիններուն սիրտը իրենց ետեւէն: Կամ, ուրիշ ազանի մը, Միրանը, երբ արեւուն տակ կը բանայ նորէն իր թեւերուն կապոյտ եռանկիւնները, ու իր վիզին վրայէն տարփանքը կը թօթուէ՝ ծիածանի մը պէս գոյն ու զգացում թափելով պարապին վրայ, մենք կ'երազենք այն խոռովի ու անուշ ձեւերուն, աղբիկներուն, որոնք այդպէս թեւաբաց, իրենց միտերուն վրայէն Հոգիին ամբողջ ստեղծերը տալէն, կը վագեն գորշ նայուածքով իրենց երկարած ուրիշ թեւերուն:

Ասիկա կամաւոր գրագէտի կարողութեամբ իրազործուելիք խաղ մը չէ Համաստեղի պտտումածքներուն մէջ: Կեանքը՝ այսքան թեթեւ, թեւաւոր, նոյն ատեն ասքան ծանր ու յուզումէն անզամալոյծ ձեւերուն մէջ իրարու ետեւէ մեր առջեւն անցընելը մարդ գիրքերէն չի սորվիր, չի կրնար սորվիլ:

(Ձե՛մ գիտե՛ր ինչու, ճիշդ Հոս ստեպուած կ'ըլլամ յիշելու ես ինձի ժիւլ Ռընարի շիւքաւար Նաթիւրէլօջ, որ խնամոտ գիտողութեան ու ստեղծող երեւակայութեան զժայլելի խառնուրդ մըն է, այնքան բնական ճամբով մը արուեստի վերածուած):

Կը պատահի, որ կենդանիները շեն ինձար առաջին փլանին վրայ: Այն ատեն իրենց դերը ուրիշ առաքինութիւններով կը լրջանայ: Անոնք կը միջամտեն պատմութեան, առանց սակայն կանխապատրաստութեան: Գոմէլներն ու անձնչները, կոպերն ու Հաւերը, կատուներն ու աքաղաղը, արագ այդ

երեւումներուն ատեն, գիծերուն քովէն, կը բացատրեն քիչ մըն այ գեղացին:

Հոս տեղն է յիշեցնելու, որ կենդանիները, առանձին, իրենց գլխուն ապրեցնելու համար՝ Համաստեղի տաղանդը դեռ չունի պահանջուած փորձառութիւնը: Չայոն շատ երկար կը խորհրդածէ, ու կ'իջնայ մանրամասնութեանց, որոնք ի վերջոյ անշահեկան կ'ընեն իր մտածման մեքենան: Նապաստակը իր անխաղտ օրագիրը կը պատրաստէ, առանց իր ականջներուն անհանդարտ ստուերին, այսինքն՝ առանց նապաստակ ըլլալու: Ասոնցմէ զատ չէ խորացուած այն զգացական վիճակը, որ ծնունդ կ'առնէ կենդանիներուն ու մարդերուն առօրեայ շփումէն: Բնախօսական ճիշդ գիծին տեղ, որ ծայրայեղ պահանջն է արուեստին, փուլացին քիչ մը անասուն ընող ու անոր կոնակէն քիչ մը սրամտութիւն յառաջանող յօրինումներ չկան իր մօտ:

Բայց անոնք բոլորն այ իրենք զիրենք պտրտցնելու, իրենց բնական կամ արդուզարդով գեղեցկութիւնները, իրենց յայտնի կամ թաքուն շքեղութիւնները արժեցնելու համար կ'օգտուին կարելի պատեհութիւններէն: Երբեմն շատ մանր զարնուած վրձինի խաղեր, զարմանալի ճշդութեամբ ու փայլով պիտակները կը ձեւեն անոնց մորթերուն: Երբեմն արտոյ թրթիռի մը մէջէն, արեւ ու ռոկի, լեզակ ու գոհար կը վազեն, իրարու կը խառնուին զարդանկարելու համար թուռունի մը կամ մողզի մը ականակուռ կոնակը: Ու կովերը կը նային, մեծ իրենց աչքին ճերմակ բարութեանը տակէն, իրենց ծիծերուն օրհնուած պտու կներովը: Այժմ կգակ կը շարժէ բնական նման:

Ե.

Ու այս քաղցր արարածներուն տակն ու վրան – աշխարհը:  
Սովորական, տափակ աշխարհը, – գիւղը: Իր ներսումն ու գուրսովը:  
Շրջապատումն ու պահովը:

Երիտասարդ վիպասանը շատ համեստ է այս աշխարհին դիմաց: Երջանկութիւն է, որ անոր գիւղը պաշարած չըլլան ուռիները եւ սրինգները, հովիւներն ու զոլարարակող, «մարմանդ» բուրաստանները, ինչպէս վարժութիւն ունինք տեսնելու այն բիրտուր օրինակներուն վրայ, որոնց կը հանդիպինք քիչ մը ամէն գրականութեան մէջ: Անշուշտ կան ասոնց ամէնքը, բայց անոնց մուտքի մեւն է, որ կը փրկէ անոնց գոհակութիւնը:

Դարձեալ, երջանկութիւն է, որ անոր գեղը չըլլայ մեր նոր գրականութեան մէջ այ անտանելի պատկերը, որ զուլումէն զարնուած ճակատադրովը ու դժբախտութեան մեծութեամբը միայն հետաքրքրական կը մնայ:

Գեղն է անոր աշխարհը, շօշափելի, հաստատուն, տուններուն եւ բնակիչներուն վրայ ձեւ առնող գիւղը:

Ու տուններ, ամփոփ ու խեղճ, անհրաժեշտ գծապրութեամբ մը սեւաւոր, ներսին մութովը ու տանիքներուն հարթ ու մեծ սեղաններովը: Փողոցներ, իրենց փոշիումն ու աղբովը, սաքուններովը ու պղտիկներուն տապկող բանակովը: Ու խանութներ ու աղբիւրներ: Ու կարճ ու վճռական գիծեր այս ամէնուն շուրջը: Յստակութեամբ մը՝ որ կը դադրի արուեստի լոյս ըլլալէ ու տեղական գոյն կը դառնայ գրեթէ:

Ասոնք առանձին, իրենք իրենց համար նիւթ լեն ներկայացներ, միշտ իրենց շուքը կը ձգեն, երբ պէտք ըլլայ: Մարդ ու կնկան կոխի մը համար տանիքը: Թոշուններուն սիրուրտութիւն համար՝ արեւով յեռուած կապոյտը: Մեքուրի մը արտին մէջ ծաղկող տարփանքին համար՝ արտը: Բոլորն այ կը դժուարին այսպէս՝ մարդերու կամ կենդանիներու ապրումներուն վերեւ:

Տարածեցէք այս յստակութիւնը աւելի ընդարձակ միջոցներու վրայ:  
Այն ատեն պիտի ունենաք զարտուղի, բայց իրական այն յօրինումները,

որոնք ջիշերէն կը տեսնուին եւ ջիշերու կը հնազանդին: Որոնք գէպերուէ սովորակաւունութեանը ներքեւ անակնկալ հողը կը տեղաւորեն կամ վերէն կը լուսաւորեն տրամը, անոր կ'մտիք ճարելէ հոգը շարժուծի համար միջոց ալ շինելով: Ասիկա հետեւանքը չէ նկարչական տուրքերուն:

Իր այս պատկերացման, գոյն ու գիծը նուաճելու ստոյգ տաղանդովն է, որ Համաստեղ կը տիրապետէ ինքնատիպ իր արուեստին:

Ու նորէն հոն է, որ կը տարբերի անիկա մեր իրապաշտներէն շատ սիրուած ընթացիկ, ճիշդ, բայց անարուեստ նկարազրութեանէն:

Անոր պատկերացումները, ըսել կ'ուզեմ՝ իրերէն վերցուած արագ նկարները թուումներ չեն, ոչ ալ իրապաշտական յայտնի մեթոտով մանրամասնուած անուանումներ կամ ցուցադրումներ: Անոնք մեր աչքերուն չեն բռնադուրիք համբերատար, սառած, առանց կարկառի ձեւերու յանախումով մը: Անոնք մեր երեւակայութեան առջեւ չեն բռնուիր խոշորցուած գոյներուն, փշուած յուզումներուն այս անգամ ոտմանքիկ նպաստովը: Ոչ ալ ցամաք սեւազրութեան մը զգոյշ գիծերուն վրայ կը կենան՝ իրենց համեստութեամբը համակրելի:

Անոնք, անոր պատկերները, անակնկալներ են, շատ յանախ, ու իբր այդ խոտովն ու գրաւոյ: Անկախ են սովորոյթէն ու գիտցուածէն:

Այս արգիւնքին համար անիկա կը նպաստաւորուի շատ բարբրաստ կերպով մը՝ իր դիտողութեան մարզուած ու լայն տուրքերէն: Իրերը տալու ատեն Համաստեղ, առանց ճիշդի, անոնց կ'ունակին կը կապէ անտիպ երանգն ալ: Ինչ որ չի խօսիր սովորական նայուածքին, ինչ որ յանդուզն մերձեցումներով միտքը, աւելի ճիշդ բառով՝ երեւակայութիւնը կը կորզէ ձեւերուն տեսանելի գասաւորումէն, ինչ որ ուշագիր գննութիւնը կը գողնայ յարաբերութեանց թնճուկէն ու կ'առանձնացնէ մասնաւոր մտաւոր ձուլիներով, ատոնք բոլորը բաժինը կը մնան արուեստագէտ վիպողին: Ասով է, որ կը սկսի ստեղծումը:

Բայց ստեղծում. ու գրականութիւն շատ իրաք կը յիշեցնեն: Վտանգ կայ, որ բառերու օգնութեամբը իրականանայ այս սրբազան աշխատանքը, որ այն ատեն նախադասութեանց եղկելի խաղի մը կը վերածուի: Համաստեղ կը ստեղծէ առանց գրականութիւն ընելու: Ուրիշ խօսքով՝ անիկա չի կենար անսարանի մը առջեւ, թատերական յուզականութեամբ մը ինքզինքը լեցուցած, կամ գունախոյզ ու ցուցամոյ նկարիչի մը այլամերձ եւ ուրաջող նախադրութեամբը, որ առարկաները կը ձեւազեղծէ կամ կ'ուռեցնէ՝ պատշաճեցնելու համար զայն կանխամտածումին: Ու բառերով նկարչութիւն ընելու անտաղանդ ճարտարութիւնը հրապոյր չունի անոր համար:

2.

Իր այս ստեղծումներուն նկարագիրը փնտռուած կամ պրկուած չլուսն է ամէնէն աւելի: Անիկա չէ դիտած, երկար, ու թափանցող այն համակրութեամբ, որ գիծերն ու գոյները մեր կամքէն անկախաբար կ'ընտրէ ու կը գաստարէ ու մեր մէջ փայփայուած հոգեկան տեսիլներու ընդհանուր երանգաւորումը կը տպաւորէ ամէն տեսնուած բանի: Իր գործին մէջ ես չեմ հանգստազանց այսպէս յամառ, ու յանախող գունաւորման մը, որ ինքզինքը պարտադրէր:

Անիկա անկախ է գոյնէն ու գիծէն: Ու այս պատճառ մըն է, որ անոր գրագէտի կարողութիւնները գործադրուին թուէ գեանքին, մարդկային հոգիին յաւիտենական գեանքին վրայ:

Ու կտոր-կտոր, փայլակ-փայլակ, գիծ-գիծ եկող ու խտացող այս աշխարհը առանց իր ձեւերուն խտութեամբը կամ կարծրութեամբը ստուերելու

զգայութեանց դաշտերը եւ զգացումներու պայծառ ջուրերը, հետզհետէ հաս-  
ատուն, ոտքի դիմացող ու այնքան կարեւոր տարրը կը բերէ այս գործին,  
տեսակ մը ոսկրային հիւստածք ըսելու կու գայ, որուն կարենայինք վստահիչ  
շարժումներուն ամբողջ թափը եւ գործողութեանց բուռն տենդը:

Համաստեղի ներկայացուցած աշխարհը կ'անձնանայ, ըլլալու համար  
անոր գրիչին տակ միայն կարելի լարուածք մը, կառույց մը ձեւերու: Ասկէց  
զատ անիկա կը դառնայ բարոյական սփիւռ մը, գործող անձերուն տակն ու  
վրան, որպէսզի զանոնք լուսաւորէ կամ մասնաւորէ: Անիկա, իր մասերուն  
մէջ, կը ծագի երբեմն սիրուն անակնկալին, զիւրիւն փայլակովը, պատճառ-  
թեան ընթացքին աւազանելու, երակելու, ծիածանելու համար մարդկային ու  
ասարերային տառապանքը, կամ՝ մանր, ճշուած, անաւարտ ուրախութիւնը,  
հաճոյքը մեր ցեղին:

Զդէլու ատեն անոր գործին այս մասը, չեմ կրնար իմ լաւագոյն գնա-  
հատուծս զլանալ այդ նկարումներուն ներքին ու զուսպ արժէքին նկատ-  
մամբ: Պէտք է միշտ յիշել անպատեհութիւնը, ուր կը թաւալին նորերը, կամ  
ուրիշ շնն խուսափիչ տարեցները, որ կ'ընկերանայ, մա'նաւանդ հիմա, վե-  
րացեալ (աւելի հասկնալի կ'ըլլար վերացականը) բառերով հարտարապետուող  
գեղեցկութեանց: Անոնք մեծ գիւրութեամբ կը շփոթուին բուն արուեստին  
հետ, քանի որ ոճի վարպետներ իրենց հսկայ յղացումներուն ու զմայլելի իրա-  
զործումներուն հետ, վերապահ հնազանդութեան մը ենթարկած՝ կը թուին  
երբեմն գոյնն ու կարկինը:

Ու Համաստեղ անկիւններու այս ուսումնասիրութեան համար կը գոր-  
ծածէ նոյն նախանիւթը, մեր ժողովուրդին, այսինքն՝ գիւղացիներուն  
կեանքը շինող տարրերը:

Վասնզի ինչ որ հայ ժողովուրդի կեանքը կ'անուանենք, ուրիշ բան չէ  
իր լայնագոյն մասին մէջ, եթէ ոչ հողի կտորի մը վրայ ելլող ու իջնող յախտե-  
նական տրամը քանի մը խառն ու խորունկ զգացումներուն: Սէր, նախանձ,  
ցաւ, անթութիւն, երկինքի ծարաւ, ու տակաւին քանի մը ուրիշներ: Ահա  
բարոյական այն գլխաւոր զսպանակները, որոնց վրայ հաստատուած է մեր  
ժողովուրդին կեանքը գարեբով:

(Ուրիշ ազգերու մէջ կան տակաւին ուրիշ հաւատքներ, ուրիշ զգայու-  
թիւններ, իշխողներն ու սոսմիկներէն այնքան փայլալուծ ու սերունդէ  
սերունդ ամբապնդուած հպարտութիւններ: Մեր ժողովուրդը անպիտակցած  
է կարծես այդ հողերանութիւնը՝ եթէ հաւատանք իր պատմագիրներուն:  
Գարձեալ մեր ժողովուրդը կ'անգիտնայ այն խանդավառող, կամքերը բազ-  
մապատկող ու գործողութիւնը փառաբանող մտայնութիւնն ու հողեկան վի-  
ճակը, որ ծնունդ կ'առնեն, կորովի պետերու իթանին տակ՝ իրենց աւազան-  
ներէն մրրկով բարձրացող մարդկային հեղեղներէն: Արուեստով բիւրեղանա-  
լու խորապէս յարմար այս յուզումները, ժողովուրդ մը իր միլիոնաւոր շիջե-  
րուն վրայ ցնցելու ընդունակ յանդուգն ու հզօր յաղթանակները դժնդակ  
բարստով մը պակսեցան մեղի, գարեք ու գարեր: Ու ատոնց փոխարէն, մեղի  
արուեստը, ճակատագրուեցաւ տրամը ժողովուրդի մը, որ շղթայուած իր սե-  
մին կամ գամուած իր արտին, իր հիւզակի բանտին ու իր լեռներուն պար-  
տըւած գերութեանը մէջէն մնաց աննահանջ այն կէտին, ուր վարսուեցաւ,  
յամառ ու պինդ, աչքերը երկինքին, բայց հողին հողին, ու ապրեցաւ գարեբով  
իր ինքնադարձ ու ներասոյզ մենութիւնն ու լքումը, սգաւոր, անսրբազրկի  
աղքատութիւնը իր հոգիին ու մարմինին):

Անիկա է մեր ժողովուրդը: Այս զանգուածին կեդրոնէն է, որ կրնայ  
արուեստի մեծ գործ մը բարձրանայ: Ես չեմ յառաջանար, ուրանայու աստի-  
ճան մեր նոր գրականութիւնը, գայն դասապարտելով իրր արտայատուութիւնը

դասակարգի մը, որ շատ տարտամ ազերս մը կը ներկայացնէ ցեղին աւանդա-  
կան հոգեբանութեան հետ:

Բայց ինծի համար, անվերապահ համակրանքի ու քաջալերութեան ար-  
ժանի է մէկն փորձ, որ կը մեկնի այս հուսադէն:

Ու սրապէս ուրախութեամբ կը դիմաւորեմ այս նորեկը, որուն առա-  
ջին փորձերը այսքան հետունքերը տանող մտածումներ արթնցուցին իմ մէջս:

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ



Իր Տափան Մարգարները, Փիլիկ Ազբարներն ու Կար Ամու-  
ները իրենց ներքին ապրումներով ու տառապանքով մարդ են  
նախ, մարդկայինը կը մարմնաւորեն եւ ընդհանրական արժէք  
ունին, սակայն անոնք իրենց զգալու, գործելու եւ արտայայտու-  
ելու կերպով հայ շինականի տիպարները կը ներկայացնեն:  
Առանց քարոզութեան տրուած այս հայկականութիւնը, որ տոհ-  
մային գրոշմ մը ունի միշտ եւ հարագատի մտերմութիւն. Հա-  
մաստեղի տիպարները կ'օժտէ ինքնուրոյն դիմագիծով: Մենք կը  
սիրենք զանոնք, որովհետեւ անմիջապէս կը զգանք, թէ մեր արիւ-  
նէն են, մեր լեզուն կը խօսին, մեր սրտէն կը խօսին:

Դասական բոլոր մեծ գրողներուն նման Համաստեղ պար-  
զութիւնը հասցուցած է այնպիսի հիւսքի եւ կենսալից լիութեան  
մը, որ ընթերցողը բնութեան եւ բնականութեան առջեւ կը գտնէ  
ինքզինք տեւարար: Գրական ոչ մէկ շողոզոն զարդարանք, ու-  
նական ոչ մէկ անտուր զարճումով: Գեղջկական ազբարներու  
պէս յստակ լեզու մը, որ գիտէ բառերը գործածել տնտեսութեամբ,  
խտացնելով, պատկերաւորելով: Այն հեղինակներէն է, որոնց հա-  
մար բառերը միջոց են եւ ոչ թէ նպատակ, խորութիւնը պարզու-  
թեան մէջ է եւ ոչ թէ մքաճող արտայայտութեանց մշուշին ներքեւ:  
Համաստեղ ժամանակ չունի «գրականութիւն ընելու», որովհե-  
տեւ կեանքի նկարիչն է, լեցուած մշտավառ անցեալի հոծ ապ-  
րումներով եւ տառապահար ներկայի մակընթաց յոյզերով: Իր  
չունչով կենդանացած մարդիկն ու միջավայրը այնքան իրական  
են, տեսանելի, գրեթէ շօշափելի, որ բառերու ներկայութիւնը չենք  
զգար իսկ. ինչպէս կենդ մը գրաւիչ այժերուն առջեւ կը մոռնանք  
զարդն ու հանդերձանքը:

Մ. ԻՇԽԱՆ

(Հատուած)

# ԼԻՏՎԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

Տարի մը առաջ հոգին գարնան գրող Ստեփան Կուրտիկեան, որ սահմանին այս կողմը նայած առեն տեսածը թիչ մը շատ տեսնելու եւ շահածը բնաւ չտեսնելու սովորութեան մը տեր էր եւ առանց Հոկտեմբեր-Նոյեմբերի եւ հետքեր առնալով այլ բաներու որեւէ գրութիւն չէր կրնար ուտարել, յանձն չուէր տարի մը առաջ, բացառութեան կարգով՝ «Սովետական գրականութիւն» ամսագրին (թիւ 6) մէջ Համաստեղի մասին լոյս ընծայեց անխառն յօդուած մը, զոր թիչ անգին կը ներկայացնենք ի յարգանս իր յիշատակին:

Ասկէ առաջ ու Մահարիէն արտագրուած հետազայ էջն առաջ կայ Համաստեղի առիթով երկուքին միամտանակ կապուած պարտոյց մը, որ պէտք չէ աննկատ թողուլ:

Իր վերջին էջն մէջ Կուրտիկեան Մահարիէ մէկ նամակէն կատարած է մէջբերում մը, որ տարօրինակ կը հնչէ, ինչպէս յանախ հնչած են Մահարիէ բազմաթիւ ու բազմազան մտածումները: Համաստեղի մահուան առիթով եւ օրին թերթի թերթ լընած այդ նամակէն մէջ՝ Մահարի կ'ըսէ.

«Համայն աշխարհում ցրուած հայկական պանթեոնը հարստացաւ մի տպագրատարով եւ: Ահու՜մ է հայրենասէր գրչի մշակի երկրորդ ծնունդը: Նրա գրական մեծ հարստութիւնը պէտք է վերադարձնել իր օրինական տիրոջ, մայր ժողովրդին»:

Կանգ առնենք ու հարցնենք. ո՞վ յաջողական էր որդեգր անոն գրական մեծ մտածողութիւնը, որ վերադարձնելու հարցեր կը յուզէր տաղանդով հարուստ եւ թմահան դատողութիւններով ոչ շատ աղքատ Մահարիէն, կամ սեփական տէրեթէն գտաւ կա՞ր, կրնա՞ր ըլլալ տիրական ու՞մ մը, որ կարենար արգիլել Համաստեղեան մեծ հարստութեան վերադարձը Եօրիւնայան տիրոջը: Քսան տարի անցած է Համաստեղի մահուան վրայէն, բայց Եօրիւնայան տիրոջ ամբողջին տերը դառնալու փոխարէն՝ օրօրէն լսած է միայն ու մամուլին մէջ կարգացած է քանի մը պատմութիւն՝ «Տափան Մարգարի», «Երթնէլ այն օրերուն», մէկ-երկու ուրիշ նմաններ եւ նշանաւոր «Չալօ»-ն, որուն մասին գրուած մահարիական հետազայ էջը հիանալի է պարզապէս...

...Այսօր ըստ երեւոյթին փոստային ու բախտութիւնների օր է: Ինչպէս ամէն օր, այսօր էլ նոյն ժամին, գրողների հանգստեան տան բակը մտաւ հեծանիւ աւտո նամակարկուհին եւ թենիսի սեղանի վրայ թողեց նամակների եւ թերթների մի պատկառելի քանակութիւն. նամակ՝ Եսան Եսանուրից, նամակ՝ Արամ Հայկազից ու գեղ. նամակ՝ Վ. Նորենցից: Արանով չի փակուում իմ այսօրուայ փոստային ու բախտութիւնների ցուցակը. ահա եւ Մշակութային կոմիտէի «Սովետական Հայաստան» ամսագրի N° 6ը, ուր տպագրուած է Համաստեղի «Չալօ»-ն:

Կարդում եմ նորից ու նորից ու այդքան գարման չեցի մնում են բաց: Ի՞նչ

զարմանալի բան է զբարուեստը: Ամէն անգամ, երբ ես կարգում եմ իսկական արուեստի գործեր, ինչպէս ահա այս «Զալօսն», գայիս եմ այն համոզմանը, որ զբարուեստը արուեստի սոսկական մի ճիւղ չէ, ինչպէս երաժշտութիւնը, նկարչութիւնը, քանդակագործութիւնը: Չէ՛, նոր բան ասած չեմ լինի, եթէ ասեմ, որ արուեստը գրուած չմեղեղ գործերի մէջ կայ երաժշտութիւն, կայ նկարչութիւն, կայ վերջապէս քանդակագործութիւն:

«Զալօսն պատկանում է այս կարգի գործերին:  
Եկաւ Չալոն, նորավկում՝ խոշտանգուած, գտաւ՝ մ, գողերի գնդակից նահատակուած Չալոն, իրրեւ արուեստի գործ՝ անմեռ, յաւերժ թարմ ու երիտասարդ, գլուխ-գործո՛ց Չալոն:

«...Աւելի ծեր քան մեր գիւղի երէցփոխը, սակայմ անոր պէս ակնոց չէր գործածեր Զալօն»: Եւ զարմանալին, ընթերցողը տեսնում է ե՛ւ գիւղի երէցփոխին, ե՛ւ Չալոյին: Ի՞նչ բան է զբարուեստը. զարմանալի բան է զբարուեստը, յերաւի զարմանալի բան:

Ձէ՛, մասնագիտական նեղատեսութիւն, անձնական մտտիւնք մի որոնէք այստեղ, ես պաշտում եմ հոմիտասին եւ սիրում, շատ եմ սիրում Մարտիրոս Սարեանին, Երուանդ Քոչարը զարմանալի աչքեր ունի եւ մատներ, բայց... բայց երբ կարգում եմ Համաստեղի «Գիւղը», «Անճրեւ»ը եւ յատկապէս ահա այս «Զալօսն կամ «Միջօճն»...

Ի՞նչ է «Զալօսն, ո՞վ է Չալոն. մի սովորական պատմուածք Արեւմտեան Հայաստանի անհետացած գիւղերից մէկի սովորական եւ անհետացած շնորհից մէկի մասին... Մե՛ծ բան:

Մե՛նք ասինք շտովորական պատմուածք: Ընդունենք, որ «Զալօսն սովորական մի պատմուածք է: Էլ ինչո՞ւ երբ կարգում ես, զգում ես, որ աւելի արագ է իմում զարկերակդ եւ աչքիդ առաջ բացուած է զբողի գիւղը, որն անուն անգամ չունի ու մի ո՞ղջ անհետացած աշխարհ, որն աւելի իրական է, քան այն իրականութիւնը, որի մէջ դու ապրում ես: Այդպէս է լինում, երբ զբողի գիւղը ո՛չ միայն գրիչ է, այլեւ՝ վրձին, քանդակագործի կախարդական շե՛ղք, ներդաշնակ հնչիւնների զարմանալի գործի՛ք:

Համաստեղեան շտայլ եւ շիռունացող գոյներով են ներկուած գիւղի օրն ու առօրեան: Ընթերցողի օձիքից բռնողներից չէ հմուտ արուեստագէտը, նա կարող է ընթերցողի սրտից բռնել: Ամբողջ պատու՛մին ընկերակցում է զարմանալի, լսելի եւ անլսելի մի երաժշտութիւն, մորմո՞ք է, անհետացած գիւղի երգուն կարօ՞տը: Տեղ-տեղ, հնչիւնից հնչիւն՝ թւում է, թէ ծանօթ է այս երգը: Ու յիշում ես Բակունցի՛ն, Բակունցին եւ յիշում... Հետաւոր Հոգիների այս-քա՛ն մօտ, այսքա՛ն սրտառու չարագատութիւն:

Համաստեղ եւ Բակունց: Բակունց եւ Համաստեղ: Ո՞վ է այն բախտաւորը որ դիւերտացիա պիտի պաշտպանի այս քեմայով:

Չեստե՛մ այս գործի վրայ:  
«Զալօսն եկաւ մեզ մօտ, անարգուած, վոնդուած, սպանուած Չալոն, իրրեւ արուեստի գործ, յաւերժ թարմ, գլուխ-գործոց Չալոն, պուշր զբօշակի պէս ցի՛ց:

Բայց սրբանով էլ վերջացնենք, այլապէս... այլապէս իմ լիտվական օրագրութիւնը կարող է վերածուել... Հայկական օրագրութեան:

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

(«Առօրեական գրականութիւն», 1968, թիւ 1)



19 Մարտ 1986ին, 78 տարեկան հասակին, Երեւանի մէջ մահացաւ արձակագիր, հրատարակագիր, լրագրող եւ խմբագիր Ստեփան Կուրաբեկեան, որ ծնած էր 1908ին, Փուրթոյ Գուրաք թաղաքը:

Ստեփան Կուրաբեկեան նախնական կրթութիւնը կը ստանայ մենդալայրի Կէորղեան վարժարանին մէջ, ապա կը փոխադրուի Յուստատան եւ ուսումը կը շարունակէ Մայրնիկի աներկիան Վեմախոյնոս դպիման մէջ: 1927ին, համալսարանական կրթութիւն ստանալու համար կը մեկնի Հայաստան, ուր կ'ուսանի մէկէ աւելի հիմնարկներու մէջ:

1930ական թուականներուն կը նետուի մամուլ ապարդիւ եւ իրբն լրագրող ու խմբագիր կը պաշտօնավարէ զանազան թերթերու մէջ: 1946ին ժամ կը կազմէ Վոլոնտական գրականութեան ամսագրի անձնակազմին, նախ՝ իրբն ղիխուար խմբագրի տեղակալ, ապա՝ 1962ին մինչեւ 1981, կըր ղիխուար խմբագիր:

Ստ. Կուրաբեկեան ներկանի է ասորբեր բնոյթի 30է աւելի մեծ ու փոքր գործերու՝ պրոշիւրաներ, գրքոյկներ եւ հատարներ: Կատարած է նաեւ թարգմանական աշխատանքներ, իսկ իր գործերն ոմանք թարգմանուած են օտար լեզուներու:



ՍՏ. ԿՈՒՐԱԲԵԿԵԱՆ

**ՀԱՄԱՍՍԵՂԻ ԱՇԽԱՐՀԸ**

Արեւմտահայ գաւառական գրականութիւնը, Եղեռնից յետոյ էլ, որպէս աշխարհագրական պատկեր ու ազգային ապրում, պահպանեց իր հոգեւոր գոյութիւնը: Այդ գրականութեան օտանդոյթները զարմանալի հարազատութեամբ շարունակեցին Երկրից Ամերիկա գաղթած Բենիամին Նուբրիկեանը, Վահէ Հայկը, Արամ Հայկազը, Սիտալը եւ ուրիշներ: Համաստեղն էր, սակայն, որ տունմիկ այդ գրականութիւնը, Խուրէն Զարդարեանից յետոյ, տարաւ արուեստի կատարելութեան:

Արեւմտահայ գիւղի մեծ երգիչ Համաստեղը (Համբարձում Կելէնեան) ծնուել է 1895ին, հայաւունջ հողում՝ Խարբերդ գաւառի Փերլինն գիւղում: Տեղի նախակրթարանն աւարտելուց յետոյ յաճախել է Մեղրէ գիւղաքաղաքի Կեղորնական վարժարանը, 1911ին աւարտել այն եւ մի տարի գիւղում գրագուսել ուսուցչութեամբ: Ապա 1913ին մեկնել է Ամերիկա, շարունակել ուսումնասիրութիւնը Կոլումբիայի եւ Հարվարդի համալսարաններում:

Աշակերտական տարիներին պատանի Համբարձումի վրայ անջնջելի ազդեցութիւն են գործել գաւառական գրականութեան վարդեաններ Յիզաարեանին ու Խուրէն Զարդարեանը, պատանու հողում սէր ու պաշտամունք ներշնչել հայ գրականութեան հանդէպ: Եւ 18ամեայ նորահաս այդ նուիրական սէրն ու պաշտամունքը հողու խորքում անթեղած՝ տարել է օտար ափեր, մինչեւ հեռաւոր Ամերիկա: Տարել է հայրենի հողի թանձր զգացողութիւնը, մանկայի հորովելը, հայոց աշխարհի պատկերները, ժողովրդի ոգին, նաեւ միացող, բայց երբեք չմոխրացող կարօտը: Մի ամբողջ աշխարհ՝ հայկական

կարոտ: Եւ այդ կենսալի, ազնիւ զգացումները արձակագիրը ամերիկեան քաղաքների երկաթեայ թուղթով մէջ անգամ հինգ տասնամեակ պատել-պահպանել է զարմանալի անարատութեամբ: Դրա վկայութիւնն են «Գիւղը» (1924) եւ «Անճրիւր» (1929) պատմութեան ժողովածուները, որոնք երեւոյթ էին 20ական թուականների հայ գրականութեան մէջ եւ մինչեւ այսօր էլ մնում են որպէս գրական գոհարներ:

Սակայն բոլորը չէ, որ միանգամից ճիշդ են գնահատել Համաստեղի խորապէս Հայեցի գրականութիւնը: Առհասարակ, այդ հայեցի գրականութեան մէջ ոմանք տեսել են ստեղծագործական հորիզոնի սահմանափակում, գրական առաջընթացն արգելակող աւանդապաշտութիւն կամ նեղ ազգայնական տրամադրութիւններ: Աւելի ծախերը գտել են, որ Հայեցիութիւնը գրողի ուշադրութիւնը շեղում է արդիականութիւնից, ժամանակակից հայ Սփիւռքին յուզող կենսական հարցերից, իբր վնասակար դեր է կատարում արտասահմանի հայ իրականութեան մէջ: Այս հարցերի շուրջը մամուլում ծաւալուեց թեր ու դէմ բանավեճ:

Բայց մի՞թէ ժողովրդի լուսագոյն աւանդները արժեւորելն ու պահպանելը կարող էին գրողի ստեղծագործական հորիզոնը սահմանափակել, արգելակել Սփիւռքի գրականութեան առաջընթացը:

Նախ, ի՞նչ գաղափար ու ձգտում էր թաքնուած այդ հայեցիութեան մէջ:

Մի ամբողջ հայրենիք կորցրած արեւմտահայի համար հայեցիութիւնը շատ բնական ու նուիրական ազգային հիմնանիւթ էր, դա ցեղի ստեղծագործ էութիւնն էր, կենսասիրտութիւնը, տոկունութիւնը: Դա հաւատք էր ու ազգային ապրում: Դա տառապանք տեսած արեւմտահայի ազնիւ ոգու գիւտն էր, որ իր խտացումն էր գտել Համաստեղի կերտած տուժիկ կերպարների ու պատկերած հայոց բնաշխարհի մէջ: Գեղջիկական աննդական բարեսրտութիւնը, ազնուութիւնը, աշխատասիրտութիւնը, գժուարութիւնները յաղթահարելու կամքը, թոյլին ու աուժածին, հիւանդին ու կարիքաւորին օգնելու մարդասիրական զգացումը հայեցիութեան խտացած արտայայտութիւններն են: Մարդու հոգեկան աշխարհը պատկերող նման գրականութիւնը չէր կարող տեղային, անձուկ նշանակութիւն ունենալ: Ուստի, անարդար էր գրողին ստեղծագործական հորիզոնին նեղացման, ազգային սահմանափակութեան, նորարարութիւնը եւ արդիականութիւնը արգելակելու եւ այլ «մեղքեր» վերագրելը: Յեղային նկարագիրը արտայայտող Համաստեղի գրականութիւնը խորապէս մարդասիրական աշխարհազգացողութեամբ էր շաղախուած եւ արտայայտութիւնն էր ժողովրդային ոգու: Ուրեմն, տեղական նեղ կենցաղազրուութիւն չէր: Նրա կերտած հայ շինականի կերպարն իր հուլանիստական ոգով, իր աշխարհընկալումով, աշխատանքի, սիրոյ, կարօտի իր ապրումներով կարող էր գուրս գալ գիւղի կամ գաւառի նեղ սահմաններից, եւ ազգային նկարագիրը պահպանելով հանդերձ, համամարդկային տարածք ու խտութիւն ունենալ, ինչպէս տարբեր ազգերի գրողների կերտած ազգային տիպերը: Ամէն ինչ կախուած էր գրողի տաղանդից:

Պէտք է նշել, որ Համաստեղի գրիչը չի սահմանափակուել միայն հայկական գիւղաշխարհի նկարագրութեամբ: Ընդհանրապէս սխալ կը լինէր լուրի արեւմասահայ գիւղի երգիչ համարելը:

Ստեղծագործական կեանքի յաջորդ տասնամեակներին Համաստեղը հրատարակել է «Սպիտակ ձիււորք» (վէպ՝ երկու հատորով, 1952), «Բազ Նազար եւ 13 պատմութեան» (1955), «Ազօթարան» (1957), «Այծստամար եւ ուրիշ քանաստեղծութիւններ» (1960) գրքերը, իր կարապի երգը՝ «Առաջին սէրը» (1966) միակեր է երկու թատերգութիւն: Նա ունի նաեւ թերթերի

ու պարբերականների մէջ ցրուած արձակ եւ շափածոյ էջեր, անասարտ թղ-  
ներ ւած «Սրբազան կատակերգութիւն» խորագրով շափածոյ էրկն ու բազմա-  
թիւ անտիպ պատմուածքներ:

Համաստեղը հայ գրական համաստեղութեան մէջ իր մնայուն տեղն է  
զբաւել ատուելապէս որպէս մեծատաղանդ պատմուածքագիր: Բայց նախ  
անդրադառնանք նրա շափածոյ ստեղծագործութիւններին, որ բոլորովին  
անծանօթ են սովետահայ ընթերցողին:

Համաստեղը՝ սփիւռքահայ գրականութիւնը սկզբնաւորողներից մէկը,  
գրական ասպարէզ է մտել 1916-1917 թուականներին՝ բանաստեղծու-  
թիւններ տպագրելով Ամերիկայի «Հայրենիք» օրաթերթում եւ «Փիւնիկ»  
հանդէսում: Նրա բանաստեղծութիւնների էութիւնն էլ հայեցի էր, ժողովրդ-  
դային: Ներշնչման աղբիւրը հնուուներում մնացած հայրենի աշխարհն էր, նրա  
հմայիչ համայնապատկերները, հայոց ապստամբ լեռներն ու անդնդախոր ձո-  
րերը, ցորենի սկեծուփ արտերն ու մրգերով ծանրացած այգիները: Նրա  
ապագայ հերոսներն էին արդար քրտինք թափող շինականը, մանկայն ու  
ըրուորը, նրանց հաւատարիմ օգնական եզներն ու գոմէշներ, նահապետական  
կենցաղով ապրող գիւղացու մեծ ցաւերն ու փոքր ուրախութիւնները, հրա-  
զանքները: Համաստեղի պոեզիան իր հարազատ ժողովրդի ապրումներն են:  
Նա պարզ ու վճիտ անմիջականութեամբ ու յուզումով երգում է մարդու հա-  
մար ամենաթանկ էակին՝ իրեն կեանքի կոչած անուշ ժօր:

Ես կը սիրեմ քու դէմքը, քու դէմքը, մա՛յր իմ անուշ,  
Խաղաղութիւնն աչէքուդ, նայնքան բարի՝ ու անուշ,  
Ես կը սիրեմ նակատդ, նակա՛տդ, վազո՛ւց խորշումս,  
Եւ քու վարսերդ արծաթէ, վարսե՛րդ, մա՛յր իմ անուշ:

Բանաստեղծը պաշտում է ժօրը, որը հազար հոգսեր ունի սրտում, որը  
շարը ուսին լո՛ւր նստած՝ հին օրերի յուշերի կծիկն է քանդում ու յիշում հայ-  
րենի տունն ու երուած, այգիների արահետները թողչքուած: Ու պատմում է  
թոռներին, թէ ինչպէս արեւն ուրի՛շ էր այնտեղ, ծաղիկների, խոտերի համն ու  
բոյրը ուրի՛շ էին, լեռան լանջին ծուարած վանքի զանգն ուրի՛շ էր, հացի համն  
իսկ ուրի՛շ էր:

Հիմա վազո՛ւց ծերացած, ձգած շայ մը ուսերուդ,  
Քաւ թռռներուդ կը պատմես հեքիաթը քու յուշերուդ,  
Ու մի՛տք կ'ընես, մի՛տք կ'ընես թէ ինչքա՛ն էր իրական  
Քաւ հեքիա՛թը արեւոտ, սրտե՛ղ հազա՛ր գայներ կան:

Արեւմտահայ գիւղը, նրա բարի, աշխատասէր ժողովրդին Համաստեղը  
պատկերել է ջերմութեամբ, հողեհարազատութեամբ, կարօտարաղծ զգա-  
ցումներով, համակող թախիծով: Այնպիսի կենդանի գունեղութեամբ, որ հե-  
ղինական ասեռ ոչ թէ կէս զար առաջ է հեռացել հայրենի գիւղից, այլ միայն երէկ  
է թողել բնաշխարհը, տաք օճախը, հարազատ մարդկանց: Ներքին անջնջի մի  
զգացում նրան միշտ յուշում է կորուսած երէկը, հոգում բորբոքում կարօտի  
այրոզ զգացումներ: Ու նա վարուժանի եւ Մեծարենցի նման երգում է իրիկ-  
նացող գիւղը, կայրի ճամբան, ճամբաների է՛ն բարին, որտեղից արդար  
հունձքն էր հսուճ գիւղ: Ու երգում լիկնոտ աղջիկներին, լուսնկայ գիւղերնե-  
րից ծոցուորուած նորահարսերին, որ արտ ու անդաստանից յսգնարեկ հաս-  
նում էին իրենց խաղաղ օճախները:

Ապրումների, ոգու խուզարկու է բանաստեղծը: Հայի ոգու խուզար-

*կուժը նրան տանում է փիլիսոփայական խոհերի այխարհը: Որտեղի՞ց է գալիս այդ ոգին, ի՞նչ է նրա էութիւնը: «Հայու ոգին» ծրագրային բանաստեղծութիւնը բազմախորհուրդ պատասխանում է այդ հարցերին:*

Մի՛ հարցնէ՛ք, ուրկէ՞ կու գայ, կամ ո՞ր ճամբով:  
Եկած է ան՝ Հայկէն կարշնեզ, կապարճն ուսին,  
Գեղապատշան:  
Եկած է ան՝ քլոյ Դաւթի թուր կէծէկէն,  
Մեր հեթանոս նախնիքներէն,  
Բագիճներու բոց կրակէն եկած է մեզ  
Հայու ոգին:

Ան եկած է կոռւի ճակատ մեր դաշտերէն:  
Բիւր նիզակներ, նետ ու վահան երկաթակուտ-  
Սաղաւարտեայ այր ու ձիեր, գրո՛հ, արի՛ւմ:  
Էդ արիւնի ու արցունքի ճամբաներէն եկած է մեզ  
Հայու ոգին:

Ան եկած է Աւարայրի մեր յաղթական պատմութենէն,  
Շէն Անիի հագար ու մի գմբէթներէն,  
Ու հագար-մի զանգակներու զօղանջներէն:  
Մեր հոգերուն նետուած բեզուճ  
Սերմերուն պէս ապրող սիրտն է  
Հայու ոգին:

*Այսպէս, հայ ազգի բիւրեղացած էութիւնը, նրա անսահման մարդասիրութիւնը մարմնաւորող Հայու ոգին գալիս է վեհափառ Արարատից, մերուպեան այրուբնից, Նարեկացու խուցի ճրագից, կոմիտասեան երգերից, Հայոց ազնիկներն անարատ սիրուց ու Հայ մայրերի գթասրտութիւնից:*

Այդ ոգի՛ն է, որ կը գազթէ, կ'եղէ ճամբայ.  
Մեր երկնքէն ու մեր հոգէն, ու կը գտնէ  
Ուր հայ մը կայ, ու անոր հետ գրո՛յց կ'ընէ:  
Ան կը ժպտի, ան կը տխրի, ու անոր հետ արցունք կու լա՛յ:  
Ու կը հսկէ, որ աչ մէկ Հայ շըլլայ շեղի էն լո՛յս ճամբէն:  
Մեր հոգիի էն լո՛յս ճամբէն, որ մեր հօդին  
Ու երկնքին մեզ կը տանի:

*Համաստեղի բանաստեղծութիւններում ջիշ կը հանդիպենք պատկերային Հարուստ գիւտերի, անակնկալ մետաֆորների, այլաբանութիւնների, ենթատեքստային հնարքների: Սակայն այդ բանաստեղծութիւնները ամբողջովին բխում են Հայկական ոգուց, ուստի, ընթերցում են խոր յուզումով: Դրանք խիստ ախորժալուր են, իրենց վեհաշուք պարզութեամբ Համակում են ընթերցողին, գեղարուեստական հանոյք պատճառում: Բանաստեղծի ջերթոգական խօսքը զուլայ է ու կարկաչանոս, ինչպէս լեռնային ազրիւրը, ինչպէս կոմիտասեան Հորովիկները: «Ամէն բանաստեղծ իր ժողովրդի սիրտը պլտֆ է լինի»: Թումանեանի այս պահանջը լիուլի համընկնում է Համաստեղի գեղարուեստական իտէլային: Նա էլ գրել է.*

«Բանաստեղծութիւնը արտայայտութիւնն է մեր կեանքին եւ մեր հոգիին մէջ անծանօթ ծայեր կը բանայ: Մենք յաջող բանաստեղծութիւն

կ'ըսեմք, երբ կրնայ արցունք բերել մեր այժեքին եւ կամ հրեւումք պատ-  
ճառել ու տալ իմաստ մեր օրոյ այ պրումներուն եւ մանաւանդ մեզի նոր  
մտածումներ կը բեյադրէ: Յաջող է այն բանաստեղծութիւնը, ուր մեր  
զգացումները կը գտնենք անոր տողերուն մէջ... Բանաստեղծութեան հա-  
մար հոգեկան է այն, ինչ որ գեղեցիկ է եւ արուեստի սահմաններուն մէջ  
կ'յննայ: Այդ գեղեցկութեան աղբիւրը ինքը կեանքն է»:

*Սակայն, ինչպէս արդէն նշեցինք, Համաստեղը մեծ է որպէս արձակա-  
գիր, որպէս Հայկական բնաշխարհի, նրա ժողովրդի երգիչ: Ճարտարապետա-  
կան կատարելութեան հասած նրա պատմութեան մ առաւելապէս շեշտը-  
ւում են ժողովրդային աշխարհազգացողութիւնը, պատկերացումները, հայե-  
ցի հոգեբանութեան եւ համամարդկային զգացումների ամբողջ զամման:  
Արեւմտահայ դաստի կեանքը նա բացայայտում է զարմանալիորէն կենդա-  
նի, թանձր գոյներով, զարմանալիորէն բարախուն ու իմաստով, միշտ հոգեբանա-  
կան սեւեռումով: Ջերմ, անարատ սրտով գրում պատմութեան, որպէս  
զգայուն փարուեստագէտ, նա գեղարուեստորէն մարմնաւորում է ժողովրդի  
խոնարհ գաւակներին, կերտում բնաշխարհի նկարագիրը, բացայայտում ար-  
դար վաստակով ապրող, նաեւ մակարոյժ, վաշխատու մարդկանց բնաւորու-  
թիւնների բազմազանութիւնը, հոգեբանական խոր շերտերը, տազնապները,  
սոցիալական կեցութիւնը՝ աշխատանքի մարդկանց կենսական շահերի ազնիւ  
մտահոգութեամբ: Այդ գեղջկական բացայայտումներն այնքա՞ն կենդանի,  
զուեղ ու շօշափելի են, որ ընթերցողին թւում է, թէ Համաստեղը տակաւին  
գիւղական տրեխները չի հանել:*

*Ժողովրդայնութիւնը էութիւնն է Համաստեղի ստեղծագործութեան:  
Ազգի ու դրոյի համանման աշխարհազգացողութիւնը, ժողովրդի տենչերի,  
խոհաների հետ նոյնանալը, գրականութիւնը ազգային պահանջներին ծա-  
ռայեցնելն ու ազատագրական շարժումներին աստար հանդիսանալը Համաս-  
տեղի գեղարուեստական իտէպն է, հաւատամբը: Գրականութեան ժողովրդ-  
դայնութեան այդ հիմնական յատկանիշները լայնորէն բացայայտու եցին ար-  
ձակագրի ստեղծագործութեան մէջ՝ նրան հոսկանալի եւ սիրելի գարմնելով  
ընթերցողների լայն շրջաններին: Այս կապակցութեամբ գրականագէտ Սու-  
րէն Ազարբեկանը գրել է. «Համաստեղը իմաստուն լուծում տուեց ար-  
ւեստի ժողովրդայնութեան պրոբլեմին, գտնելով, որ ժողովրդայնութեան  
հիմքերը նուաճելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ է իզնել ժողո-  
վրդական հերոսների հոգու անյատակ խորութիւնները, ճուրբ հոգեբա-  
նական վերլուծումը գուզակցել գեղեցիկի իտէպին, ընդգրկել մարդկա-  
յին կենդանի ապրումների այն անսահման ընդարձակ տեսադաշտը, որով  
յատկանշուում են հասարակութեան ներքնախտերը»:*

*Ժողովրդայնութեան մի ուրիշ կարեւոր յատկանիշը՝ հայրենի երկրի  
կարօտը այնքա՞ն հզօր ու գերհզօր է, որ Համաստեղի հոգում մի՛շտ թարմ,  
մի՛շտ կենդանի, մի՛շտ պայծառ է պահում արեւմտահայ դաստի իր բնա-  
պատկերներով, մա՞նաւանդ իր գեղջուկ բնակիչների հոգեբանով, վշտերով,  
տառապանքներով, իր հայեցի մթնոլորտով: Հայրենիքից հեռանալուց տա-  
տամեակներ յետոյ էլ հեղինակը զարմանալիորէն այդ մթնոլորտի մէջ է ինք-  
նամոհի ապրել հեռուոր Ամերիկայում, քանի որ հոգին չի ենթարկուել ան-  
հարազատ ազդեցութիւնների, մնացել է անարատ, հայրենի ապրումների կա-  
խարդանքի մէջ: Նրա ստեղծագործ երեւակայութիւնը լիութեամբ գոյներով  
միշտ տեսնում է հայրենի բնաշխարհը շինական մարդկանց տաօրեայ աշխա-*

տանքում, առտնին կենցաղում: Նա շունի արհեստական, կեղծ կերպարներ, գրքունակ նկարագրեր: Նա իր նախորդի՝ Ռուբին Զարգարեանի նման գիտեզեղագիտական բարձր ճաշակով ճարտարապետել, կատարեալ ոճով, նովելային, վիպային Հանգոյցներով կառուցել պատմածքներ, որոնց բնոյշ Հանուր կատոյցի մէջ բոլորովին չի զգացում որեւէ արհեստական ճիւղ: Ամէն ինչ ընթանում է սովորական, բնական ճանապարհով, ինչպէս ատօրեայ կեանքում: Այդ «նատուրալ» բնականութեան Հետ ընդելուզուած են բիւրեղացած ըզզացումներ, ապրումներ, դիւզական կեանքի թանձր, Հազորգական մրթնոլորտ: Դա կեանքի լուսանկարչական պատկերացումը չէ, այլ ունի Հողերանական իտրք, յուզական խորութիւն, աշխատաւոր մարդու ոգու, ձգտումների յարաճու շարժում: Թէեւ Համաստեղը ապրել է Ամերիկայում, սակայն նրա ստեղծագործութեան արժանները խորապէս մխրճուած են մնացել Հայրենի Հողի ընդերքը, որտեղից կենսական աւիշ, գոյն ու բոյր, դիմագիծ ու նկարագիր է ստացել: Եւ այդ Հայրենական բոյրը, Հայրենական կենսատու մթնոլորտը զգացում են տաղանդաւառ արձակագրի Համարեա՝ բոլոր երկեւրում:

Համաստեղը խորապէս գրող է: Նա ո՛չ միայն տեսնում ու գնահատում է զեղեցիկն ու ազնիւը, այլև բացայայտում է անազնիւ Հողիները, սովորութիւնները, սոցիալական անարդարութիւնները՝ պատկերելով խոնարհ մարդկանց ողբերգական վիճակը:

Շատ ճիշդ է նկատել Հայ գրականութեան մեծ երախտաւորներից մէկը՝ Արշակ Զօպանեանը. թէ Համաստեղի «... տեսողութեան նորութիւնը կը կայանայ բացարձակ առարկայականութեան մը մէջ: Լիակատար իրապաշտ է ինձ: Համաստեղ հարագատ ու վնիտ ձայն մըն է, որուն մէջէն գիւղը ինքզինք կ'երգէ: ան մտած է իր նկարած տիպերուն մորթին մէջ, խառնուած է անոնց. իւրաքանչիւր պատմութեամբ մէջ անոր դերակատարները միայն կը տեսնեն: Հեղինակը թաքուն է անոնց մէջ, անոնց շարժիչ ուժն է: Անոր անձնականութիւնը կը յայտնուի իր յոնի մէջ, որ իրն է, իրմէ ստեղծուած, եւ որ մայմ պայծառ ու յանկուցիլ գեղեցկութիւնը կը պահէ բոլոր էջերուն մէջ: Այդ ինքնութիւնը կը յայտնուի նաեւ հոգեբանական քափանցողութեան ձիրքին մէջ, զոր ան ի յայտ կը բերէ իր պատմութեան ընթացքին եւ որով յայնքան ճշգործն կ'ըմբռնէ ու ցոյց կու տայ իր գիւղին բնակարաններուն, մարդերուն ու անասուններուն հոգեբանութեան էական զիծերը, որով հաւատարմօրէն գիւղի մարդուն, բնութեան ու անասունին համապատասխան, իրերախառն կապակից, շագապատուած կեանքը պարզուել, խորունկ, տարերային, միշտ ինքնաբնութիւն ու հզօր, քաղցնի շէղութենէն, բարդութենէն, նրբութենէն գուրկ, բայց եւ անոր արուեստականութիւններէն, իմաստականութիւններէն, կեղծիքներէն ալ գերծա:

Ընթերցողի յիշողութեան մէջ անմոռանալի են մնում Համաստեղեան շատ տիպեր, որոնք քանդակակերտուել են Հողերանական ներթափանցման հզօր զգացողութեամբ, կշռոյթով, ինչպէս Հեյլէն քանդակագործ վարպետների ձօտ է: Կերպարների Համաստեղեան այդ քանդակաշարում մեզ գերում են Տափան Մարգարեանը, Միլոնները, Փիլիկ ամուսնները, Կարուկներն ու Մարանները, Քաջն Նազարն ու Զալօ շունը: Նկատենք, որ գրողը մեծ վարպետութեամբ է կերպարում կենդանիների շարժկայնութիւնը:

Համաստեղը կեանքը զեղեցկացնող եւ իմաստաւորող ազնիւ աշխատանքի երգիչն է: Ահա Տափան Մարգարը, շինական մի պարզ մարդ, որը առաւել սիրում է հողը, աշխատանքը, աւելի կապուած է իր լծակից գոմէշներին, քան իր Հարազատ կնոջը: Աշխատանքը երգն է Հայրենիքին: Աշխատանքի

ժարդը՝ Տափան Մարգարը, արեւից այրուած պղնձակերտ դէմք ունի ձեւեւ-  
տը փոթ-փոթ է, ինչպէս Հերկուած արտը: Ունի տափանի շափ լայն, սերմնա-  
ցանի թեւեր: Կեանքում միշտ լուռ է: Գիւղացիները յարգում են նրան, յաճախ  
նրա խորհրդին դիմում: Նա է որոշում սերմնացորի որակը, ցանքը ջրելու ժա-  
մանակը: Նրա սիրտը արտ ու արօտի, ջրտուջի, լծակից գոմէշների հետ է:  
«... գոյգ գոմէշներ՝ պարարտ դնդերնեքով, Տափան Մարգարի կուրծքին  
չափ լայն ծակատներով, ամբողջ լեռ մը իրենց ետևի քաշելու չափ հուժկու  
վիզերով»:

«Ամէն գարունին Տափան Մարգարը իր գոմէշներուն հետ դաշտ  
կ'ելլէր: Դաշտը, գարունին մէջ, գոմէշները իրենց պնշածակերը կը լայն-  
ցընէին, թեթև փոքորիկի պէս անցնող հովերն ամբողջութեամբ կը  
շնչէին, եղբիւրներով թուփեր կը փարէին, եպարտ գլուխնին վեր բռնած,  
կը վազէին, կը հեւային, ինչպէս հեկայ շոգեմէքենաներ: Որքան մեծ հա-  
նայ էր Տափան Մարգարին համար»:

Տանը, ճաշից յետոյ, Տափան Մարգարը նզարան փաթաթում էր ու  
բարձին յենուած հանդիստ առնում: Սակայն ի՛նչ հանդիստ: Նրա մտքում  
դաշտաթին աշխատանքների բովանդակ անհանդստութիւն կար:

Մի օր էլ Տափան Մարգարն իր գոմէշների հետ արտից տուն վերադառ-  
նայիս տեղատարափի է բռնում: Երկնքի կուրծքը ճեղքելով՝ ամպրոպին յա-  
ջորդում են կայծակները: Դաշտի անլեզու անասունները տազնապահար դեռ  
ու դեն են փախում ողբերգական բառայներով:

Եռտող դժբախտութիւնը վրայ է հասնում: Գիւղ տանող ճամբին, իր  
գոմէշների հետ, կայծակնահար ընկնում է Տափան Մարգարը:

Գիւղացիները սայլի վրայ տուն են փոխադրում տակաւին շնչող Տա-  
փան Մարգարին:

«Մահինին շուրջ հաւաքուած դրացիները նկատեցին, որ մահա-  
մերձը կոնակին վրայ աւելի շտկուեցաւ: Իր այյանդակ ու այրուած դէմքի  
շարժումով մէկը կը փնտռէր: Ումնի կարծեցին, որ վերջին անգամ կիմը  
Թամարը կը փնտռէ: Թամարը հոն էր, շատ մօտը, ամբողջ հասակը լացով  
փլած: Ա՛հ, եթէ վերջին անգամ միայն իր անունը տար, Թամար պիտի  
մտնար, պիտի ներքը ամէն ինչ, որպէս թէ, ոչինչ պատահած ըլլար:

— Ո՞վ կ'ուզես, Մարգար արար,— հարցուց իր եղբայրը:

— Մարտիկ, էսօր գոմէշներուն դուն նայիր: Էդ արտը կիսատ մնաց

ես վազը կ'երթայ տէ կը բամամցնեմ:

«Խօսեցաւ Տափան Մարգարը դողդոջ ու գրեթէ անհասկնալի բռնե-  
րով:

«Ան այլեւս իր կիսատ թոզած արտը չպիտի կրնար լմնցնել: Ա՛յո,  
եթէ գիտնար, թէ գոմէշները ի՛նչ եղած էին...»:

Համաստեղեան այս գրականութիւնը, ինչ խօսք, որ մեծապէս օգնում  
էր արտերում բորբոք պահելու կորցրած գիւղի ու գաւառի հարազատ, տոհմիկ  
պատկերները, կարօտի համամարդկային զգացողութիւնը, վերակենդանաց-  
նում էր շինական մարդկանց անհետացած կերպարները, օտար արտերում  
զգայական Հայաստան ստեղծում, այդպիսով իսկ մեծապէս նպաստելով  
սփիւռքահայութեան ազգապահպանմանը, գոյատևմանը:

Համաստեղը ամերիկահայ ու ամերիկեան կեանքից եւս վրձնել է պատ-  
կերներ՝ ամերիկացի կամ ամերիկահայ կերպարներով: Նման բովանդա-  
կութեան պատմուածքներ են «Ձոնը կար ամուսն էր», «Չաւլով կարկան-  
գակ», «Թափառաշրջիկի մը օրագրէն», «Վարդան», «Լուիսա աղբարը եւ  
աղաւնին», «Պուպրիկը», «Հայաստանի յեաներու սրնգահարը» շափածոն,  
որը բառ առ բառ տողորուած է հայրենարարձութեամբ:

Յիշեալ ստեղծագործութիւններէ մասին շատ քննադատներ այն կարծիքն են յայտնել, թէ Համաստեղին չի յաջողում ամերիկահայ կեանքը պատկերել ամերիկեան մթնոլորտում կամ ամերիկացու տիպեր կերտել: Մեզ թւում է այս դնահատականը ճիշտ չէ: Պարզապէս նուիրական վերյուշ գարձած արեւմտահայ գաւառը, թանջպարը, արեւմտահայ կեանքն ու կենցաղը զգայական այնպիսի՝ խորութեամբ, այնպիսի՝ գունեղութեամբ ու յուզականութեամբ են տրուած, որ ստուերում են ամերիկահայ կամ զուտ ամերիկեան կեանքից Համաստեղի գրած յաջող պատմութեանքներն անգամ:

Մինչդեռ ամերիկեան մի ընտանիքի կեանքը պատկերող «Պուպրիկը» պատմութեամբ ազատօրէն կարելի է տեղաւորել որեւէ դասագրքի մէջ: Ամերիկայի չքաւոր, բանուորական մի ընտանիքի ողբերգութիւնն է պատկերուած պատմութեամբ: Նկարագրուած են հարուստ ձուլարանատիրոջ եւ աղքատութեան մէջ տառապող բանուոր Քոմասի կեանքի հակասութիւնները, սոցիալական բախումը: Հողերանական բախումներն էլ նկարագրուած են վարպետ գրողի գրչով: Բանուոր Քոմասի եւ Նոր Տարուայ նուէրի սպասող նրա գուսար փոքրիկ Հելենայի ողբերգութիւնը պատկերուած է բնական ընթացքով, խոր յուզականութեամբ:

Ռմանք կարծում են, թէ Համաստեղը չի արձագանգել Եղեռնին, որովհետեւ չի անցել արիւնոտ անապատներով, չի տեսել հայոց մեծագոյն ողբերգութիւնը: Այդ, ի հարկէ, ճիշտ չէ: Ինչպէ՞ս կարող է մարդկային խիղճը ցնցող ազգասպանութիւնը վրիպել Համաստեղի զգայուն հոգուց:

Հայոց բռնազաղթի նկարագրուած է նրա «Երբնէկ այն օրերուն» պատմութեամբ, «Սպիտակ ձիաւորը» վէպի մի հատուածում: Իսկ 1923ին, Ամերիկայից Եւրոպա լքող պատմիչի դուրս գալով, Համաստեղը եղել է Մերձուտոր Արեւելքում, յատկապէս Գնացի ու իր հոգու աչքերով տեսել ահազողու Տէր-Չօրի անապատը՝ արեւմտահայութեան այդ մեծ զրհեցմանոցը, որի անմիջական արտայայտութիւնն է «Գանկի մը հետ» խոհական խոտմիջ պատումը: Արձակագիրը հողեկան ծանր պայուսներէ մէջ լքում է արարական արիւնոտ անապատներով, տեսնում ճերմակած սկիորներ, քայքայուած կմախքներ, ողնաշարներից անջատուած ծնկի ոսկորներ եւ գանկներ, գանկեր: Եւ այդ բոլորը աւագի մէջ կիսով թաղուած: Արձակագիրը վերցնում է բազում գանկերից մէկը եւ մտորում. «Անէ՛ծի մը չափ հզօր արտայայտիչ էին անոր գօրաւոր շարք ակռաները ու քարայրներու նման երկու այճեքուն խոռոչները, ուրկէ կարծես անծանօթ յաւիտեանակնուրիցը կը սկսէր ճիշդ աւերակ հայ վանքի մը պէս, որուն փլած որմերուն վրայ մամուռի մը պէս բռնուած աւանդաւորի մը կը փարի: Մեմք համբու ընկեր դարձանք — ես եւ գանկը:

«... Եթէ միայն գիտնայի՞ր անունը այդ գանկի... իմ յուզուած երեւակայութեանս մէջ անուններ եկան շարքով եւ այդ անունները մարմին առին, առին հասակ ու ծանր դէմք: Ես նոյնիսկ իմացայ անոնց ձայները, որոնք լուրբեմն պէս իմաստուն էին եւ հզօր»:

Եւ անունների տողանցք է կատարում, որոնք արեւմտահայ կեանքի մի քանի էական կողմերն են յատկանշում: Մահտեսի Արութ. ոճագործները յափշտակել են նրա երկու սիրուն աղջիկներին, որոնց գէմբերին գեղեցկութիւնը ծաղկի պէս կը ծաղկէր: Մակար Վարժապետ. աշակերտներին ուսուցանում էր Անանիա Երրակացի ու Ղազար Փարպեցի: Տէր Թաղիկ. ծերացած ձայնի եւ շնչի մէջ դեռ խունկը կար: Ունէր միւռնի պէս բարի աչքեր, որոնք լայն թեւերի հետ երկինք կը բարձրացնէր աղօթելիս: Մարութեանց Աստուհիայ, թիկնեղ մի հողագործ, որ հինգ դոմէճներով Հայաստանի հողը կը հերկէր... Գուշն ուսնչպար կարոյի գանկն էր սա, որ կիրակնօրեայ ժամ պատա-



բազէն յետոյ գնացել էր իր արտը՝ առաջին ծիւնը տեսնելու եւ վերադարձին տեսել էր ժամատարմանը, որոնք եկել էին աշխատատեղը ու խաղաղասէր շինականների հետ արհեստ դասաստան տեսնելու, ծիւ ու ծաղիկ շորացնելու: Եւ, սակայն տէր-գործան գանկի շուրջը համատեղեան ծանր, մղձաւանջային մտորումները աւարտուած են կենսահաստատ եզրակացութեամբ: «Գանկը այնտեղ, սեղանին վրայ էր, երբեմն մոտի մը ազօտ լոյսով: Գանկը կը մտածէր, գանկը կ'այրէր, կը շնչեր կարծես ու կը խօսէր իմաստուն լռութիւնով: Անոր սէշ դեռ երա՛զը կար, ինչքան ալ թշնամին ուզէր գայն աւազով լեցնել: Ու կը սպասէր, կը սպասէին 1915ի բոլոր նահատակները կապարճաւոր Հայկ Դիւցազնի հզօր շեփորին, որ հաւաքեն իրենց ոսկորները, կանգնին օտփի, հզօր բանակներու պէս, ապրողներու հետ տէր կանգնելու իրենց հողերուն, վանքերուն, դպրոցներուն, իրենց կանաչ արտերուն ու նաւասարդեան առաւօտեան ծխանի ծուխերուն»:

Համատեղի ծաւալուն երկը «Սպիտակ ձիւնը» վէպն է (1000 էջ), որ լոյս է տեսել իր Անճելոսում: Դա արեւմտահայ կեանքը լայն կտաւի վրայ պատկերելու մի հետաքրքիր փորձ է: Բազմապլան ու բազմաշերտ այդ վէպի գլխաւոր հերոսը հայ շինականն է, որ կենսատու հողի հետ կուի է տալիս, տքնալան աշխատում, սրբազան հողը ուռուցում իր արդար քրտինքով եւ հողածին բարիքն էլ պաշտպանելու համար պայքարում է ամէն կարգի յափշտակչների դէմ՝ ազատութեան ու արդար իրաւակարգի համար:

Ազգային գոյութիւնն ու ընտանեկան արժանապատուութիւնը պաշտպանելու, պատմութեան բեռում գոյատեւելու համար հայ ժողովրդի սանչպար զաւակները լեռ են բարձրանում, Ֆետայի դառնում, քրտինքի հետ արին թափում: Աս, արդարեւ, վաւերագրական վէպ չէ, այնտեղ մարմնաւորում չեն մեծ Ֆետայիների՝ Աղբիւր Սերոբի, Անդրանիկի, Գէորգ Զաւուչի, Արտուրի կերպարները, այլ ստեղծուած են Ֆետայիների ընդհանուր, հաւաքական կերպարներ: Տաղանդաւառ գրողին, գծրափառարար, չի յաջողուել համապատասխան գործողութիւնների մէջ զարգացնել եւ իսկական դիտարկ հերոսներ գործնել ժողովրդի տառապանքից ծնուած ֆիգայիներ Մարտիկին ու Կիրոսին: Պարզաօրէտ հովիւ Մարտիկը Անդրանիկ չի կարողանում դառնալ: Ես յեղափոխութեան խորհրդանիշը չէ, ոգին չէ, ինչպէս Անդրանիկը, Աղբիւր Սերոբը, կամ Գէորգ Զաւուչը: Ես չի կարողանում համարձեւել յեղափոխութեան ուժերը, բարձրացնել ազգային-ազատագրական շարժումը: Բացառութիւն է կազմում շարքային Ֆեդայի Արջ Սապոն, որ անկողորմ ու ուղղամիտ գիւղացի է, որի հերոսականութեանը հաւատում ես: Երաքային շատ ֆիգայիների կերպարները աւելի բնական են, համակող:

Ինչպէս արդէն ասացինք, «Սպիտակ ձիւնը» ֆիտայական շարժման վաւերագրական տարեգրութիւն չէ, այլ վիպական երկ է՝ իր ուժանտիկ, զոսցական մթնոլորտով, ինչպէս Կոստան Զարեանի «Նաւը լերան վրայ» վէպը, որ հեղինակի ստեղծագործական երեւակայութեան եւ մտածելակերպի արդիւնքն է: Ես չեմ չէ՞՞ ազգային-ազատագրական շարժման դադափարախօս ու մեծ երգիչ Բաֆֆու վէպերում էլ:

«Սպիտակ ձիւնը» սիւժետային կուռ կառույց չունի: Ետտ են զարտուղումները: Վէպի առաջընթացը պայմանաւորուած է ոչ թէ որոշակի գործողութիւններով, այլ վիպայինց աւելի պատկերային, նկարագրական հոսքով: Գործողութիւններին փոխարինում են նկարագրութիւններն ու մտորումները:

Ձեռքով վէպի կառուցումը ճարտարապետական կուռ գծերի բացակայութեանը, իր հիւթեղ գրչով միշտ ներկայ է Համատեղը: Գեղեցիկ հատուածներով, կերպարներով, ժամանակաշրջանի հոգեբանութիւնը բնութագրող

բովանդակութեամբ արձակագիրը նաև ճանաչողական մեծարժէք նիւթ է տալիս: Ինչպիսի՜ ջերմութեամբ են նկարագրուած Մարտիկի եւ Ջէյնայի սոսմանտիկ ապրումներով սիրային յարաբերութիւնները, խոովայոյզ հոգեկի՛ճակները: Վէպի շատ էջերում գիւցազնական շունչ կայ եւ թրթուռն քնարի մեղեդայնութիւն:

Այսու ամենայնիւ, ինչպէս նշեցինք, Համաստեղի վէպը թուլացնում են վիպային հոսքի համամասնութիւնների խախտումները, կենդանի գործողութիւնների, կենդանի երկիւտութիւնների փոխարինումը պատմողական ոճով, երբեմն անհարկի նկարագրութիւններով, նամակագրութիւններով, այնուամենայնիւ, վէպը շնչում է գիւցազնական շնչով եւ Համաստեղեան մեղեդայնութեամբ:

**Յասուկ ուշագրութեան է արժանի Համաստեղի լեզուն:**

Գրական ստեղծագործութիւնների լեզուի առանձնայատկութիւններին անդրադառնալով՝ ակադեմիկոս էդ. Ջրբաշեանը լեզուական փակտորը միշտ պայմանաւորում է տեղի, միջավայրի իւրօրինակութիւններով, պատկերի բնոյթով, թեմատիկ-գաղափարական բովանդակութեամբ: Պրակտիկայում նոյնն է Համաստեղի համար էլ: Լեզուն այնչափ կարեւոր տեղ է զբաւում արձակագրի արուեստի սյուրտում: Հասկանալի է, գրական երկի բոլոր պատկերները, իւրաքանչիւր միտք, հոգեկան ապրում, նկարագրութիւն, գեղարուեստական մանրամասնութիւն, ամէն ինչ այստեղ հանդէս է գալիս միմիայն լեզուական այս ու այն ձեւի մէջ: Ուստի, լեզուի կատարելութեան մակարդակը առաջնահերթ նշանակութիւն է սասանում Համաստեղի երկերի գեղարուեստական մակարդակի արժեւորման մէջ:

Ինքը՝ Համաստեղը, չափազանց բարձր դնահասելով լեզուի գեղարուեստական գերն ու ընդհանուր նշանակութիւնը, գրել է, թէ լեզուն արուեստի կէտն է: Որ լեզուն գրական երկի բովանդակութեան անհաղորդ, հազուադէպ նման լոկ արտաքին ձեւ տուող, երեւոյթ չէ, այլ՝ ներթափանցում, մանում է ստեղծագործութեան արիւնսաար երակներին մէջ, շէշում, յտասկեցնում, աւելի ցայտուն դարձնում ու մեծապէս ուժեղացնում երկի գեղարուեստական ազդեցութիւնը, ուժեղացնում բարոյական-գաղափարական բովանդակութիւնը: Համաստեղի երկերում բովանդակութեան եւ ձեւի նման փոխներգործութիւնը յանդում է անբաժան միասնութեան՝ վկայելով գրողի մեծ տաղանդը:

Հասկանալի է, թէ ինչու արձակագիրն իր ստեղծագործական տքնաջան աշխատանքի ընթացքում մեծապէս հոգ է տանում, որ լեզուն օրգանապէս մերուի երկի բովանդակութեանը, փոխադարձ ներթափանցմամբ զօրացնի ստեղծագործութեան համոզութիւնը, յուզականութիւնը, գեղարուեստական ուժը, որ լեզուն լինի կենդանի, խօսուն, պարզ, գարեթի ընթացքում ձեւաւորուած ժողովրդային լեզուամտածողութեանը հարազատ: Այդ բանի կենսազորմանը մեծապէս նպաստում է այն բնատուր իրողութիւնը, որ Համաստեղն ունի երաժշտական ականջ, ներթափանցող, զգայուն աչք, խոովք ապրող սիրտ՝ պայմանաւորուած մարդկային գերզգայուն զգայարաններով: Համաստեղի գրիչը չափազանց հաղորդական է եւ գեղագիտական մեծագոյն հանոյք, հոգեկան բաւարարութիւն է պատճառում, խորապէս յուզում, մեզ տանում մարդկային ազնուագոյն զգացումների ներաշխարհը, ստիպում խորապէս սիրել, թախծել, վշտանալ, երացել, խորապէս ապրել գրական երկի ափսարների կեանքով, նրանց արարքներով, պատումի իրադարձութիւններով, հերոսների հոգեկան վերիվայրումներով:

Այսպէս գրական դասանանքով Համաստեղը հեռու է կանգնած ինչպէս

լեզուի գրասենեակային շտաբի թիւնից, այնպէս ալ քաղցր-մեղր զարդարանքներէց, բառի շոյալու թիւնից լեզուս եւ ընդհանրապէս արուեստում՝ մեւապաշտութիւնից: Նրա ռեալիստական կոնկրետ, թանձր լեզուն նկարագրութիւնը տեսանելի, շօշափելի է զարձնում եւ քանդակագործ վարպետի նման ուղղակի քանդակում պատկերները, կերպարները, հոգեբանութիւնները, մեծապէս օգնում տիպական բնաւորութիւններ ստեղծելուն, հայրենի բնութեան ու գեղջկական կեանքի զարմանալիօրէն հարազատ արտացոլմանը:

Մեծ արուեստագէտ, արուեստականութիւնից հեռու կանդանազ գրողը զգայուն ունկնդիր է իր ներքին ձայնին, գրական հաւատամքին, յուշ-խատակներին: Ընթերցողը բոլոր զգայարաններով փոխադրւում է նրա պատկերած կերպարանական, Ֆիզիքական ու հոգեկան աշխարհը:

Համաստեղի պատումներն ընթանում են խօսքի բնական, կենդանի հոսքով անզարդ ու հազորական: «Ամէ՛ն՛ն գեղեցիկ զարգը անգարգուն-թիւնն է», - սակ է հայ երգիծական գրականութեան դասաթ Յակոբ Պարոնեանը: «Ո՛ւր պարզութեան մէջ է», - հաստատել է մեծ Թումանեանը: Այս հաստատումները լիովին համընկնել են Համաստեղի գրական գաւառներին, գեղադիտական սկզբունքին: Արեւմտահայ գաւառի կեանքը պատկերող պատմութեան շրջանում նա շափի նուրբ զգացողութեամբ օգտագործել է գեղական խօսելակերպի կենդանի երանգը ջուշազրոյ արտայայտական միջոցներ, թեւաւոր խօսքեր, բառեր ու ոճեր՝ գնայով իր ուսուցիչներ Քյիլատինցու եւ Բուրէն Զարդարեանի հետքերով, բայց խուսափելով գաւառաբարբառով գրուածքը ծանրաբեռնելուց, պարզունակութիւնից կամ խիստ ոճաւորումից: Յիշեալ իր երկու ականաւոր հայրենակիցներէ ստեղծագործական ժառանգորդը լինելով հանգերձ՝ Համաստեղը մնացել է իւրօրինակ, ինքնատիպ ո՛չ միայն լեզուի հարցում, այլեւ՝ գրական ընդհանուր ոճի, կառոյցի, պատկերներէ, կերպարներէ, հոգեբանութիւններէ կերտման ու բացայայտման ոլորտներում: Գիւղական խօսելակերպի կենդանի երանգ տալու համար նա երբեմն օգտագործում է գաւառաբարբառի առանձին գարձուածքներ, արտայայտութեան ու բառի կրկնութիւններ, այսու ամենայնիւ, արձակագիրը դէմ է լեզուական «նատիւ բալիպին», գրականութեան լեզուն գաւառաբարբառով խճողելուն ու գրա հետ կապուած շարահիւսական ու մեւարանակտան ընդունուած օրէնքները շրջանցելուն:

Ամերիկահայ անուանի գրողներ Բենիամին Նուրիկեանի, Վահէ Հայկի, Արամ Հայկազի լեզուի վրայ մեծ ազդեցութիւն է թողել համաստեղեան այս լեզուամտածողութիւնը, ընդհանրապէս նրա ոճը, շարահիւսական համակարգը:

Պիտի նշել նաեւ, որ արձակագիրը խիստ տարբերակում է ստեղծագործութեան լեզուն՝ տարբեր նիւթերի ոլորտում: Օրինակ, գեղջկական պատումների լեզուից ընդհանրապէս տարբեր է նրա փիլիսոփայական-քննարկական ստեղծագործութիւնների լեզուն: Այդ տարբերակումն անմիջապէս զգացում է «Գիւղը» «Անճրեւ»ը, եւ ապա «Աղօթարան»ը ընթերցելիս: Վերջինի մէջ լեզուն զուտ գրական է՝ բոլորովին զերծ գաւառաբարբառից, շարահիւսումը, մեակերտումը նուրբ է, քննարկական-խոհական ու կոտորակալ մեծի մէջ, այն, ինչ պահանջում են տուեալ երկի, նիւթի փիլիսոփայական տարբերիչ առանձնայատկութիւնները:

Համաստեղի վերջին շրջանի իւրօրինակ ստեղծագործութիւններէց է «Աղօթարան»ը, որ լոյս է տեսել 1957ին: Քննարաշունչ ու խորիմաստ արձակ բանաստեղծութիւնների շարք է ամբողջ գիրքը, որի մէջ խտացած են իլլւման-միզմը, կենսասիրութիւնը: Նրանի, որ ծնուել էմ, որ ապրում էմ, զգում, գոյութիւն ունեմ: Իւրաքանչիւր գրուած, մարդկային իւրաքանչիւր արարք

ցայտուն է դարձնում խոհական մի ապրում: Այսպես Գրիգոր Նարեկացին է ներկայ եւ նրա խնկարոյր ու իմաստուն աղաչանքն է լսում «Ազօթարան»-ի էջերից: Հոգին լիանում է, հմայում ու կախարդում համաստեղեան այդ երգ-երգոցից, որից յառնում է սիրտ մաքրող ու զուլայ նարեկեան աղօթքը. «Մեր սրբազան մարմինը լեցում է արեւով, երկնով, իմաստութիւնով, գարունով, կանաչով, զգայարաններու երանութիւնով, կնոյ բոցեղէն մարմնով, երածշտութիւնով. եւ մարդ ինչպէ՛ս հաւատայ, որ այդ բոլորը կրնան մոխրանալ յանկարծ:

«Ինչպէս հաւատայ, Տէ՛ր, որ քեզնով լեցում գանկ մը կրնայ օր մը բնակավայր դառնալ որդերուն...»:

Մարդու լինելութեան զազտներէն, կեանքի յարաշարժ հոսքի, զգայարանների իմաստութեան մասին մտորելով՝ նարեկեան բանաստեղծը յանդուժ է այն բանին, որ Աստուած ողջերի հետ է միայն, որովհետեւ նա կեանք է ու սէր, զարնան առաջին ծիլ ու սերմնացանի ոսկի սերմ, որ արեւի շողերի նման ճառագայթում է արտի մէջ: Նա հաւատում է, որ կենդ սիրոյ շերտութիւնը արեւի նման կարող է մեր հոգու պարտէզը ծաղկեցնել, մեր մարմնին տալ մշակական դարուն ու անձնական երանութիւն: Որ կինը կեանքը գեղեցկացնող, բարութեամբ լեցնող, արքայաւորող գլխաւոր ազգական է, մայրական մեծ խորհուրդ ունեցող դրախտային էակ, որ ամենագոր սէրն է ծնում ու բարութիւն բաշխում աշխարհին: «Տկար էակը» իսկապէս ներում եւ հոգր է, որ թեւեր է տալիս այդ մարդուն, ստեղծագործ աշխատանքի ներշնչում ու քաջագործութեան մղում:

Արձակագրի համար մայրն է մեծագոյն սրբութիւնը, աստուածայինը:

Բոլոր իրերը գեղեցիկ կը ժպտան, կանայք կը լինեն անսահման օրհնաբեր ու բարի, ինչպէս մայրը: Երազները միայն մարմնից կը ստանան իրենց գոյներն ու կերպարանքները:

Եւ երկրի վրայ կը գեղեցկանան մարդն ու մարդկայինը: Գեղեցկութիւնն ու բարին կը զառնան աւելի հոգր, քան նախանձն ու ստելութիւնը:

Կեանքն իմաստաւորողն ու քաղցրացնողը համարելով սիրոյ զգացումը, արձակագիրը գտնում է, որ սէրը մարդու գոյութիւնն իսկ է: Սէրը սկիզբն է կեանքի, նուազարանը մարդկային յոյզերի ապրումների, արարիչն է Հելլէնական սիրերգների, տեսանողը եւ արտացոլողը հոգու, գոյների ու գծերի, խոհերի ու յոյզերի, բնութեան ներդաշնակութեան, աշխարհի արարչագործութեան, Օլիմպոսի աստուածների...: Սէրը կեանքի, լինելութեան երջանկութեան շունչն է ու արարչանիւթը... Սէրը մարդու կատարելութիւնն է: Ու բանաստեղծը ազերում է.

«Տն՛ւր շնորհը, Տէ՛ր, որ մեմք լեցուինք իմաստուն լուսիւնով, ինչպէս արցունքը կը լեցուի աչքերում մէջ, եւ մեմք չգիտեմք խորութիւնը այդ արցունքին եւ կամ ինչպէս նայն աչքերում մէջ կը լեցուի խայտամբը ծախտին, որում արմատը նշնայէ անձանօթ է մեզի»: «Վա՛յ անոր, որ չի սիրեր: Ան կը նմանի անցրդի, քարքարոտ հողին մէջ ծայծ ցորենին, որ ունի հիւանդ ցօղուն ու պարայա հասկ»:

Համաստեղի աստուածը մարդն է, բնութիւնը, բարութիւնը, արդարը, գեղեցիկը, մեծ սէրը: «Ազօթարան»-ի Հեղինակն Աստուծոն բնորոշում է որպէս գեղեցիկ զաղափարների, գեղեցիկ զգացումների համամարդկային խոսքում, որ բարութիւնն ու սէր է ներշնչում, իմաստաւորում կեանքը, հոգեպէս բարեզարդում մարդուն, նրան դարձնում խոհական, զգայուն, մարդկային:

«Ազօթարան»ը բիւրեղացած, ազնուագոյն զգացումների պոռթկում է, մարդուն կատարեալ տեսնելու բարի ցանկութեան արտայայտութիւն:

«Ազօթարան»ը կարգալիս տալիս հաղորդականութեամբ երակներից մէջ

չըջան են անում նարեկեան օրհնարեր, մարգու կատարելութեանը տանող յոյզերը: Փիլիսոփայական խոհերը ոչ թէ խոտուում ու ջարանում են, այլ ոգի առնում, պոռթկում կենդանութեամբ, անասն ու ժող շարժում առաջ՝ գեղի լոյսերը կտրարգական: Կեսնքը լեռնային վտակի նման ջրը շարժում շարունակում է իր ուղին, սահում մարգագետինների կանաչի մէջով, ընկերանում թռչունների զայլայլին, բազմերանգ ծաղիկների լուռ համերգին:

Ու նորից կի՛նն է սիրոյ յաւերժական թաղուհին: Աէ՛ որ կնոջ մէջ ենք մենք սպրում բերկրանքը մեր գոյութեան, մեր լինելութեան, մեր յաւերժութեան:

Էինչա՛ն իմաստութիւն, Տէ՛ր, որ կնոջ մը վարսերէն փունջ մը կրնայ մեր արիւն մէջ սրտի մը պէս բարախել: Կի՞նը, որ մեր կողքին է, միշտ մեզի հետ, մեր պարտէզին մէջ եւ սակայն կարծես հեռու, անձամօք սանձմաններէն կը կանչէ մեզ անձամօք, կախարակական ոգիի մը պէս ու մենք չգիտնեմք յաճախ ո՞րն է իրական. այն, որ մեր կողքին կը քալէ, թէ այն, որ մեզի անձամօք սանձմաններէն կը կանչէ: Կը կանչէ բերկրութեան, կը կանչէ տրամուրեան, կը կանչէ կեանքին ու գեղեցկութեան: Կի՞նն է, որ կը յարէ մահուան ամէն անգամ, որ իր բազուկներուն մէջ երեխայ մը կը գրկէ: Այն ինչա՛ն իմաստութիւն, Տէ՛ր, որ բաշխեցիր մեր մարմնին:

Համաստեղի Համար մարմնի նիւթական էութիւնից է բխում տառուածայինը: Աստուածայինը, որ մարդկային գոյութեան համաճեղան է, կեանքի, սիրոյ երգը: Եւ սիրոյ յաւերժականութիւնը մարդկութեան յաւերժականութիւնն է:

Մարդասիրական աշխարհագրոգոյթիւնը պայծառացնում է Համաստեղի խոհ-չուզական աշխարհը, նրան ամբողջովին գարնանում հուժանիտա, բարու, գեղեցիկի երգիչ:

Բնապաշտութիւնը, արդար վաստակը Համամարդկային մեծագոյն աւարտինութիւններ են: Մարդկայինը ազգային սահմաններ չի հանչում: Մարգուն մարդկայնացնող մեծ սիրոյ սահմանը անսահմանութիւնն է: Աստուած մարգու մարմնի ու զգայութեան մէջ է, եւ մարգու Եւր Համանու աղն է զգայութիւնները: Այս ազնիւ մտքերն է թեյագրում Համաստեղը, որի զրականութեան շունչը ազգայինն է ու Համամարդկայինը: Եւ սէրն է, որ ներգաշնակու՞մ, իմաստաւորում է կեանքը, գեղեցկութեամբ, բերկրանքով լցնում այն:

Այսպէս, ծառ ու ծաղիկ, մանկան ժպիտի, երգ ու երաժշտութեան, սիրոյ սրտերի մէջ ներկայ է տառուածայինը: Արտում սեր ունեցող մարդը բարի է լինում ու լուսաւոր է տեսնում աշխարհը: Իսկ բարութիւնը հոգին առողջ, զգայուն է պահում, պայմանաւորում մարգու երջանկութիւնը: Մինչդեռ շտապ, նենգամիտ մարգու հոգին հիւանդ է, որով նրա Համար բացաւում է հոգեկան Հանգիստը, կեանքի երջանկի թրթիւրը:

Ահը ընդհանրական է, տիեզերական, բայց Հայի սէրը Համաստեղի Համար ազգային իւրայատուկ կողմեր էլ ունի:

Իր ստեղծագործութեամբ զրոգը յուզում է ընթերցողին, թախիծ է առաջացնում: Իսկ լուսաւոր թախիծ է, կեանքի գեղեցկութիւնները Հաստատող, լուսատեսութեան ամենող, հոգին ազնուացնող թախիծ:

Արեւմտահայ գուստը պարագրիտը հայկական մի կապոյտ խորհուրդ է նստած Համաստեղեան պատմիչների վրայ, մարդկային տառապանքի, բարութեան, վեհ զգացումների նարեկեան մի խորհուրդ: Երաժշտական, կենդանի շունչ կայ արձակագրի նկարագրած բոլոր իրադարձութիւնների եւ երեւոյթների մէջ: Բնական, կեանքով չի իրադարձութիւններ: Գրողը ոգեղենացնում է բնութիւնը, շնչաւորում, գոյն, խորհուրդ, հոգեբանութիւն տալիս: Բնութիւնը, մարդը, կենդանին իրենց էութեամբ ընդկուտում, մուչում են

իրար մէջ, ուժեղացնում միասնական զգացողութիւնը: Եւ ամենաչօք կարօտը տիրում է գրողի զգայուն սրտին ու գրչին:

Համաստեղը արեան իրաքանչիւր կաթիլով կապում է Հայրենիքի Հետ: Մենք տարիներ առաջ Հայրենասիրական այդ զգացումները արտայայտող նամակներ ենք ստացել նրանից, որով ցանկութիւն է յայտնել լինել Հայրենի Հողի վրայ: Բարձր էր գնահատում Հայրենիքի օգնութիւնը արտերկրի գրողին ու գրականութեանը: Ապագայի իր բոլոր յոյսերը կապում էր մայր Հայրենիքի Հետ: «Կը տարուիմ ըսելու,— գրել է նա,— որ արեւմտահայ բանաստեղծներու եւ արձակագիրներու հրատարակութիւնը Հայաստանի մէջ շատ մեծ նպաստ տարաւ: Առաւելապէս զգալի է արեւմտահայ լեզուի բարերար ազդեցութիւնը արեւելահայ բանաստեղծութեան մէջ: Ինչ ալ ըլլայ, հոն է մեր յայր եւ մեր կորիզը: Հայաստանէն պիտի գան մեր ազգային տաղանդները: Հոն, ժողովուրդին եւ հոգին մէջ է սազմը մեր ազգային երազներուն»:

Մեր մեծ Վարպետը՝ Աւետիք Իսահակեանը, բարձր գնահատելով Համաստեղի կենսայի պատմութիւնը, թանձր ռեպլիզը, հաղորդական ոճը, գույւղ լեզուն, 1922ին գրել է նրան. «Մրանէ այնպիսի անգնահատելի յատկութիւններ են, որոնց շնորհիւ Գուգ, Աստուած տայ, որ շատ ապրէ՛ք, բարձրանալու է՛ք շատ բարձր, դառնալու մեր գրի փառքերից: Սիրում եմ ձեզ եւ ձեր տաղանդը, շատ սիրելի Համաստեղ»:

Արեւմտահայ դասական գրականութեան ակնաւոր դէմքերից մէկը՝ Տիգրան Կամսարակեանը եւս Համաստեղին գրել է. «Գրականութեան եւ ոչ մէկ լեզուով չեմ յիշեր կարգացած ըլլալ պատմութեան, որ ձերիմներէն աւելի արձագանգ ձգեն հոգիներու մէջ. ապշեցուցիչ է ձեր գայումը, արտայայտելու կարողութիւնը. բանականութիւնը, իրականութիւնը, կեանքը, Ֆրանսուսիկն կը կաթկթեն ձեր գործերէն»:

Սկզբնապէս գրողի ժամանակ Համաստեղի գրականութեանը նոյն բարձր գնահատականն են տուել սովետահայ գրականութեան մեծերը՝ Զարինջը, Բակունցը, Թոթովենցը եւս: Իսկ Գուրգէն Մահարին Համաստեղի մահուան առթիւ գրել է. «Համայն աշխարհում ցրուած հայկական պանթէոնը հարստացաւ մի տապանաքարով եւս: Սկսում է հայրենասէր գրչի մշակի երկրորդ ծնունդը: Նրա գրական մեծ հարստութիւնը պէտք է վերադարձընել իր օրինական տիրոջը, մայր ժողովուրդին»:

Կրկին էր: Համաստեղի գրականութիւնը սողորուած է Համապարփակ բարութեամբ, կենսասիրութեամբ, Հայրենարարականութեամբ, մեր ազգային առաքիւնութիւնները անաղատ պահպանելու մտահոգութեամբ, մարդու Հանդէպ շէրձ սիրով, մարդու կատարելութեան ձգտումով:

Մահուանից չէլ առաջ՝ 1966ին լոյս ընծայած «Առաջիմ սէր» վիպակում, որը եզաւ նրա կարապի երգը, գլխաւոր հերոսն այսպէս է ասարտում իր խօսքը.

«Կ'ուզեմ այնտեղ, Հայաստանի մէջ հայ ժողովուրդին հետ ըլլալ: Տանի մեր ժողովուրդի արեւոտ օրերն ու լուս տառապանքները...: Կը հաւատամ, որ ամէն մէկ հայ ուժ մը կ'աւելցնէ հոն: Հայաստան այդ ուժերուն պէտք ունի՝ տէր դառնալու իր հոգիին: Այստեղ այդի մը փորել եւ կամ ծառ մը տնկել»:

Համաստեղի գրականութիւնը կենսայի է ու կը դիմանայ այնքան ժամանակ, ինչքան պատմութեան բնուած կը դիմանայ Հայոց լեզուն:

## ՀԱՄԱՍՏԵՂԻ «ԳԻՒՂԸ»

Գիւղական աշխատանքի ջատագովն է Համաստեղը, բնութեան սիրահարը, կենդանիների մօտ բարեկամը: Այդ է վկայում նրա պատմուածքների ժողովածուն, որը կրում է «Գիւղը» անունը եւ պարփակում ընդամէնը 11 պատմուածք:

Գիւղն է Համաստեղի ստեղծագործութեան աղբիւրը՝ իբր արտերով, դաշտերով ու այգիներով եւ գիւղացին՝ իբր աշխատանքով, առօրեայ նիստ ու կացով, պայտնական սովորութիւններով ու նախապաշարումներով: Եւ եթէ յիշածս 11 պատմուածքներից երկուսը («Վարդան» եւ «Զոհր Կար Ամուսնէր») ընթերցողին գիւղական պարզ մթնոլորտից փոխադրում են կապիտալիստական աշխարհը – Ամերիկա, ապա այդ հանդամանքը մի նոր գիծ է մտցնում միայն Համաստեղի պատմուածքների մէջ, բայց ոչ էական փոփոխութիւն նրա պատմուածքների բնոյթի մէջ: Նրա պատկերած զէմբերն այդտեղ եւս ապրում են գիւղի շնչով, տենչում իրենց պայտնական ջրազացը, ապրում իրենց արտա-անդաստանի երազով: Հենց այդ երազին էլ զոհ է գնում Կար Ամուսնէ՝ գործարանի մեքենայի «անիւներին փաթթելով իր մարմնի կտորները»: Այնպէս որ, «Գիւղը» ժողովածուն Համաստեղին ներկայացնում է որպէս զտարիւն գիւղազէտ:


Բուական շատ են Հեղինակի նկարած աշխատանքի ներկայացուցիչները: Նրանք յաջող են դժուած ո՛չ միայն աշխատանքի վայրում, գործի ժամանակ, այլեւ հանդստի ժամանակ, ընտանիքում եւ հարեւանների հետ ունեցած փոխ-յարաբերութեան շրջանակում: Հեղինակը դժուարութիւն չի դրում թափանցելու նրանց Հոգեկան աշխարհը, քանի որ այդ նախ եւ սահմանափակ հայեացքների տէր աշխատուորների սիրան իրենց շնորհի ծայրին է, ասում են ինչ որ մտածում եւ գգում են, առանց յետին մտքերի, առանց յետին նպատակների: Նրանք պարզ են ու մանկան չափ նախ իրենց յարաբերութիւնների, իրենց հաստատիքների, սնտոխապաշարութիւնների եւ նախապաշարումների մէջ: Եւ եթէ մի քանի գէպերում կարիք է յիշում որոշ չափով խորանալ Հոգեբանական վերլուծութեան մէջ («Միջո» եւ «Աղաւնիներ»), Հեղինակը պատուով է դուրս գալիս այդ պարտականութեան տակից, տեղ-տեղ միայն չափազանցած գծերի դիմելով:

Բնութեան սիրահար է Համաստեղը: Այդ կարելի է տեսնել նրա պատմուածքներում ցանցնուած բազմաթիւ հակիրճ նկարագրութիւններից, իսկ խոսքած կերպով «Աստղկան սայլը» պատկերում: Բայց այդ սէրն այնքան գայթակղիչ է Հեղինակի համար, որ նրան կարում է իրական աշխարհից եւ զցում ռումանտիկ-հեքիաթային աշխարհը, սիմվոլիստական գունաւորում հազորդելով նրա պատմուածքին:

(Հատուած)

(«Պրոնտար» արուեստ, գրականութիւն, գիտութիւն», 1928, թիւ 7)

Յ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ



ԿԵԼԵՆԱՆՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԵՎԱՆ ԳԱՄՐԱՐԱՆԸ

### ՅՈՅՄՆ ԱՆՊՏՈՅԳ ԳԱԼԻԳԻՆ

Մեծցայ, մեծցա՛յ որբի պէս, ձեռքիս տեղ սիրտը բացի,  
Սիրտս ամէնուն բաշխեցի ու նորէն որբ մընացի:  
Հաւատացի ամէնուն սիրով, ժպիտով մը անհուն,  
Նորէն միմակ մընացի, նորէն միմակըս լացի:

Ներսը ծննդայ, ներսը պար, ներսը միշտ երգ ու կիթառ,  
Զրժօտեցայ զբռներուն, լուս հեռացայ եւ անցայ:  
Լրտութեան մէջ մութ ու խոր մտիկ ըրի միայար  
Անձրեւին, որ անդադար մարմինիս մէջ կը տեղար:

Մտիկ ըրի յուշերուս, մահուան տխուր էայերգին,  
Ուր զագաղի մը ետեւ, որպէս թեթեւ լոյսի թեւ,  
Յոյսն էր մոլոր, որ կու լար, ձեռքին բռնած լարէփար:  
Յոյսը վազուան արեւին, լոյսն անըստոյզ գալիփին:

ՀԱՄԱՍՏԵՂ

digitised by A.R.A.R.@



# ՄԱՀ՝ ՍՈՒՐԷՆ ԱՂԱԲԱԲԵԱՆԻ



«Սովետական գրականութիւն» ամսագրի 1988ի 3րդ համարին կ'իմանանք, որ 65 տարեկան հասակին, Երևանի մէջ ժառանգել է գրականագէտ, քննադատ, խմբագիր եւ դասախոս Սուրեն Աղաբաբեան, որ ծնած էր 22 Յունուար 1922ին, Ղարաֆէլիտա (այժմ՝ Կիրովական) քաղաքը:

Սուրեն Աղաբաբեան 1944ին կ'ուսարա՛նք Երևանի համալսարանի ստալ գրականութեան քա՛մերը: 1945-48 կ'ուսանի ԳԱ Մ. Արեղեանի գրականութեան ինստիտուտի մէջ: Այդ տարիներուն ա՛ն ժառանգել է Ալեանգարի, այսա՛՛ Սովետական գրականութիւն» ամսագրի խմբագրութեանը: 1950ին կը պաշտպանէ Եփիզը Լայնիի Զարեանի ստեղծագործութեան մէջ» աւարտեալը եւ կ'արժանանայ բանասիրական դիտարկներու թեկնածուի աստիճանին, իսկ 1963ին՝ տաղիւրդի ակադեմիան, պաշտպանել է աջ Ակիսի Բաղունցը խորագրով ուսումնասիրութիւնը:

1964էն սկսեալ կրթական տարբերիչ նախաձեռնում Ս. Աղաբաբեան կը պաշտանավորէր Երևանի համալսարանին մէջ՝ իբրև սովետական գրականութեան քա՛մեր գործիչ:

Ս. Աղաբաբեան հեղինակ է 15է աւելի միջին եւ մեծ ծաւալի գործերու՝ մեծագրութիւններ, ուսումնասիրութիւններ եւ քննադատական յոդուածներ: Ան կազմած եւ խմբագրած է նաև գրական-նախնայ դասագիրքեր, իսկ իր գործերին տանը Թարգմանուած են ստալ լեզուներու:

## ՀՐԱՆՏ ՄԱԹԵՒՈՍԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Գրականութիւն բերելով Մահուտի ունայութիւնը եւ միջը, պաղտորեցնա՛ ու բիրտը, մարդկային համայնքի ներքին շղթան եւ բնութիւնը, բա՛ն ու բանը, կենսաբանական-սոցիալական-էկոլոգիական հեռագողթի ինդիւիդուալ ամբողջութիւնը, Հր. Մաթեւոսեանը, ինչպէս ճիշտ բնութագրում է քննադատը, փոքրիկ Մահուտի միջոցով իւրոյնի ներկայացնում է մարդկութեան պատմութիւնը, կամ, ինչպէս գրում է վրացի արձակագիր կրտսիճէն, Հրանտ Մաթեւոսեանն իրար է բերում մարդու եւ աշխարհի բիոլոգիական կենսագրութեան ծայրերը (ԵՄԻ Դարի հայ գրականութեան զուգանակայաններում, Երևան, 1984, էջ 377):

## ՌԱԶՄԻԿ ԴԱԻՈՅԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Ռազմիկ Դաւայեանը հոգեկան պաղտորներին բանաստեղծ է, ունիթիւնը, կարծր, գանգուածային գծերից միանգամայն հեռուոր եւ նուրբ, թափանցիկ, թաւշուշ, պաղտական թրթիռներին միանգամայն մերձաւոր բանաստեղծ: Աշխարհագրագրութեան այս կերպը հասարակութեան երևում է ճճա՛ սայերքի երկու շարքի (ԷՆԲԻՄԻ ԳՐԳՁ, ԵՆԴԱԿԻ ԱՄԱՆ) ներթաշարքում եւ շիպու պատանուքեանց առում, որտեղ յուրյն էլ պաղտորները են՝ սիրոյ պաղտոր, երազի պաղտոր, կարօտի պաղտոր, մանկութեան պաղտոր, հայրենի կզերթի, ծննդավայրի, բնութեան, յիսուն ու դարի պաղտոր, տառապանքի ու ցաւի պաղտոր, կորստեան եւ յայտնութեան պաղտոր: «Պաղտորներ»՝ հոգեկան մտնայ ներքնայ բազմազան ու անվերջանալի շարան, որով ամբողջանում է «քնարական հերոսի» ներաշխարհը (ԵՅՅՈՒԱԾՈՅՆ, ԿԻՄԱՆԿԱՐՆԵՐ, յուլիք, Երևան, 1982, էջ 330):



«ՍՊԱՀԱՆԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԸ»



ՍԻՐԱԲԻ ՏԵՐ ՆԵՐՍԵՍՅԱՆ

Վերջերս Պեյճեղյի մէջ Փրանսերն եւ անդշն-  
րեն լիզուներով լոյս ածուած Մալանի հայկա-  
կան մանրանկարները բարձրարժէք հատորը,  
հեղինակութեամբ Սիրաբի Տեր Ներսեսեանի եւ  
Արթակ Միխիլեանի:

Լաթակազմ եւ 200է աւելի մեծադիր էջեր  
(32x22 սմ.) բաղկացած այս հատորը կը հաշուէ  
134 գումար եւ սեւ ու ճերմակ վերաբաշտարու-  
թիւններ: Յառաջաբանը գրած է Գարեգին Բ. Կա-  
թողիկոս, որ Նոր Զուգայի իր առաջնորդութեան  
օրերուն, այս հատորը կազմելու նպատակով Սպա-  
հան հրահրած էր փրոֆ. Արտակ Միխիլեանը եւ  
մեծնարկած նիւթերու հաւաքման աշխատանքնե-  
րուն:

Գիտական կցակի արժէք եւ կարեւորութիւն ու-  
նեցող այս զիջքին հրատարակութիւնը ողջունելի  
եաց, Գարեգին Բ. Կաթողիկոս կը յայտնէ, թէ առա-  
ջին անգամն է, որ Նոր Զուգայի հայկական մեծա-  
դիրները ուշադրութեամբ առարկայ կը գտնան,  
նմանօրինակ տպուղիքի եւ ամբողջական մատու-  
ցումով մը:

Ապա, ան հանգամանորէն կ'անդրադառնայ Նոր  
Զուգայի Ս. Ամենափրկիչ վանքի եկեղեցոյ մէջ  
պահպանուած եւ յատկապէս Սպահանի մէջ ար-  
տադրուած մեծադիրներուն, ինչպէս նաեւ Հայաս-  
տանի մէջ եւ այլուր երբեմնագրուած եւ 17րդ դարու  
սկիզբը Իրան բերուած այն մանրանկարական  
նմուշներուն, որոնք հայկական մանրանկարչու-  
թեան զանաւարանին գոհարներուն շարքին կը  
պատկանին:

Այնուհետեւ, Հայկական մանրանկարչութեան  
անմրցելի մասնակցու Սիրաբի Տեր Ներսեսեանի եւ  
Պրոֆ. Երկր Համալսարանի մէջ դասախօս եւ հնագի-  
տական մէկէ աւելի կարեւոր հաստատութեանց մէջ  
պաշտօնավարող Արթակ Միխիլեանի համեմա-  
տարար եւ հետեւողական աշխատանքը բարձր  
գնահատելով՝ Գարեգին Բ. Կաթողիկոս կ'ընդգծէ.  
«Ուրախութեամբ գեղուն օրտով՝ այս գիրքը կը  
յանձնարարեմ անոնց, որոնք կը սիրեն եւ կը  
գնահատեն հոգեւոր եւ մշակութային այն ար-  
ժէքները, որոնք այս եւ նմանօրինակ հրատարա-  
կութեանց մէջ ի յայտ կու գան: 20րդ դարու  
վախճանին, որ ծանօթ է ժամկայքներու տագ-  
նապի շրջան» իրբեւ, եւ երբ որեւէ մէկ ժամանա-  
կէ աւելի մեծ կարիքն ունին մշակութային  
իրբեւ, անկեղծ եւ աւանակն հանդիպումի մը,  
նման գործ մը պիտի անդրանցնի ազգային մեղ  
աւանաններն եւ ընդգրկէ համամարդկային  
տարողութիւն»:

«ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ»

«Սովետական գրող» հրատարակչութիւնէ վեր-  
ջերս լոյս ածուած է Սերգէյ Վարդանեանի «Հայոց  
մայրաձաղաքները» խորագրեալ հատորը:

Յոր ապրումներու, պատմական փաստերու եւ  
հեկայական աշխատանքի արգիւնքը հանդիսացող  
Սերգէյ Վարդանեանի ուսումնասիրութիւնը Նոր  
լոյսեր կը սփռէ Հայոց 12 մայրաքաղաքներուն  
միջոյ՝ Վանէն մինչեւ Երեւան: Յաջորդաբար ներ-  
կայացուած են Հայոց 12 մայրաքաղաքները.՝ Վա-  
նը, Արմաւիրը, Երուանդաշատը, Արտաշատը, Տիգ-  
րանակերտը, Վաղարշապատը, Դուինը, Բաղարա-  
նը, Երեւակաւանը, Կարսը, Անին եւ Երեւանը:

Տարումնքի 1948ի վերջին թիւին մէջ, Ռա-  
ֆայէլ Իշխանեան ստորագրած է Ս. Վարդանեանի  
աշխատանքը բարձր գնահատող գրախօսական մը,  
ուրի միջի այլոց կը կարդանք:

«Հեղինակն իր ներկայացրած նիւթը փաստա-  
լից ու յօշափնի դարձնելու նպատակով օգտա-  
գործել է հայ պատմիչների եւ պատմաբանների,  
իին օտար աղբիւրների եւ նոր շրջանի հայ ու  
այլազգի հեղինակների բազմաթիւ վկայութիւն-  
ներ, հեագիտական մեծագոտութիւնների ար-  
դիւններ, քանաստեղծների, գրողների ստալը-  
ներ, եւ այլն: Հայ պատմիչների գործերի վկայա-  
կչութիւնները, նրանցից արուած մէքերումները  
հեղինակի շարադրամի մշանաձողքի դեր են  
կատարում, ծանրակշիռ դարձնում պատումը:

ՀՈՑՍ ՏԵՍԱՆ

ՀՈՑՍ ՏԵՍԱՆ

ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ - ՏԱՏՈՅԵԱՆ

### ԷՋԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՄՏԱԾՈՒՄԷՆ

- Պեյրուք, 1987, 243 էջ: Հրատարակութիւն՝ Հ. Բ. Ը. Միութեան «Վահրամ Ապտալեան» հիմնադրամի:

ԹՈՎՄԱՍ ՀԱՊԵՇԵԱՆ

### ՄՈՒՍԱ - ՏԱՂԻ ՊԱՊԵՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

- Պեյրուք, 1986, 175 էջ, տպարան «Էրեբունի»:

ՄԱՏԹԷՈՍ Մ. ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

### ԿԵԱՆՔ ՄԸ ԱԶԳԻՍ ԿԵԱՆՔԻՆ ՄԷԶ

- Անթիլիաս, 1987, 248 էջ: Հրատարակութիւն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի:

#### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

«Քաղին»ի արտասահմանի աշխատակիցներն ու բարեկամները, իզմբազրուքեան հետ կապ պահելու համար, յետ այսու կրնան դիմել նաեւ նետեալ հասցէին՝

PAKINE – literary Monthly

P. O. Box 19226, Athens,

GREECE

digitised by A.R.A.R.@

ԼԻԲԱՆԱՆ Հատավաճառ Տարեկան բաժնեգիրճ	40 Լ.Ո. 400 Լ.Ո.
ՍՈՒՐԻԱ Հատավաճառ	25 Ս.Ո.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ Տարեկան բաժնեգիրճ	40 Ամերիկեան տոլար

**بَاكِين**

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية  
المدير المسؤول  
السيد اوتين كارليك قرانجيان

•  
**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTERAIRE & ARTISIQUE

Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

•  
**Բ Ա Գ Ի Ն**

ԱՄՍԱԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր  
ՊՕՂՈՍ ԱՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ  
ՅԱՐՈՒԹԻՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ  
ՍԱՐԳՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու  
Ս. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ

---

B.P. 11-8404 - Beyrouth - Liban  
Tel. 298898